

«Շտիգեն» ՍՊԸ¹

Թողարկողի ֆիրմային անվանումը

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

Կազմակերպա-իրավական ձևը

ՀՀ, ք. Երևան, 0069, Դավիթ Անհաղթ 23, տարածք 6

Հեռ՝ (+374 11) 230023

Էլ. փոստ՝ info@shtigen.com

Ինտերնետային կայք՝ shtigen.com

«Դայմենշն» ՓԲԸ

Գլխավոր տեղաբաշխողի անվանումը

Փակ բաժնետիրական ընկերություն²

Կազմակերպա-իրավական ձևը

ՀՀ, ք. Երևան, 0019, Բաղրամյան 2, 27/1 ոչ բնակելի տարածք

Հեռ՝ (+374 10) 545670

Էլ. փոստ՝ info@dimension.am

Ինտերնետային կայք՝ www.dimension.am

**ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՉԻ ՀԱՎԱՍՏՈՒՄ
ՆԵՐԴՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՃՇՏՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՄ ԻՍԿՈՒԹՅՈՒՆԸ:**

Երևան 2025

¹ Այսուհետ «Շտիգեն» ՍՊԸ տերմինը կօգտագործվի նաև որպես Թողարկող:

² Այսուհետ «Դայմենշն» փակ բաժնետիրական ընկերություն տերմինը կօգտագործվի նաև որպես Տեղաբաշխող:

Արժեթղթի դասը, տեսակը	Անվանական արժեկտրոնային պարտատոմս
Արժեթղթի ձևը	Ոչ փաստաթղթային
Թողարկման արժույթը	ՀՀ դրամ
Արժեթղթերի քանակը	15,000 (տասնհինգ հազար) հատ
Արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)	100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ
Արժեթղթերի թողարկման ծավալը	1,500,000,000 (մեկ միլիարդ հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ
Արժեկտրոնային եկամտաբերություն	Ենթակա է որոշման Թողարկողի խորհրդի կողմից
Արժեկտրոնի վճարման պարբերականությունը	Ենթակա է որոշման Թողարկողի խորհրդի կողմից
Շրջանառության ժամկետը	Ենթակա է որոշման Թողարկողի խորհրդի կողմից





ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ	5
ԲԱԺԻՆ 1. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ	7
1. Տեղեկատվություն թողարկողի և թողարկողի գործունեության վերաբերյալ	7
2. Թողարկողին և թողարկողի պարտատոմսերին առնչվող ռիսկեր	16
3. Թողարկողի տնտեսական գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխություններ	23
4. Թողարկողի աուդիտ իրականացնող անձ	23
6. Թողարկվող պարտատոմսերի հիմնական տվյալները	27
7. Արժեթղթերի առաջարկի համակողմանի նկարագիրը	29
8. Թողարկողի ամփոփ ֆինանսական տվյալները	32
ԲԱԺԻՆ 2. ԹՈՂԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	36
9. Ռիսկային գործոններ	36
10. Հիմնական տեղեկատվություն	38
11. Առաջարկվող (կարգավորվող շուկայում առևտրին թույլատրվող) արժեթղթերի հետ կապված տեղեկատվություն	39
12. Առաջարկի ժամկետները և պայմանները	58
13. Առևտրի թույլտվությունը և առևտրի կազմակերպումը	68
14. Լրացուցիչ տեղեկատվություն	69
ԲԱԺԻՆ 3. ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	70
15. Անկախ աուդիտորները	70
16. Ռիսկային գործոններ	71
17. Տեղեկատվություն թողարկողի մասին	76

18. Բիզնեսի նկարագիրը	78
ԲԱԺԻՆ 4. ԹՈՂԱՐԿՈՂԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՇՈՒԿԱՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ	79
19. Թողարկողի կառուցվածքը	79
20. Հիմնական միջոցները	80
21. Չարգացման վերջին միտումները	82
22. Թողարկողի կառավարման մարմինները	84
23. Թողարկողի կառավարման մարմինների անդամները և գործունեությունը	89
24. Հսկող անձինք	92
25. Տեղեկատվություն Թողարկողի ակտիվների, պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի մասին	93
26. Կանոնադրական կապիտալը	93
27. Էական պայմանագրերը	95
28. Փորձագետի, գնահատողի, խորհրդատուի կամ հաշվապահի մասնագիտական կարծիքը և երրորդ անձանցից վերցված տեղեկատվությունը	95
29. Այլ տեղեկատվություն	96
ԲԱԺԻՆ 5. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	
ՀԱՎԵԼՎԱԾ 1: Ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևերը	96
ՀԱՎԵԼՎԱԾ 2: Թողարկման պայմաններ	98
ՀԱՎԵԼՎԱԾ 3: Հայտ ֆիզիական անձ ներդրողների համար	106
ՀԱՎԵԼՎԱԾ 4: Հայտ իրավաբանական անձ ներդրողների համար	109
ՀԱՎԵԼՎԱԾ 5: Ֆինանսական հաշվետվություններ	112

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ գործադրել ենք բոլոր ողջամիտ ջանքերը, որպեսզի պարզենք ազդագրում ներառված տեղեկությունների ճշգրիտ և լիարժեք լինելը: Ըստ այդմ, մենք հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ազդագրում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են, չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել ազդագրի բովանդակությունը:

Հայկ Շեկյան (անուն, ազգանուն)	Խորհրդի նախագահ և տնօրեն (պաշտոն)	 (ստորագրություն)	16.12.2024 (ամսաթիվ)
Տիգրան Գասպարյան (անուն, ազգանուն)	Խորհրդի անդամ (պաշտոն)	 (ստորագրություն)	16.12.2024 (ամսաթիվ)
Սոֆյա Սարգսյան (անուն, ազգանուն)	Խորհրդի անդամ (պաշտոն)	 (ստորագրություն)	16.12.2024 (ամսաթիվ)
Վախթանգ Աբրահամյան (անուն, ազգանուն)	Խորհրդի անդամ (պաշտոն)	 (ստորագրություն)	16.12.2024 (ամսաթիվ)
Հայկ Գրիգորյան (անուն, ազգանուն)	Խորհրդի անդամ (պաշտոն)	 (ստորագրություն)	16.12.2024 (ամսաթիվ)

«Շտիգեն» ՍՊԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ
արժեկտրոնային պարտատոմսեր

<u>Հայկ Շեկյան</u> (անուն, ազգանուն)	<u>Տնօրեն</u> (պաշտոն)	 (ստորագրություն)	<u>16.12.2024</u> (ամսաթիվ)
<u>Արշավիր Մկրտչյան</u> (անուն, ազգանուն)	<u>Գլխավոր ֆինանսական տնօրեն</u> (պաշտոն)	 (ստորագրություն)	<u>16.12.2024</u> (ամսաթիվ)
<u>Լեյլա Առաքելյան</u> (անուն, ազգանուն)	<u>ՄՌԿ և կորպորատիվ մշակույթի ղեկավար</u> (պաշտոն)	 (ստորագրություն)	<u>16.12.2024</u> (ամսաթիվ)
<u>Լևոն Մովսիսյան</u> (անուն, ազգանուն)	<u>Դայմենշն ՓԲԸ Գլխավոր տնօրեն</u> (պաշտոն)	 (ստորագրություն)	<u>16.12.2024</u> (ամսաթիվ)
Ստորագրությունները վավերացնում են՝			
<u>Հայկ Շեկյան</u> (անուն, ազգանուն)	<u>Տնօրեն</u> (պաշտոն)	 (ստորագրություն)	<u>16.12.2024</u> (ամսաթիվ)

ԲԱԺԻՆ 1. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Ամփոփաթերթը պետք է դիտվի որպես «Շտիգեն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (այսուհետ նաև՝ Թողարկող կամ Ընկերություն) պարտատոմսերի ազդագրի (այսուհետ՝ Ազդագիր) ներածական համառոտ նկարագրություն, և առաջարկվող պարտատոմսերում ներդրում անելու վերաբերյալ ներդրողի որոշումը պետք է հիմնված լինի ամբողջական Ազդագրի վրա:

Ամփոփաթերթի կազմման համար պատասխանատու անձն ամփոփաթերթում պարունակվող տեղեկատվության ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ լինելու համար (այդ թվում՝ թարգմանությանը վերաբերող մասով) կրում է քաղաքացիական պատասխանատվություն, եթե այն ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ է Ազդագրի մյուս մասերի հետ դիտարկելու դեպքում: Ներդրողը կարող է ձեռք բերել Ազդագիրը և Ազդագրին կից ներկայացվող փաստաթղթերը թղթային տարբերակով Թողարկողի և/կամ «Դայմենշն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ **Տեղաբաշխող**) գլխամասային գրասենյակում, իսկ էլեկտրոնային տարբերակով՝ վերջիններիս ինտերնետային կայքերում՝ shtigen.com, www.dimension.am:

2021, 2022 և 2023թթ.-ի թվականների դրությամբ ներկայացված բոլոր ֆինանսական տվյալների աղբյուրը Թողարկողի աուդիտ անցած տարեկան ֆինանսական հաշվետվություններն են:

2024թ.-ի եռամսյակային հաշվետվությունները հիմնված են ոչ աուդիտորական հաշվետվությունների հիման վրա:

Սույն ազդագրում ներկայացված տեղեկատվությունը, բացառությամբ տարեկան ֆինանսական հաշվետվությունների, անկախ աուդիտորի կողմից աուդիտի չի ենթարկվել, ինչպես նաև ներկայացված տեղեկատվության համար աղբյուր չեն հանդիսացել երրորդ անձինք:

1. Տեղեկատվություն Թողարկողի և Թողարկողի գործունեության վերաբերյալ

Թողարկողի լրիվ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ «Շտիգեն» սահմանափակ պատասխանատվությամբ
ընկերություն

ռուսերեն՝ «Штиген» общество с ограниченной
ответственностью

անգլերեն՝ “Shtigen” Limited Liability Company

Թողարկողի կրճատ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ «Շտիգեն» ՍՊԸ

ռուսերեն՝ "Штиген" ООО

անգլերեն՝ “Shtigen” LLC

Թողարկողի պետական գրանցման վայրն է՝

ՀՀ, ք.Երևան, Դ. Անհաղթ 23, տարածք 6

Թողարկողի պետական գրանցման համարն է՝ Թողարկողը գրանցված է ՀՀ
իրավաբանական անձանց պետական ռեգիստրում, գրանցման համարը՝
273.110.48849 / 2011-10-13

Թողարկողի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան,
Դ. Անհաղթ 23, տարածք 6

ՀՎՀՀ 01574905

Կապի միջոցները

Հեռ՝ (+374 11) 230023

Էլ. փոստ՝ info@shtigen.com

Ինտերնետային կայք՝ shtigen.com

Թողարկողի հիմնադրման երկիրը՝ Հայաստանի Հանրապետություն

Կոնտրակտային անձ

Ընկերության կողմից թողարկված պարտատոմսերին առնչվող հարցերի
առաջացման դեպքում կարելի է դիմել Կազմակերպության Գլխավոր ֆինանսական
Տնօրեն՝

Արշավիր Մկրտչյանին

Հեռ՝ 091 472541

Էլ. փոստ՝ arshavir.mkrtchyan@shtigen.com

Ինտերնետային կայք՝ shtigen.com

1.2. Թողարկողի համառոտ պատմությունը և ռազմավարությունը

«Շտիգեն» ՍՊԸ-ն հիմնադրվել է տնտեսագիտության թեկնածու Հայկ Շեկյանի կողմից 2011 թ.-ին՝ նպատակ ունենալով խնայող և անվտանգ արևային էներգետիկ համակարգերն ու տեխնոլոգիական լուծումները հասանելի դարձնել Հայաստանի, ինչպես նաև տարածաշրջանի բնակիչների և բիզնեսների համար:

Ընկերության նպատակը նորագույն էներգետիկայի ոլորտում մատչելի, բարձրորակ և կայուն ծառայություններ ապահովելն է, նորագույն էներգետիկայի շուկան զարգացնելը՝ քայլելով համաշխարհային շուկայի զարգացման միտումներին համընթաց, ինչպես նաև նորագույն էներգետիկայի ոլորտի զարգացման միջոցով նպաստել ՀՀ տնտեսության հավասարակշռված և կայուն զարգացմանը:

2020-2022 թ-երի ընթացքում «Շտիգեն» ՍՊԸ-ն հիմնեց դուստր ընկերություններ, որոնք, իրենց հերթին, գործունեություն են ծավալում էլեկտրական շարժունակության («Անդրոն» ՓԲԸ) և էլեկտրաէներգիայի ազատականացված շուկաներում («Էներեքս» ՓԲԸ)՝ որպես պաշտոնական ներկայացուցիչներ առաջարկելով էլեկտրական մեքենաներ, մատակարարում ավելի մատչելի էլեկտրաէներգիա, ինչպես նաև հնարավորություն ստեղծվեց Ֆոնդի միջոցով կապիտալ ներդրումներ կատարել «կանաչ» բիզնեսներում («Շտիգեն ՎիՍի» պայմանագրային ոչ հրապարակային փակ ներդրումային ֆոնդ)՝ այդպիսով ապահովելով էներգետիկ անկախության լիարժեք շղթան:

Ընկերությունը նաև մշակել և իրականացնում է կրթական ծրագրեր. Shtigen Academy-ն դասընթացներ է կազմակերպում դպրոցների, միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների և բուհերի համար:

Ընկերությունը, այսպիսով, նպատակ ունի նորագույն էներգետիկայի ոլորտում բազմակողմանի, մատչելի, բարձրորակ և կայուն ծառայություններ մատուցելով և քայլելով համաշխարհային շուկայի զարգացման միտումներին համընթաց, նպաստել նորագույն էներգետիկայի ոլորտի զարգացմանը՝ այդպիսով նպաստելով նաև ՀՀ տնտեսության հավասարակշռված և կայուն առաջընթացին:

«Շտիգեն» ՍՊԸ-ն կարևորում է էկոլոգիապես գիտակից հասարակություն ձևավորելու անհրաժեշտությունը, որը կունենա նորագույն էներգետիկայի և էներգաարդյունավետ լուծումների վերաբերյալ պատշաճ գիտելիքներ, ուստի այդ ուղղությամբ ևս ջանքեր են գործադրվում:

«Շտիգեն» ՍՊԸ-ն իր կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը վերանվանել է «Կորպորատիվ ազգային պատասխանատվություն» (ԿԱՊ), որի ներքո իրականացնում է ազգային, կրթական, մշակութային, բնապահպանական նշանակության ծրագրեր՝ նպաստելով այլընտրանքային մտածողության ձևավորմանը, ազգային և համամարդկային արժեքների պահպանմանը, կրթական միջավայրի ձևավորմանը, գիտելիքի տարածմանը և շրջակա միջավայրի պահպանությանը: Ընկերությունը ԿԱՊ-ի շրջանակում իրականացնում է «Արևածագ» նախագիծը, որի շրջանակում VIVA բարեգործական հիմնադրամի օժանդակությամբ արևային ջրատաքացուցիչներ է տեղադրում Արցախից բռնի տեղահանված և Հայաստանի սահմանամերձ բնակավայրերում բնակություն հաստատած ընտանիքների տներում:

Արդեն 4-րդ տարին է ինչ Ընկերությունը ներառված է 1000 խոշարագույն հակրատուների ցանկում, ինչպես նաև ՀՀ Հարկային մարմինների կողմից ճանաչվել է Օրինապահ Հարկատու:

«Շտիգեն» ՍՊԸ-ն առաջարկում է արևային տեխնոլոգիաներով աշխատող սարքեր (արևային վահանակ, ջրատաքացուցիչ, գեներատոր), ջեռուցման և հովացման համակարգեր, կուտակիչ մարտկոցներ, օդի ֆիլտրման ու վիրուսազերծման և այլ սարքեր: Նպատակը նորագույն էներգետիկայի ոլորտում մատչելի, բարձրորակ և

կայուն ծառայություններ ապահովելն է, նորագույն էներգետիկայի շուկան զարգացնելը՝ քայլելով համաշխարհային շուկայի զարգացման միտումներին համընթաց, ինչպես նաև նորագույն էներգետիկայի ոլորտի զարգացման միջոցով նպաստել ՀՀ տնտեսության հավասարակշռված և կայուն զարգացմանը: «Շտիգեն» ՍՊԸ-ն կարևորում է էկոլոգիապես գիտակից հասարակություն ձևավորելու անհրաժեշտությունը, որը կունենա նորագույն էներգետիկայի և էներգաարդյունավետ լուծումների վերաբերյալ պատշաճ գիտելիքներ, ուստի այդ ուղղությամբ ևս ջանքեր են գործադրվում:

1.3 Կազմակերպության կանոնադրական կապիտալը

2024թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 100,050,000 (մեկ հարյուր միլիոն հիսուն հազար) ՀՀ դրամ, որը բաղկացած է թվով՝ 100,050 (մեկ հարյուր հազար հիսուն) հատ, յուրաքանչյուրը՝ 1,000 (մեկ հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով բաժնեմասերից:

2024թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ Ընկերության կանոնադրական կապիտալը կազմող 100,050 (մեկ հարյուր հազար հիսուն) հատ, յուրաքանչյուրը՝ 1,000 (մեկ հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով բաժնեմասերը լրիվ վճարված են, տեղաբաշխված են և սեփականության իրավունքով պատկանում են Ընկերության հիմնադրին, ով հանդիսանում է Ընկերության միակ մասնակիցը:

2024թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ Կազմակերպության կանոնադրական կապիտալը պատկանում է միակ մասնակցին, որը հանդիսանում է ՀՀ քաղաքացի Հայկ Շեկյանը:

1.4. Բիզնեսի համառոտ նկարագիրը

«Շտիգեն» ՍՊԸ-ն առաջարկում է էներգետիկ անկախություն ձեռք բերելու համակարգային լուծումներ՝ ներառելով արևային տեխնոլոգիաներով աշխատող

սարքեր (արևային վահանակ, ջրատաքացուցիչ, գեներատոր), ջեռուցման և հովացման համակարգեր, կուտակիչ մարտկոցներ:

Իր բիզնես նպատակներին հասնելու համար, ընկերությունը արդեն 10+ տարի է ինչ համագործակցում է արևային համակարգեր և սարքավորումներ արտադրող այնպիսի հայտնի ընկերությունների հետ ինչպիսիք են Huawei, Kstar, Hozon/Neta, Gecko, Hyundai, PhonoSolar, Fronius, Longi և մի շարք այլ առաջատար ընկերությունների հետ:

Ընկերությունը նախագծել, կառուցել ու սպասարկում է տարածաշրջանի խոշորագույն արևային ջերմային կայանը (Grand Sport), ինչպես նաև Հայաստանի խոշորագույն արևային կայանները (Masrik-1, Solar 5, Green Energy, ArSun):

Գեղարքունիքի մարզում գտնվող Masrik-1 արևային կայանը, որը համարվում է Հայաստանի խոշորագույն արևային կայանը, կառուցել է «Շտիգեն» ՍՊԸ-ն: 62 ՄՎտ դրվածքային հզորությամբ Masrik-1 կայանը, որը զբաղեցնում է 130 հա տարածք, տարեկան արտադրելու է 128.332 ԳՎտժ էլեկտրաէներգիա, ինչը կբավարարի ավելի քան 20 000 տուն էլեկտրաէներգիայով ապահովելու համար: Այս ցուցանիշը թույլ կտա խուսափել տարեկան ավելի քան 54 000 տոննա ածխաթթու գազի արտանետումից: «Մասրիկ-1»-ի սեփականատերը վերականգնվող էներգետիկայի ոլորտի զարգացմամբ զբաղվող միջազգային առաջատար FRV (Fotowatio Renewable Ventures) ընկերությունն է: Գործընկերություն հաստատելով չինական կապալառու CMEK ընկերության հետ՝ FRV-ն կառուցման աշխատանքը պատվիրակել է «Շտիգեն» ՍՊԸ-ին:

«ԷՆԵՐԷՔՍ» ՓԲԸ-ն գործունեություն ծավալելով էլեկտրաէներգետիկական ազատականացված շուկայում, ձեռնարկություններին առաջարկում է էլեկտրաէներգիայի առավել

բարենպաստ արժեք՝ հնարավորություն տալով հաճախորդներին ընտրել իրենց լավագույն տարբերակը:

«Անդրոն» ՓԲԸ-ն բերում է ապագան՝ առաջարկելով լիարժեք էլեկտրական մեքենաներ, EV(Electric Vehicle) լիցքավորման հարմարություններ և EV հետ վաճառքի ծառայություն: 2020 թվականից ի վեր Անդրոնը տարբեր բրենդերի պաշտոնական ներկայացուցիչն է ՀՀ-ում: Բանակցություններ են ընթանում մի քանի այլ բրենդերի հետ՝ նպատակ ունենալով ստեղծել բազմաբրենդային EV սուպերմակետ և ապահովել սպասարկման ամբողջ շղթա:

Անդրոն-ը Չինական ավտոարդարող Neta-ի պաշտոնական ներկայացուցիչն է Հայաստանում, ինչպես նաև չինական Gecko ապրանքանիշի ներկայացուցիչը Հայաստանում և Վրաստանում: 2020թ.-ին Անդրոնը բացեց առաջին EV հետվաճառքի սպասարկման կենտրոնը Հայաստանում:

Շտիգեն ՎիՍի-ն պայմանագրային ոչ հրապարակային փակ ներդրումային ֆոնդ է, որը հիմնադրվել է Shtigen ՍՊԸ-ի և 3 ֆիզիկական անձ գործընկերների կողմից 2022 թվականի դեկտեմբերին: Այն գրանցված է Հայաստանի Կենտրոնական բանկի կողմից: Գրանցման համարը՝ 0070: Ֆոնդը նպատակ ունի կոնսոլիդացնել մասնավոր և ինստիտուցիոնալ ներդրողների ֆինանսական միջոցները և դրանց գերակշիռ մասը առավել ապահով և արդյունավետ ներդնել Հայաստանի «կանաչ» նախագծերում:

Թողարկողի տրամադրության տակ եղած ակտիվների մասին տեղեկատվություն

1.5 Ակտիվների որակը

1.5.1 Ակտիվների համարժեքությունը

2021թ., 2022թ. և 2023թ-ի տարեկան ֆինանսական հաշվետվությունների արդյունքներով կազմակերպության ակտիվների շահութաբերությունը (Զուտ

շահույթի հարաբերությունը ընդհանուր ակտիվների միջին մեծություն) կազմել է 2.8%, 3.6%, 1.4%, իսկ կապիտալի շահութաբերությունը (զուտ շահույթի հարաբերությունն կապիտալի միջին մեծությանը)՝ 172.1%, 79.7%, 22.5%: Թողարկողը համալրել է Ընկերության կանոնադրական կապիտալ 100 մլն. ՀՀ դրամով 2024թ.-ին, որը դրական ազդեցություն է ունեցել Ընկերության Լևերիջի գործակցի վրա:

1.5.2 Ընդհանուր ակտիվներ

30.06.2024թ.-ի դրությամբ Թողարկողի ընդհանուր ակտիվների մեծությունը կազմել է 4,445,824 ՀՀ հազար դրամ: 30.06.2024թ.-ի դրությամբ Թողարկողի հիմնական միջոցները, պաշարները և առևտրային, դեբիտորական պարտքերը կազմում են ընդհանուր ակտիվների 7.06%, 47.58% և 32.52%:

1.5.3 Ակտիվների իրացվելիությունը

Թողարկողը ձգտում է ակտիվորեն պահպանել ֆինանսավորման աղբյուրների տարբերակված և կայուն կառուցվածքը, որակյալ և արագ իրացվելի ակտիվների, ինչպես նաև բարձր իրացվելի ակտիվների տարբերակված պորտֆելը՝ իրացվելիության անկանխատեսելի պահանջներն արագ և հեշտությամբ բավարարելու համար: Նաև, հարկ է նշել, որ թողարկողի հիմնական միջոցների 60%-ը գրավադրված են ՀՀ բանկերում:


1.6 Կազմակերպության վարչակազմակերպական կառուցվածքը

Շտիգեն ՍՊԸ-ն 2024 թվականի հունիսի 30-ի դրությամբ ունի 252 աշխատող, որից 137 հաստիքային և 115 աշխատակից քաղիրավական պայմանագրերի շրջանակում:

Շտիգեն ՍՊԸ-ն հանդիսանում է 90% բաժնետեր Անդրոն ՓԲԸ-ում և Էներեքս ՓԲԸ-ում:

Ընկերությունը ունի հետևյալ վարչակազմակերպական կառուցվածքը

Թողարկողի կազմակերպական կառուցվածքը



1.7 Թողարկողի մասնաճյուղերը

Թողարկողը Ազդագրի գրանցման պահին չունի մասնաճյուղեր:

2. Թողարկողին և Թողարկողի պարտատոմսերին առնչվող ռիսկեր

Թողարկողին առնչվող ռիսկեր

Գոյություն ունեն Թողարկողին և վերջինիս գործունեության ոլորտին հասուկ մի շարք գործոններ, որոնք կարող են ուղղակի կամ անուղղակի ձևով ազդեցություն ունենալ թողարկված արժեթղթերի ռիսկայնության մակարդակի վրա:

Ներդրողները պետք է որոշում կայացնեն՝ լիովին գիտակցելով ներդրումների բնույթն ու դրանցից բխող հիմնական ռիսկերը՝ ելնելով իրենց փորձից, նպատակներից, ֆինանսական ռեսուրսներից, ռիսկերի նկատմամբ հակվածության աստիճանից և այլ գործոններից:

Ներդրողները պետք է հասկանան նաև, որ Ազդագիրը չի կարող ներկայացնել Թողարկողի գործունեության հետ կապված բոլոր ռիսկերը: Թողարկողին առնչվող ռիսկերը կապված են նրա ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների հետ և արտահայտվում են ստանձնած պարտավորությունները սահմանված ժամկետներում ամբողջությամբ կամ մասամբ չկատարելու հանգամանքով: Թողարկողի բնականոն գործունեությանը սպառնացող ռիսկեր կարող են առաջացնել նաև արտաքին գործոնները: Թողարկողի գործունեությանն առնչվող ռիսկերը կարող են հանգեցնել պարտատոմսերի գնի նվազմանը:

Մրցակցային ռիսկ

ՀՀ շուկայում «Շտիգեն» ՍՊԸ-ն առաջատար ընկերություններից մեկն է արևային էներգետիկայի լուծումների և տեխնոլոգիաների ներդրման ոլորտում՝ զբաղեցնելով ՀՀ շուկայի ավելի քան 20%-ը:

Արևային էներգետիկայի ոլորտում գործունեություն են ծավալում 3-4 խոշոր ընկերություններ, իսկ մնացած մրցակիցների մեծ մասը փոքր և միջին ընկերություններն են: Որոշ փոքր և միջին ընկերություններ մրցակցությանը դիմանալու նպատակով հաճախ ներկրում են ավելի էժան և ցածրորակ վահանակներ: Սա հաճախ հանգեցնում է հաճախորդների վստահության նվազմանը արևային վահանակների արդյունավետության նկատմամբ: «Շտիգեն» ՍՊԸ-ն հավատարիմ է իր առաջարկած ապրանքների և ծառայություններին որակին, նույնիսկ եթե դա արվում է շահույթի հաշվին՝ ըստ այդմ պահպանելով շուկայում իր բարձր համբավը, առաջատար դիրքն ու կայունությունը:

Հազեցվածության ռիսկ

Համաձայն ՀՀ կառավարության որոշման (<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=149279>) ՀՀ-ում մինչև 2030թ. արևային էներգիայի արտադրության մասնաբաժինը ընդհանուրի մեջ պետք է հասցնել մինչև 15%: Հարկ է նշել որ վերջին տարիների առավել մեծ աճի տեմպի, ինչպես նաև ֆինանսական համակարգի և ՀՀ կառավարության կողմից տարբեր ծրագրերի իրականացման հետևանքով, շուկայի աճի տեմպերը գերազանցում են պլանավորված տեմպերին: Համաձայն ՀԾԿԿ տրամադրված հաշվետվությունների, եթե 2023 թ-ի առաջին կիսամյակում արևային էներգիայի մասնաբաժինը ընդհանուրի մեջ կազմում էր 4.2%, ապա 2024 թ նույն ժամանակահատվածի համար այն հասնում է արդեն մոտ 8%: (https://psrc.am/contents/fields/electric_energy/el_energy_reports): Վերը նշված թվերը չեն ներառում ինքնավար արտադրողների այն ծավալները, որոնք որ սպառվել են սեփական կարիքների համար: Տարբեր գնահատականներով այն կազմում է մոտ 4-5%:

Արևային կայանների աճի նման տեմպերը կարող են հանգեցնել ընդհանուր ցանցի ծանրաբեռնվածության, ինչը իր հերթին կարող է սահմանափակել նոր կայանների կառուցումը: Այսպիսի պայմաններում ընկերության զարգացումն ու

աճը կարող են դանդաղել: Ընկերությունը նման ռիսկը կանխատեսել է և արդեն իսկ հիմնադրել է նմանատիպ ընկերություն Վրաստանի հանրապետությունում, որտեղ արևային էներգետիկան գրեթե զարգացած չէ և կան աճի մեծ հեռանկարներ:

Օրենսդրական ռիսկ

Վերականգնվող, մասնավորապես արևային էներգիայի ոլորտում օրենսդրական փոփոխությունները (օրինակ՝ հարկեր, սուբսիդիաների կրճատում, նոր արտոնագրեր կամ սահմանափակումներ) կարող են ազդել ընկերության վրա: Օրենսդրական կարգավորումների փոփոխությունները կարող են բարձրացնել ծախսերը և/կամ նվազեցնել շահութաբերությունը: ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը սահմանում է սակագին, որն իր ազդեցությունն ունի շուկայի ընդհանուր պահանջարկի և առաջարկի վրա: Սա նաև կարգավորման ռիսկ է, որի հետ բախվում են արևային վահանակներ ներկրող ընկերությունները սակագների փոփոխման արդյունքում:

Արտարժույթային ռիսկ

Արտարժույթների փոխարժեքների փոփոխությունները կարող են ազդել Ընկերության ծախսերի և շահույթի մեծության վրա, մասնավորապես, համապատասխան նյութերը և տեխնոլոգիաները ներմուծվում են արտերկրից, վճարելով օրինակ՝ ԱՄՆ դոլարով չինական իենով: Ընկերությունը ներկրում է արևային վահանակներ և էլեկտրական ավտոմեքենաներ Չինաստանից և ունենում է արտարժույթային ռիսկ իր մատակարարներին վճարումներ կատարելիս: ՀՀ դրամի կայունությունը կարևոր նշանակություն ունի ընկերության արտարժույթային ռիսկը կառավարելիս: Ընկերությունն ունենում է բաց արտարժույթային դիրքեր, որոնք արտացոլվում են ընկերության հաշվեկշռում: Ընկերությունը նման ռիսկերից խուսափելու համար աշխատում է շատ մեծ պահեստային մաս չձևավորել, այլ աշխատել առավել դինամիկ՝ խուսափելու արտարժույթի հնարավոր տատանման հետևանքով առաջացած վնասներից: Աշխատանքներ են տարվում արտարժույթային ռիսկի հեջավորման գործիքակազմի ներդրման ուղղությամբ ևս:

Լոգիստիկ ռիսկեր

Արտասահմանից ներմուծվող ապրանքների (օրինակ՝ արևային վահանակների և տեխնոլոգիաների) մատակարարման հապաղումները կամ մաքսային վարչարարական հնարավոր խնդիրները կարող են բարդացնել կամ դանդաղեցնել նախագծերի իրականացումը: Ընկերությունը աշխատում է արդյունավետ կառավարել ապրանքային պաշարների իր մնացորդներն այնպես, որպեսզի նման հնարավոր ֆորս մաժորային իրավիճակներում կարողանա բավարարել անհրաժեշտ առաջնային պահանջարկը հաճախորդների համար ողջամիտ ժամանակահատվածում՝ միևնույն ժամանակ չունենալով ապրանքանյութական չափից ավելի պաշարներ:

Վարկային/դեֆոլտի ռիսկ

Ընկերությունը 2024 թ-ի երկրորդ եռամսյակի դրությամբ ունի մոտ 579 մլն երկարաժամկետ և 736 մլն կարճաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ:

Կարճաժամկետ վարկի հիմնական նպատակը դա Մասրիկ 1 արևային կայանի աշխատանքների և ծառայությունների հետ կապված ֆինանսավորումն է, որի մարումը ակնալվում է իրականացնել աշխատաքների և ծառայությունների ավարտից և Մասրիկի կողմից վճարումների կատարումից հետո:

Կարճաժամկետ փոխառությունների նպատակն է խթանել ընկերության շրջանառության ավելացումը:

Հարկ է նշել որ 2024 թ-ի երրորդ եռամսյակում արդեն ընկերությունը համարել է իր կանոնադրական կապիտալը ևս 100 մլն ՀՀ դրամով՝ դրանով իսկ ամրապնդելով իր ֆինանսական կայության աստիճանը, ինչպես նաև հիմք ստեղծել հետագայում առավել խոշոր և գրավիչ պայմաններով ներգրավվել փոխառումիջոցներ, այդ թվում նաև թողարկել պատատոմսեր:

Ընկերությունն ակտիվորեն օգտվում է ֆինանսական շուկայում առկա գործիքներից և պատշաճ կատարում թե կարճաժամկետ և թե երկարաժամկետ պարտավորություններն գործընկերների և ֆինանսական հաստատությունների նկատմամբ: Եվ չնայած ընկերություն երկրորդ եռամսյակի վերջի դրությամբ բարձր կախվածության գործակցի (50.58), որը հիմնականում պայմանավորված է Մասրիկ 1 արևային կայանի շինարարության հետ, ընկերությունը հարկ եղած պարագայում կարող է նվազեցնել այդ գործակիցը՝ նվազեցնելով շրջանառության ծավալները:

Որպեսզի առավել մատչելի և կանխատեսելի լինեն ընկերության փոխառումիջոցները, կայացվել է որոշում լրացնել փոխառումիջոցները նաև

պարտատոմսերով, որի արդյունքում թե կնվազի փոխառու միջոցների ինքնարժեքը և թե կերկարի այդ միջոցների ժամկետայնությունը:

Իրացվելիության ռիսկ

Ընկերության ընդհանուր իրացվելիության գործակիցը (ընթացիկ ակտիվներ/կարճաժամկետ պարտավորություններ) կազմում է 1.05: Ընդ որում հարկ է նշել, որ ընկերության միջին բիզնես ցիկլը տևում է մոտ 4-5 ամիս, իսկ կարճաժամկետ պարտավորությունները մոտ 6 ամիս և ավելին: Ընկերության ակտիվեր ֆինանսավորվում են կապիտալից բացի վարկերի, փոխառություններ, առևտրային և կրեդիտորական պարտքերի միջոցով, որը կարող է առաջացնել իրացվելիության ռիսկեր: Այուամենայնիվ, Ընկերությունը կարողանում է կառավարել իր դրամական հոսքերն այնպես, որ համապատասխանեցնի իր պատավորությունների և ակտիվներ ժամկետայնությունները:

Գործառնական ռիսկ

Գործառնական ռիսկը կարող է ի հայտ գալ ներքին գործընթացների, համակարգերի խափանմամբ, մարդկային գործոնի կամ արտաքին գործոնների բացասական ազդեցության արդյունքում, ինչը կարող է բերել Թողարկողի կապիտալի և/կամ շահույթի կորստի: Գործառնական ռիսկի հետևանքով կարող է վտանգվել նաև Թողարկողի համբավը:

Ինչպես արդեն նշվեց, բարձ աճի տեմպերի արդյունքում ընկերությունը թևակոխում է զարգացման մեկ այլ փուլ, որտեղ առաջացել է անհրաժեշտություն ներդնելու տարբեր համակարկգեր, այդ թվում հաճախորդների հետ հարաբերությունների կառավարման արդի համակարգ՝ անգլ. CRM: Նման համակարգերի ներդրումը մի կողմից պայմանավորված է դրանց անհրաժեշտությամբ՝ հաճախորդների առավել որակյալ և ժամանակին սպասարկման համար, մյուս կողմից՝ հղի է փոփոխությունների հետևանքով առաջացած գործառնական սխալներով: Ընկերությունը մասնագետներ է ներգրավում նման փոփոխություններն առավել սահուն իրականացնելու և գործընթացը բարեհաջող ավարտին հասցնելու համար:

Արտաքին ռիսկեր

Ներկա պահին ՀՀ կառավարության կողմից ներդրվել են տարբեր ծրագրեր՝ աջակցելու վերականգնվող էներգետիկայի ոլորտի շահառուներին: Նման ծրագրերի անբարենպաստ փոփոխությունները կամ դադարեցումները կարող են բացասաբար անդրադառնալ ՀՀ-ում արևային էներգետիկայի ոլորտի ընկերությունների գործունեության վրա:

Ինչպես արդեն նշվեց, Շտիգեն ՍՊԸ-ն արդեն իսկ իրականացրել է քայլեր և այժմ ակտիվորեն աշխատում է տարածաշրջանում իր գործունեությունը ընդլայնելու ուղղությամբ՝ նվազեցնելով հնարավոր արտաքին ռիսկերի ազդեցություններն ընկերություն ցուցանիշների վրա:

Թողարկվող պարտատոմսերին առնչվող ռիսկեր

Ցանկացած տնտեսվարող սուբյեկտի, այդ թվում՝ վերականգնվող էներգետիկայի ճյուղի կազմակերպությունների պարտատոմսերում ներդրումները կապված են որոշակի ռիսկերի հետ: Ներդրողը պետք է ուշադիր դիտարկի ստորև շարադրված ռիսկերի ամփոփ նկարագրությունը և Ազդագրի մեջ տեղ գտած բոլոր այլ տեղեկությունները մինչև առաջարկվող պարտատոմսերի գնելու որոշումն ընդունելը:

Թողարկողի ֆինանսատնտեսական գործունեության վրա բացասական ազդեցություն ունեցող ռիսկերի հետևանքով պարտատոմսերը կարող են կորցնել իրենց գրավչությունը կապված գնի անկման և շուկայում իրացվելիության հետ: Թողարկված պարտատոմսերը շրջանառության ժամկետի ընթացքում կարող են բացասական փոփոխությունների ենթարկվել տնտեսական վիճակի անբարենպաստ փոփոխությունների հետևանքով, ուստի Թողարկողը չի կարող երաշխավորել, որ ներդրողը ցանկացած պահի կարող է իրացնել պարտատոմսերը երկրորդային շուկայում իր համար շահավետ գնով:

Հնարավոր ռիսկերի շարքում կարելի է նշել նաև.

Պարտատոմսերի իրացվելիության ռիսկը, որը կարող է առաջանալ շուկայում ձևավորված իրավիճակի կտրուկ փոփոխության կամ Թողարկողի ֆինանսական վիճակի վատթարացման հետևանքով: Արդյունքում պարտատոմսերը կարող են կորցնել իրենց գրավչությունը և ներդրողը ստիպված լինի իրացնել պարտատոմսերն ավելի ցածր գնով, քան ձեռք բերման գինը:

Արտարժույթային ռիսկը: Ներդրողը կարող է կրել նաև փոխարժեքների տատանման հետ կապված կորուստներ ՀՀ դրամի և արտարժույթի փոխանակման ժամանակ: Սույն ռիսկը, հատկապես առնչվելի է այն ներդրողների համար, ովքեր պարտատոմսերի ձեռք բերման և մարման դիմաց ստացվող գումարները փոխանակելու են մեկ արժույթից մեկ այլ արժույթի:

Տոկոսադրույքի ռիսկը: Շուկայում գործող տոկոսադրույքների փոփոխությունները կարող են բացասական ազդեցություն ունենալ պարտատոմսերի գնի և եկամտաբերության վրա, քանի որ պարտատոմսի գինն ու եկամտաբերությունը գտնվում են միմյանցից հակադարձ կախվածության մեջ:

Վարկային/դեֆոլտի ռիսկ: Ներդրողները ցանկացած թողարկողի կորպորատիվ պարտատոմսեր ձեռք բերելիս իրենց վրա են վերցնում թողարկողի վարկային ռիսկը:

Օրենսդրական դաշտի փոփոխության ռիսկը, որի պատճառ կարող են հանդիսանալ օրենսդրության փոփոխությունները, որոնք կազդեն ինչպես Ընկերության գործունեության, այնպես էլ շուկայում տիրող իրավիճակի վրա: Միաժամանակ հարկ է նշել, որ փոփոխությունները կարող են ազդել նաև պարտատոմսերի գրավչության և արդյունքում նաև իրացվելիության վրա:

3. Թողարկողի տնտեսական գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխություններ

Ընկերության գործունեությունը մշտապես գտնվում է գործադիր մարմնի ուշադրության ներքո, ով օպերատիվ արձագանքում է շուկայի փոփոխություններին:

Ընկերությունը ներգրաված չէ դատական, արբիտրաժային և (կամ) վարչական իրավական վարույթների մեջ, որոնք կարող են էական ազդել Ընկերության ֆինանսական վիճակի կամ շահութաբերության վրա և/կամ կարող են ունենալ կամ վերջերս ունեցել են էական ազդեցություն:

Ազդագրի գրանցման ներկայացման օրվա դրությամբ Թողարկողի գործունեության համար անհրաժեշտ բոլոր արտոնագրերը և լիցենզիաներն ուժի մեջ են:

4. Թողարկողի աուդիտ իրականացնող անձ

Կազմակերպության 2023, 2022 և 2021 թվականների անկախ աուդիտորական ստուգումն իրականացրել է «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ աուդիտորական ընկերությունը:

«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ -ի հասցեն է՝ Հայաստան, 0010, Երևան

Հանրապետության փող., 22 շենք, 5-րդ հարկ, հեռ.՝ +(374 10) 582 478, 544 301, 544 307, էլ. հասցե՝ info@bakertillyarmenia.com, ինտերնետային կայքի հասցեն է՝ www.bakertilly.am:

Աուդիտորական կազմակերպության գլխավոր տնօրենն է Վահե Գևորգյանը:

Աուդիտորական Ընկերությանն ընտրությունն իրականացվում է մրցույթի հայտարարման միջոցով:

Աուդիտի նպատակն է ձեռք բերել բավարար երաշխիքներ ֆինանսական հաշվետվությունների էական անճշտություններից գերծ լինելու և միջազգային ստանդարտներին համապատասխանելու մասին: Աուդիտորական Ընկերության եզրակացությունները ներկայացված են կից Հավելվածներում:

5. Թողարկողի կառավարման մարմինների անդամների վերաբերյալ համառոտ տեղեկատվություն

Ըստ կազմակերպության կանոնադրության Ընկերության կառավարման մարմիններն են Մասնակիցների ընդհանուր ժողովը, տնօրենների խորհուրդը և Ընկերության միանձնյա գործադիր մարմնի ղեկավարը: Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովն է, որն ունի Ընկերության կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք:

«Շտիգեն» ՍՊԸ-ի իրական շահառուն է Հայկ Շեկյանը:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպության կողմից հետ գնված փայմասնակցություններ չեն եղել:

Շտիգեն ՍՊԸ-ն 2024 թվականի հունիսի 30-ի դրությամբ ունի 252 աշխատող, որից 137 հաստիքային և 115 աշխատակից քաղիրավական պայմանագրերի շրջանակում :

Թողարկողի կանոնադրությունով սահմանված են Ընկերության կառավարման հետևյալ մարմինները՝

1. Մասնակիցների ընդհանուր ժողով,
2. Տնօրենների խորհուրդ,
3. Գործադիր մարմնի ղեկավարը:

Ընկերության Մասնակիցների ընդհանուր ժողովը Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն է:

Ընկերության Խորհուրդը բաղկացած է 5 անդամից և ընտրվում է մասնակիցների ընդհանուր ժողովի որոշմամբ՝ Ընկերության կանոնադրությանը համապատասխան:

Տնօրինությունը և Գործադիր մարմնի ղեկավարը կառավարում են Ընկերության առօրյա ընթացիկ գործունեությունը:

Կազմակերպության բաժնետերն է ՀՀ քաղաքացի Հայկ Շեկյանը:

Կազմակերպության կառավարման մարմինը ընկերության Խորհուրդն է:

Խորհրդի անդամներ՝

<i>N</i>	<i>Անուն, Ազգանուն</i>	<i>Զբաղեցրած պաշտոնը</i>	<i>Բնակության վայր</i>	<i>Իրավասություններն ու պարտականությունները</i>	<i>Կազմակերպության գործունեությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը</i>	<i>Փորձառությունը</i>
1	Հայկ Շեկյան	Խորհրդի նախագահ	ՀՀ, ք. Երևան	համաձայն կազմակերպության կանոնադրության	Armenia-India Business Council (AIBC)-ի համահիմնադիր	24 տարի
2	Տիգրան Գասպարյան	Խորհրդի անդամ	ՀՀ, ք. Երևան	համաձայն կազմակերպության կանոնադրության	Պրոֆիքս Քոնսալթինգ ՍՊԸ – 2016-2024 թթ (գործադիր տնօրեն)	12 տարի

3	Սոֆյա Սարգսյան	Խորհրդի անդամ	ՀՀ, ք. Երևան	համաձայն կազմակերպության կանոնադրության	Աշխատում է Synopsys Armenia ընկերությունում	20 տարի
4	Վախթանգ Աբրահամյան	Խորհրդի անդամ	ՀՀ, ք. Երևան	համաձայն կազմակերպության կանոնադրության	Fastex-ի գլխավոր տնօրեն	16 տարի
5	Հայկ Գրիգորյան	Խորհրդի անդամ	ՀՀ, ք. Երևան	համաձայն կազմակերպության կանոնադրության	SharpeMachine, LLC-ի հիմնադիր և տնօրեն	10 տարի

Գործադիր անդամներ՝

Անուն, Ազգանուն	Զբաղեցրած պաշտոնը	Բնակության վայր	Իրավասություններն ու պարտականությունները	Կազմակերպության գործունեությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Փորձառությունը
Հայկ Շեկյան	Գլխավոր տնօրեն և հիմնադիր	ՀՀ, ք. Երևան	համաձայն կազմակերպության կանոնադրության	Armenia-India Business Council (AIBC)-ի համահիմնադիր	24 տարի
Արշավիր Մկրտչյան	Գլխավոր ֆինանսական տնօրեն	ՀՀ, ք. Երևան	համաձայն կազմակերպության կանոնադրության	Կազմակերպության գործունեությունից դուրս այլ գործունեություն չի ծավալում	34 տարի

Լեյլա Առաքելյան	ՄՌԿ և կորպորատիվ մշակույթի ղեկավար	ՀՀ, ք. Երևան	համաձայն կազմակերպության կանոնադրության	Կազմակերպության գործունեությունից դուրս այլ գործունեություն չի ծավալում	17 տարի
-----------------	------------------------------------	--------------	---	---	---------

6. Թողարկվող պարտատոմսերի հիմնական տվյալները

Տեսակը	Անվանական, արժեկտրոնային
Ձևը	ոչ փաստաթղթային
Փոխարկելիությունը	ոչ փոխարկելի
Մեկ պարտատոմսի անվանական արժեքը, արժույթը	100,000 (հարյուր հազար) ՀՀ դրամ
Թողարկման ընդհանուր ծավալը	1,500,000,000 (մեկ միլիարդ հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ
Տեղաբաշխվող պարտատոմսերի ընդհանուր քանակը	15,000 (տասնհինգ հազար) հատ
Տեղաբաշխման ձևը	չերաշխավորված
Տեղաբաշխման օրը	Պարտատոմսերի թողարկման օրը և տեղաբաշխման օրը (օրերը) կսահմանվեն թողարկողի խորհրդի կողմից
Արժեկտրոնի վճարման պարբերականությունը	Պարտատոմսերի արժեկտրոնի վճարման պարբերականությունը կորոշվի թողարկողի խորհրդի կողմից

Տարեկան արժեկտրոնի եկամտաբերությունը	Պարտատոմսերի տարեկան արժեկտրոնի եկամտաբերությունը կորոշվի թողարկողի խորհրդի կողմից
Շրջանառության ժամկետը	Պարտատոմսերի շրջանառության ժամկետը կորոշվի թողարկողի խորհրդի կողմից
Շրջանառության ձևը	Բացառապես կարգավորվող շուկայում ազատ շրջանառության իրավունքով
Պարտատոմսերի ապահովվածությունը	ապահովված չեն

Թողարկողի կողմից անվանական պարտատոմսերի թողարկման և դրան հետևող տեղաբաշխման նպատակը շրջանառության ծավալի մեծացումն է, քանի որ շուկայում նկատվում է պահանջարկի աճ:

Պարտատոմսերի թողարկման շրջանակներում գոյացած դրամական միջոցները բաշխվելու են հետևյալ ուղղություններով՝

չափման միավոր՝ մլն դրամ

Բիզնես ուղղություն	Ներդրումների ծավալ
Արևային կայանների բաղադրամասեր	650
Էլեկտրական մեքենաներ	400
Բանկային երաշխիքներ	450

Շտիգեն ՍՊԸ գործունեության շրջանակներում վճարներ են նախատեսվում 5 արտաքին մատակարարների: Ընդամենը գումարը կազմելու է շուրջ 650 մլն դրամ առաջին փուլում: Այդ վճարները հնարավորություն են տալու ապահովելու Շտիգենի շրջանառության աճը տարեկան 20-30% չափով:

Էլեկտրական մեքենաների գործունեության շրջանակներում մատակարարներին վճարներ է նախատեսվում 400 մլն դրամ առաջին փուլում: Այս մոտեցումը կապահովի մեքենաների բավարար քանակի անընդհատ մատակարարում և բիզնեսի կայուն աճ ըստ պլանավորածի:

Նաև, շրջանառության աճը ապահովելու համար անհրաժեշտ է ավելացնել բանկային երաշխիքների ծավալը: Պլանավորվում է ներգրավված միջոցներից 450 մլն դրամ և ուղղել բանկային երաշխիքների ավելացմանը, ինչը հնարավորություն կտա մոտ 500-700 մլն դրամով ավելացնել կազմակերպության շրջանառությունը:

Շրջանառության աճը ապահովելու է կազմակերպության բնականոն զարգացումը, իսկ արդյունքում ստացված շահույթների զգալի մասը ուղղվելու է կապիտալի ավելացմանը, ինչը իր հերթին ավելացնելու է կազմակերպության կայունությունը:

7. Արժեթղթերի առաջարկի համակողմանի նկարագիրը

7.1 Պարտատոմսերի տեղաբաշխման գործընթացի համառոտ նկարագիրը

Պարտատոմսերի ձեռքբերման համար ներդրողները սահմանված կարգով պետք է լրացնեն և պատշաճ կերպով Թողարկողին ներկայացնեն պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականը, որով կհավաստեն պարտատոմսերի թողարկման պայմաններն ընդունելու իրենց պատրաստակամությունը, և որով այդ պայմանները կդառնան ներդրողների համար պարտադիր:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականները կիրապարակվեն Տեղաբաշխողի և/կամ Թողարկողի պաշտոնական ինտերնետային կայքերում:

Հայտ-հանձնարարականում պարտադիր լրացման դաշտ է համարվում

ներդրողի արժեթղթերի հաշվի համարը և արժեթղթերի հաշիվը հաշվառող անձի անունը: Այդ նպատակով ներդրողները պարտավոր են լիցենզավորված որևէ հաշվի օպերատորի մոտ բացել արժեթղթերի հաշվառման անձնական արժեթղթերի հաշիվ և կրել վերջինիս հետ կապված ծախսերը:

Հետևյալ հղումով ներդրողը կարող է տեսնել այն պահառուների անվանումները և գտնվելու վայրերը, բացառությամբ Կենտրոնական Բանկի, որտեղ կարելի է արժեթղթերի հաշիվ բացել՝ https://cda.am/am/depository_account_operators:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականի լրացումից և պատշաճ կերպով Թողարկողին առաքումից հետո պարտատոմսերի ձեռքբերման համար համապատասխան դրամական միջոցները ներդրողների կողմից պետք է մուտքագրվեն թողարկման նպատակով բացված հաշվեհամարին մինչև հայտ-հանձնարարականի ձեռքբերման օրվա ավարտը: Հայտ-հանձնարարականը կհամարվի վավեր պատշաճ առաքման և համապատասխան վճարի կատարման հիմքով:

Սահմանված ժամկետում համապատասխան վճարում չիրականացրած ներդրողների հայտ-հանձնարարականները համարվում են անվավեր:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականի ձեռքբերման օրվա ավարտից հետո, ինչպես նաև պարտատոմսերի տեղաբաշխման նախատեսված վերջնաժամկետից հետո Թողարկման հաշվեհամարին ստացված գումարները ենթակա են ետ վերադարձման, իսկ դրանց համապատասխան հայտ-հանձնարարականները չեն կարող բավարարվել:

Պարտատոմսերում ներդրում կատարող անձը կարող է եկամուտ ստանալ հետևյալ դեպքերում՝

- Պարտատոմսերի դիմաց ստացվող տոկոսից,
- Մինչև մարումը վաճառքի և գնման գների դրական տարբերությունից

(կապիտալի հավելված):

7.2 Պարտատոմսերի տեղաբաշխման գինը

Պարտատոմսերի լրիվ գինը յուրաքանչյուր 100 միավոր անվանական արժեքի դիմաց, տեղաբաշխման առաջին օրվանից սկսած հաշվարկվում է հետևյալ կերպ՝

$$DP = \frac{C}{f} \sum_{t=1}^N \frac{1}{\left(1 + \frac{y}{100 * f}\right)^{t-1+\tau}} + \frac{100}{\left(1 + \frac{y}{100 * f}\right)^{N-1+\tau}}$$

որտեղ՝

$$\tau = \frac{DSN}{DCC}$$

DP - Պարտատոմսի գինն է,

DSN - գործարքի կատարման օրից (settlement/trade date) մինչև հաջորդ արժեկտրոնի վճարումը մնացած օրերի քանակ համապատասխան պայմանականության դեպքում,

DCC - գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքին հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակ համապատասխան պայմանականության դեպքում,

f- արժեկտրոնի վճարման հաճախականությունն է,

N - հաշվարկման պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվը,

C - տարեկան արժեկտրոնը մեկ պարտատոմսի անվանական արժեքի դիմաց,

Y - մինչև մարում եկամտաբերություն:

7.3 Այլ էական տեղեկություններ

Արժեկտրոնի գումարը վճարվում է պարտատոմսերի սեփականատերերին, արժեկտրոնի հաշվարկման օրը: Եթե արժեկտրոնի հաշվարկման օրը ոչ աշխատանքային է, ապա վճարման օր է համարվում դրան հաջորդող առաջին աշխատանքային օրը: Արժեկտրոնների վճարումը կատարվում է ՀՀ դրամով:

8. Թողարկողի ամփոփ ֆինանսական տվյալները

(հազ. դրամ)

ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

այլ կազմակերպությունների համար

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ցուցանիշի անվանումը	2024 II եռամսյակ Աուդիտ չանցած	2024 I եռամսյակ Աուդիտ չանցած	2023 Աուդիտ անցած	2022 Աուդիտ անցած	2021 Աուդիտ անցած
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ	2,626,021	1,547,653	6,144,556	4,621,511	3,350,567
Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք	(2,119,960)	(1,286,417)	(4,872,029)	(3,693,236)	-2,670,056
Համախառն շահույթ (վնաս)	506,061	261,236	1,272,527	928,275	680,511

Իրացման ծախսեր	(201,724)	(176,801)	(515,206)	(303,236)	(237,318)
Վարչական ծախսեր	(267,928)	(232,459)	(725,508)	(511,796)	(304,127)
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս)	36,409	(148,024)	31,813	113,243	139,066
Գործառնական այլ եկամուտներ	6,787	11,750	134,108	115,649	1,417
Գործառնական այլ ծախսեր	(11,602)	(4,227)	(40,428)	(99,571)	-27,645
Գործառնական շահույթ (վնաս)	31,594	(140,501)	125,493	129,321	112,838
Ֆինանսական ծախս/եկամուտ	(21,393)	8,265	(47,870)	(34,004)	-22,683
Բաժնեմասնակցության մերթոդի հաշվառվող ներդրումների գծով շահույթ (վնաս)				-	-
Ընդհատվող գործառնությանը վերագրելի ակտիվների վաճառքներից և պարտավորությունների մարումներից շահույթ (վնաս)					
Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս)					
Սովորական գործունեությունից շահույթ (վնաս)	(1,314)	24,556	(34,470)	24,714	450
Արտասովոր դեպքերից շահույթ (վնաս)					
Ջուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը	8,887	(107,678)	43,153	120,031	90,605
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)			(4,480)	(31,723)	(19,947)
Ջուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	8,887	(107,678)	38,673	88,308	70,658

ԱՄՓՈՓ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ

Ցուցանիշի անվանումը	2024 II եռամսյակ Աուդիտ չանցած	2024 I Եռամսյակ Աուդիտ չանցած	2023 Աուդիտ անցած	2022 Աուդիտ անցած	2021 Աուդիտ անցած
---------------------	---	---	-------------------------	-------------------------	-------------------------

Հիմնական միջոցներ	313,808	318,885	390,344	137,879	85,251
Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ					
Ոչ նյութական ակտիվներ	3,324	3,938	4,393	8,311	4,781
Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ					
Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ	104,024	66,463	90,819	20,993	7,733
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	196,484	30,307	68,295	12,798	7,698
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	617,640	419,593	553,851	179,981	105,463
Պաշարներ	2,115,398	1,759,602	1,416,629	1,356,900	1,448,103
Տրված ընթացիկ կանխավճարներ					
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	1,445,660	1,138,282	1,068,013	1,005,210	657,639
Այլ դեբիտորական պարտքեր	21,369	19,052	13,506	10,000	64,279
Ընթացիկ ֆինանսական ներդրումներ	40,415	43,103	5,505	43,041	
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	169,045	16,370	10,113	10,287	56,532
Այլ ընթացիկ ակտիվներ	36,297	34,406	10,753	16,370	3,450
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	3,828,184	3,010,815	2,524,519	2,441,808	2,230,003
Ընդամենը ակտիվներ	4,445,824	3,430,408	3,078,370	2,621,789	2,335,466
Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի գուտ գումար	50	50	50	50	50
Էմիսիոն եկամուտ					
Կուտակված շահույթ	87,398	87,249	190,233	156,196	67,378
Պահուստային կապիտալ					
Սեփական կապիտալի այլ տարրեր	(1,253)	(1,253)	(1,253)	(1,279)	-770
Ընդամենը սեփական կապիտալ	86,195	86,046	189,030	154,967	66,658
Երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ	579,355	630,602	849,818	279,066	409,474
Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ	136,563	151,633	59,730		

<i>Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ</i>	715,918	782,235	909,548	279,066	409,474
Կարճաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ	736,765	478,091	348,987	280,739	117,332
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	2,890,939	2,067,309	1,613,230	1,885,230	1,726,535
Ստացված ընթացիկ կանխավճարներ					
Այլ կրեդիտորական պարտքեր					
Այլ ընթացիկ պարտավորություններ	16,007	16,727	17,575	21,787	15,467
<i>Ընդամենը ընթացիկ պարտավորություններ</i>	3,643,711	2,562,127	1,979,792	2,187,756	1,859,334
<i>Ընդամենը պարտավորություններ</i>	4,359,629	3,344,362	2,889,340	2,466,822	2,268,808
<i>Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ</i>	4,445,824	3,430,408	3,078,370	2,621,789	2,335,466

ԴՐԱՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՄՓՈՓ ՏՎՅԱԼՆԵՐ

Ցուցանիշի անվանումը	2024 II եռամսյակ Աուդիտ չանցած	2024 I Եռամսյակ Աուդիտ չանցած	2023 Աուդիտ անցած	2022 Աուդիտ անցած	2021 Աուդիտ անցած
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի սկզբին	19,058,079	10,113,126	10,287	56,532	4,195
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	213,012,558	(3,222,409)	(326,205)	54,929	(13,964)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	(50,927,404)	18,425,800	(298,091)	(136,721)	(33,156)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	(12,098,340)	10,417,799	636,649	37,101	100,939
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	169,044,893	19,058,079	10,113	10,287	56,532

ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ

Ցուցանիշի անվանումը	2024 II եռամսյակ Աուդիտ չանցած	2024 I եռամսյակ Աուդիտ չանցած	2023 Աուդիտ անցած	2022 Աուդիտ անցած	2021 Աուդիտ անցած
Չուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)	711	-8,614	773	1,766	1,413
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE)	41.3%	-313.2%	22.5%	79.7%	172.1%
Ակտիվների շահութաբերություն (ROA)	0.9%	-13.2%	1.4%	3.6%	2.8%
Չուտ շահույթի մարժա (NPM)	0.3%	-7.0%	0.6%	1.9%	2.1%
Կապիտալի համարժեքության գործակից	0.02	0.03	0.06	0.06	0.03
Ֆինանսական կախվածության գործակից	50.58	38.87	15.29	15.92	34.04
Բացարձակ իրացվելության գործակից	0.06	0.02	0.01	0.02	0.03
Ընթացիկ իրացվելության գործակից	0.45	0.47	0.55	0.48	0.38
Ընդհանուր իրացվելության գործակից	1.05	1.18	1.28	1.12	1.20
Դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	2.03	1.40	5.93	5.56	6.51
Դեբիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	180.07	260.88	61.75	65.84	56.21
Պաշարների շրջանառելիության գործակից	1.09	0.81	3.51	2.63	1.45
Պաշարների շրջապտույտի տևողությունն օրերով	334.50	451.84	103.89	138.61	251.28
Կրեդիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	0.86	0.70	2.79	2.05	1.31
Կրեդիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	428.01	523.58	131.41	178.96	279.39

Ամփոփ Ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևերը ներկայացված են Հավելված 1-ում:

ԲԱԺԻՆ 2. ԹՈՂԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

9. Ռիսկային գործոններ

Արժեթղթերում՝ ներառյալ պարտատոմսերում, ներդրումները կապված են որոշակի հավանական ռիսկերի հետ, այդ իսկ պատճառով, ներդրում կատարելու վերաբերյալ

որոշում ընդունելուց առաջ ներդրողները պետք է մանրակրկիտ ուսումնասիրեն և վերլուծեն ներդրման հետ կապված և Ազդագրում բացահայտված հավանական ռիսկերը, ինչպես նաև ներկայացված այլ տեղեկատվությունը: Անհրաժեշտ է, այնուամենայնիվ, հաշվի առնել, որ Ազդագրում ներկայացված ռիսկերից բացի կարող է նաև առաջանալ այլ անկանխատեսելի բնույթ ունեցող որևէ ռիսկ, և ներդրողը պետք է ներդրման որոշումը կայացնելիս լիարժեք գիտակցի ներդրման էությունը և առաջնորդվի նաև իր սեփական փորձով, նպատակներով ու ակնկալիքներով:

Ներկայացված ռիսկերից յուրաքանչյուրը կարող է որոշակի բացասական ազդեցություն ունենալ ինչպես Ընկերության վիճակի, այնպես էլ շուկայում առկա իրավիճակի վրա՝ արդյունքում հանգեցնելով Թողարկողի կողմից ստանձնած պարտավորությունների չկատարմանը կամ շուկայում պարտատոմսերի իրացվելիության և, հետևաբար, գնի անկմանը:

Թողարկողի կողմից առավել էական ռիսկեր են դիտարկվում.

Պարտատոմսերի իրացվելիության ռիսկը՝ պարտատոմսերի շուկայի ծավալի և ցածր զարգացվածության պայմաններում պարտատոմսի սեփականատիրոջ կողմից ցանկացած պահի պարտատոմսերը վաճառելու հետ կապված դժվարությունների առաջացումն է: Պարտատոմսերի իրացվելիության ռիսկը կարող է առաջանալ շուկայում ձևավորված իրավիճակի կտրուկ փոփոխության կամ Թողարկողի ֆինանսական վիճակի վատթարացման հետևանքով: Արդյունքում՝ պարտատոմսերը կարող են կորցնել իրենց գրավչությունը և ներդրողը ստիպված լինի իրացնել պարտատոմսերը ձեռք բերման գնից ավելի ցածր գնով:

Վարկային/դեֆոլտի ռիսկը՝ ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ փոխառուն կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պայմանագրային պարտականությունները մյուս կողմի նկատմամբ: Ներդրողները ցանկացած թողարկողի կորպորատիվ պարտատոմսեր ձեռք բերելիս (ապահովված պարտատոմսերի դեպքում ավելի քիչ) իրենց վրա են վերցնում թողարկողի վարկային ռիսկը, որը կապված է ապագայում թողարկողի հնարավոր ֆինանսական վիճակի վատթարացման, արժեկտրոնային վճարումներ իրականացնելու կամ պարտատոմսերը իրենց անվանական արժեքով մարման անհնարինության և հավանական սնանկացման հետ:

Արտարժույթային ռիսկը՝ արտարժույթի փոխարժեքի փոփոխության արդյունքում վնաս կրելու հավանականությունն է, որը կարող է առաջանալ փոխարժեքի տատանումների հետևանքով, որոնք կարող են էապես ազդել ինչպես Ներդրողի, այնպես էլ արժեթղթերի շուկայի վրա:

Տոկոսադրույքի ռիսկը՝ տոկոսադրույքի փոփոխության հետևանքով պարտատոմսերում ներդրողների կորուստներ կրելու վտանգն է, որը կարող է հետևանք լինել շուկայում գործող տոկոսադրույքների կտրուկ փոփոխության, այն կարող է ազդել ինչպես պարտատոմսի գնի, եկամտաբերության, այնպես էլ դրանց գրավչության և իրացվելիության վրա:

Պարտատոմսերի գները գտնվում են հակադարձ կախվածության մեջ տոկոսադրույքների մակարդակից, այսինքն՝ տոկոսադրույքների մակարդակի բարձրացումն այլ հավասար պայմաններում կարող է հանգեցնել պարտատոմսերի գնի անկմանը և հակառակը:

Օրենսդրական դաշտի փոփոխության ռիսկը՝ որի պատճառ կարող են հանդիսանալ օրենսդրության փոփոխությունները, որոնք կազդեն ինչպես Ընկերության գործունեության, այնպես էլ շուկայում տիրող իրավիճակի վրա: Միաժամանակ հարկ է նշել, որ փոփոխությունները կարող են ազդել նաև պարտատոմսերի գրավչության և արդյունքում՝ իրացվելիության վրա:

10. Հիմնական տեղեկատվություն

Ընկերության արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման և դրան հետևող տեղաբաշխման հիմնական նպատակն է հանդիսանում շուկայից միջոցների ներգրավումը: Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման արդյունքում ներգրավված դրամական միջոցներն ուղղվելու են Ընկերության շրջանառության մեծացմանը:

Պարտատոմսերի թողարկման շրջանակներում գոյացած դրամական միջոցները բաշխվելու են հետևյալ ուղղություններով՝

չափման միավոր՝ մլն դրամ

Բիզնես ուղղություն	Ներդրումների ծավալ
--------------------	--------------------

Արևային կայանների բաղադրամասեր	650
Էլեկտրական մեքենաներ	400
Բանկային երաշխիքներ	450

Շտիգեն ՍՊԸ գործունեության շրջանակներում վճարներ են նախատեսվում 5 արտաքին մատակարարների: Ընդամենը գումարը կազմելու է շուրջ 650 մլն դրամ առաջին փուլում: Այդ վճարները հնարավորություն են տալու ապահովելու Շտիգենի շրջանառության աճը տարեկան 20-30% չափով:

Էլեկտրական մեքենաների գործունեության շրջանակներում մատակարարներին վճարներ է նախատեսվում 400 մլն դրամ առաջին փուլում: Այս մոտեցումը կապահովի մեքենաների բավարար քանակի անընդհատ մատակարարում և բիզնեսի կայուն աճ ըստ պլանավորածի:

Նաև, շրջանառության աճը ապահովելու համար անհրաժեշտ է ավելացնել բանկային երաշխիքների ծավալը: Պլանավորվում է ներգրավված միջոցներից 450 մլն դրամ և ուղղել բանկային երաշխիքների ավելացմանը, ինչը հնարավորություն կտա մոտ 500-700 մլն դրամով ավելացնել կազմակերպության շրջանառությունը:

Շրջանառության աճը ապահովելու է կազմակերպության բնականոն զարգացումը, իսկ արդյունքում ստացված շահույթների զգալի մասը ուղղվելու է կապիտալի ավելացմանը, ինչը իր հերթին ավելացնելու է կազմակերպության կայունությունը:

11. Առաջարկվող (կարգավորվող շուկայում առևտրին թույլատրվող) արժեթղթերի հետ կապված տեղեկատվություն

Կազմակերպության կողմից թողարկվող պարտատոմսերն անվանական, արժեկտրոնային, ոչ փաստաթղթային են, որոնց շուրջ ծագող վեճերը, այդ թվում՝ դատական, ենթակա են լուծման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Պարտատոմսերի ռեեստրը վարվելու է «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի կողմից:

11.1 Պարտատոմսերի պայմանները

Պարտատոմսերի տեսակը	անվանական արժեկտրոնային
Պարտատոմսերի ձևը	ոչ փաստաթղթային
Պարտատոմսերի փոխարկելիությունը	ոչ փոխարկելի
Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը (ISIN)	թողարկվող պարտատոմսերը դեռևս չունեն տարբերակիչ ծածկագիր
Պարտատոմսերի թողարկման արժույթը	ՀՀ դրամ
Մեկ պարտատոմսի անվանական արժեքը	100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ
Պարտատոմսերի քանակը	15,000 (տասնհինգ հազար) հատ
Պարտատոմսերի թողարկման ծավալը	1,500,000,000 (մեկ միլիարդ հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ
Պարտատոմսերի ռեեստրը	Պարտատոմսերի ռեեստրը ենթակա է վարման «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի կողմից
Պարտատոմսերի ապահովվածությունը	առաջարկվող պարտատոմսերն ապահովված չեն
Տեղաբաշխման ձևը	չերաշխավորված
Տեղաբաշխող	«Դայմենշն» ՓԲԸ-ն, համաձայն Թողարկողի և «Դայմենշն» ՓԲԸ-ի միջև 08.07.2024թ. կնքված պարտատոմսերի չերաշխավորված եղանակով տեղաբաշխման վերաբերյալ

	պայմանագրի:
Շուկա Ստեղծող	Կազմակերպությունը նախատեսում է օգտվել Շուկա ստեղծողի ծառայություններից:
Պարտատոմսերի տեղաբաշխումը	Արտաբորսայական եղանակով
Պարտատոմսերի թողարկման օրը	Պարտատոմսերի թողարկման օրը և տեղաբաշխման օրը (օրերը) սահմանվում են թողարկողի խորհրդի կողմից: Թողարկման օր է համարվում տեղաբաշխման առաջին օրը:
Պարտատոմսերի շրջանառության ժամկետը	Պարտատոմսերի շրջանառության ժամկետը կորոշվի թողարկողի խորհրդի կողմից
Պարտատոմսերի տարեկան արժեկտրոնի եկամտաբերությունը	Պարտատոմսերի տարեկան արժեկտրոնի եկամտաբերությունը կորոշվի թողարկողի խորհրդի կողմից
Արժեկտրոնների վճարման պարբերականությունը	Պարտատոմսերի արժեկտրոնի վճարման պարբերականությունը կորոշվի թողարկողի խորհրդի կողմից
Արժեկտրոնների վճարման օրերը	Ենթակա է որոշման թողարկողի խորհրդի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
Օրերի հաշվարկման պայմանականությունը	փաստացի/փաստացի DCS=Օրերի փաստացի քանակը, D2M2Y2 - D1M1Y1 DCC=Օրերի փաստացի քանակը, D3M3Y3 - D1M1Y1 DSN=Օրերի փաստացի քանակը, D3M3Y3 - D2M2Y2 որտեղ՝

	<p>D1M1Y1 գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի մարման/արժեկտրոնի կուտակման սկզբի ամսաթիվն է.</p> <p>D2M2Y2 գործարքի կատարման ամսաթիվն է.</p> <p>D3M3Y3 գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման/անվանական արժեքի մարման ամսաթիվն է:</p>
<p>Արժեկտրոնի կուտակումը</p>	$AI = FV * \frac{C}{f} * \frac{DCC}{DCC}$ <p>որտեղ</p> <p>AI - կուտակված տոկոս,</p> <p>FV - պարտատոմսերի անվանական արժեք,</p> <p>C - արժեկտրոնի տարեկան անվանական տոկոսադրույք,</p> <p>f - արժեկտրոնի վճարման հաճախականությունն է (f=4՝ եռամսյակների վճարումների դեպքում:</p> <p>Արժեկտրոնի կուտակումը սկսում է հաշվարկվել պարտատոմսերի թողարկման օրվանից,</p>
<p>Պարտատոմսերի գինը</p>	<p>Պարտատոմսերի գինը հաշվարկվում է հետևյալ բանաձևով</p> $DP = \frac{C}{f} \sum_{i=1}^N \frac{1}{\left(1 + \frac{y}{100 * f}\right)^{i-1+\tau}} + \frac{FV}{\left(1 + \frac{y}{100 * f}\right)^{N-1+\tau}}$ $\tau = \frac{DSN}{DCC}$ <p>որտեղ՝</p> <p>DP - Պարտատոմսի գինն է,</p>

	<p>DSN - գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման ամսաթվի և գործարքի կատարման օրվա միջև եղած օրերի քանակն է,</p> <p>DCC -գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքին հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակն է,</p> <p>f -արժեկտրոնի վճարման հաճախականությունն է (4 եռամսյակների վճարումների համար),</p> <p>N -հաշվարկման պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվը</p> <p>C - միավոր պարտատոմսի տարեկան արժեկտրոնը</p> <p>y - մինչև մարում եկամտաբերություն,</p> <p>i – արժեկտրոնի տվյալ հերթական համարն է, որը փոխվում է կախված տվյալ պահից մինչև վերջնական մարումը մնացած արժեկտրոնների վճարումների քանակից,</p> <p>FV- պարտատոմսի անվանական արժեք:</p>
<p>Պարտատոմսերի եկամտաբերությունը</p>	<p>Պարտատոմսերի եկամտաբերությունը հաշվարկվում է նախորդ կետում ներկայացված բանաձևի միջոցով:</p>
<p>Պարտատոմսերի մարման օրը</p>	<p>Պարտատոմսերի մարման օրը կորոշվի թողարկողի խորհրդի կողմից</p>
<p>Արժեկտրոնների վճարումը և պարտատոմսերի մարումը</p>	<p>Արժեկտրոնների վճարումը իրականացվելու է ՀՀ դրամով: Պարտատոմսերի մարումը իրականացվելու է ՀՀ դրամով:</p> <p>Արժեկտրոնների վճարումները և պարտատոմսերի մարումն իրականացվում է արժեկտրոնի վճարման օրվան և/կամ պարտատոմսերի մարման օրվան նախորդող օրվա վերջի (ժամը 24:00–ի) դրությամբ Դեպոզիտարիայից ստացված պարտատոմսերի սեփականատերերի ցուցակի հիման վրա, համաձայն որի Կազմակերպությունը մարման օրը հանձնարական է տալիս իր սպասարկող բանկին՝</p>

	<p>համապատասխան վճարումները փոխանցելու Պարտատոմսերի սեփականատերերի՝ ՀՀ տարածքում գործող բանկերում բացված բանկային հաշիվներին: Վճարումներն իրականացվում են անկանխիկ ձևով: Վճարումները չեն փոխանցվում այն սեփականատերերին (անվանատերերին), որոնց բանկային հաշվի մասին տեղեկությունները բացակայում են Դեպոզիտարիայից ստացված պարտատոմսերի սեփականատերերի ցուցակում և Կազմակերպությունը այլ կերպ չի տիրապետում այդ տեղեկությանը: Այս դեպքում այդ սեփականատերերի վճարումները երեք աշխատանքային օրվա ընթացքում փոխանցվում են նոտարի դեպոզիտ:</p>
<p>Պարտատոմսերի մարման կատարում և/կամ արժեկտրոնների վճարում</p>	<p>Պարտատոմսերի մարման օրը և/կամ արժեկտրոնների վճարման օրը պարտատոմսի սեփականատիրոջ բանկային հաշվին համապատասխան վճարումների մուտքագրում:</p> <p>Պարտատոմսերի արժեկտրոնների կատարման (վճարման) օրերը կորոշվի թողարկողի խորհրդի կողմից:</p> <p>Պարտատոմսերի մարման օրը կորոշվի թողարկողի խորհրդի կողմից:</p>
<p>Պարտատոմսերի ազատ շրջանառելիության սահմանափակում</p>	<p>Տեղաբաշխումից հետո արժեթղթերի առուվաճառքը երկրորդային շուկայում կարող է իրականացվել բացառապես կարգավորվող շուկայում:</p>
<p>Ցուցակումը</p>	<p>Պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Ընկերությունը սահմանված կարգով դիմում է Բորսա՝ պարտատոմսերի շրջանառությունը կարգավորվող շուկայում ապահովելու նպատակով: Շուկայում առևտրին թույլատրված արժեթուղթն արգելվում է վաճառել տվյալ շուկայից դուրս, բացառությամբ</p>

	ՀՀ ԿԲ նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերի:
--	--

11.2 Երկիրը

Պարտատոմսերը թողարկվելու են ՀՀ տարածքում՝ համաձայն ՀՀ օրենսդրության: Վեճերի և դատական գործընթացների առկայության դեպքերում վերջիններս կարգավորվելու են ՀՀ օրենսդրության համաձայն:

11.3 Առաջարկվող արժեթղթերի դասակարգման մասին տեղեկատվությունը հետևյալն է.

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 70-րդ հոդվածի՝ Թողարկողի լուծարման դեպքում նրան պարտատերերի պահանջները բավարարվում են հետևյալ հերթականությամբ.

1. առաջին հերթին բավարարվում են լուծարվող իրավաբանական անձի գույքի գրավով ապահովված պարտավորությունների մասով պարտատերերի պահանջները,

2. երկրորդ հերթին բավարարվում են այն քաղաքացիների պահանջները, որոնց առջև լուծարվող իրավաբանական անձը պատասխանատվություն է կրում նրանց կյանքի կամ առողջությունը վնաս պատճառելու համար համապատասխան պարբերական վճարումների կապիտալացման միջոցով,

3. երրորդ հերթին վճարվում է աշխատանքային պայմանագրով աշխատող անձանց արձակման նպաստների, աշխատավարձի և հեղինակային պայմանագրերով վարձատրությունը,

4. չորրորդ հերթին մարվում է պետական բյուջե կատարվող պարտադիր վճարների պարտքը,

5. հինգերորդ հերթին հաշվարկներ են կատարվում մնացած պարտատերերի հետ՝ բացառությամբ ստորադաս փոխառություններով պարտատերերի,

6. վեցերորդ հերթին հաշվարկներ են կատարվում ստորադաս փոխառություններով պարտատերերի հետ:

Յուրաքանչյուր հերթի պահանջները բավարարվում են նախորդ հերթի պահանջները լրիվ բավարարելուց հետո: Թողարկողի կողմից առաջարկվող պարտատոմսերի սեփականատերերի պահանջները բավարարվում են հինգերորդ հերթին: Ընդ որում, Թողարկողի հետ փոխկապակցված անձանցից ներգրավված վարկերը և/կամ փոխառությունները ստորադաս են սույն Ազդագրի շրջանակներում թողարկված պարտատոմսերի նկատմամբ, և դրանց գծով պարտատերերի պահանջները ենթակա են բավարարման պարտատոմսերի սեփականատերերի պահանջներն ամբողջությամբ բավարարելուց հետո:

11.4 Արժեթղթերից բխող իրավունքները

Պարտատոմսերից բխող իրավունքներն են՝

1. Ստանալ պարտատոմսերով նախատեսված արժեկտրոնային եկամուտները և մարման գումարը՝ ըստ Ազդագրով սահմանված կարգի: Արժեկտրոնային եկամտի ստացման և շրջանառության ժամկետի վերջում պարտատոմսերի մարման գումարի

ստացման իրավունքի իրականացման համար ներդրողներից լրացուցիչ գործողությունների կատարում չի պահանջվում և արժեկտրոնային եկամուտը/պարտատոմսի մարման գումարը փոխանցվում է ներդրողի բանկային հաշվին,

2. Թողարկողի կողմից պարտատոմսերի արժեկտրոնները և/կամ մարման գումարը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում ձեռնարկել պարտատոմսերի սեփականության իրավունքից բխող իր պահանջների բավարարման ուղղությամբ օրենսդրությամբ թույլատրվող գործողություններ,

3. Գրավադրել պարտատոմսերը օրենսդրությամբ սահմանված կարգով,

4. Իր ցանկությամբ օտարել պարտատոմսերը բացառապես Հայաստանի ֆոնդային բորսա ԲԲԸ-ում (այսուհետ նաև՝ **Բորսա**) (ֆոնդային բորսայում առևտրի թույլտվություն ստացած և/կամ ցուցակված լինելու դեպքում) «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ **Օրենք**) սահմանված կարգով: Ընդ որում, ներդրողները պետք է հաշվի առնեն, որ Օրենքով արգելվում է կարգավորվող շուկայից (Բորսա) դուրս վաճառել կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված արժեթղթեր,

5. Օրենսդրությամբ նախատեսված այլ իրավունքներ:

11.5 Արժեկտրոնի տոկոսադրույքը և դրա վճարման պայմանները

Պարտատոմսերի դիմաց վճարվելու է արժեկտրոնային անվանական եկամուտ, որը ենթակա է որոշման Թողարկողի խորհրդի կողմից:

Պարտատոմսերի դիմաց նախատեսվող արժեկտրոնային անվանական եկամուտների վճարման պարբերականությունը ենթակա է որոշման Թողարկողի խորհրդի կողմից:

Պարտատոմսերի դիմաց նախատեսվող արժեկտրոնային եկամուտը հաշվարկվելու և վճարվելու է ՀՀ դրամով:

Արժեկտրոնների հաշվարկման օրերը ենթակա են որոշման թողարկողի խորհրդի կողմից:

Արժեկտրոնները պարտատոմսերի սեփականատերերին և/կամ անվանատերերին վճարվելու են արժեկտրոնների հաշվարկման օրը: Եթե հաշվարկման օրը ոչ աշխատանքային է, ապա արժեկտրոնի վճարման օր է համարվում դրան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Արժեկտրոնները (տոկոսագումարները) ստանալու իրավունք ունեն պարտատոմսերի արժեկտրոնների հաշվարկման օրվան նախորդող օրվա վերջի դրությամբ պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրում գրանցված անձինք (սեփականատերերը կամ անվանատերերը):

Թողարկողը պարտավոր է մինչև պարտատոմսերի հերթական արժեկտրոնների հաշվարկման օրը մինչև ժամը 12:00 վարվող համապատասխան բանկային դրամական հաշվի վրա ապահովել հերթական արժեկտրոնների վճարման համար անհրաժեշտ ամբողջ գումարը: Արժեկտրոնային վճարումների համար նախատեսվող գումարներն անվանատերերին և/կամ սեփականատերերին վճարվում են մինչև 0.1 ՀՀ դրամ (ընդ որում, կլորացումը իրականացվում է

թվաբանական կլորացման կանոնների համաձայն՝ մինչև ամենամոտ ամբողջ տասնավոր (հարյուրավոր) թիվը): Թվաբանական կլորացման կանոնի ներքո հարկ է հասկանալ կլորացման այն մեթոդը, որի դեպքում միավորի ամբողջ թիվը չի փոխվում, եթե կլորացման ենթակա տասնորդական (հարյուրերորդական) միավորը հավասար է 0-ից 4-ի և փոխվում է՝ մեծանալով մեկ միավորով, եթե կլորացման ենթակա տասնորդական (հարյուրերորդական) միավորը հավասար է 5-ից 9-ի:

Թողարկողը արժեկտրոնի գումարները վճարելու է անկանխիկ ձևով առևտրային բանկում թողարկման նպատակով բացված համապատասխան հաշվից: Դրամական միջոցների այն մասը, որը հնարավոր չի լինի փոխանցել արժեթղթերի սեփականատիրոջը և/կամ անվանատիրոջը Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգում պարտատոմսի սեփականատերերի ռեեստրի փակման օրվա դրությամբ ռեեստրում նշված բանկային հաշիվների բացակայության կամ դրանց ճշտման անհնարինության պատճառով՝ մեկ շաբաթվա ընթացքում Թողարկողը կգործադրի իրենից կախված բոլոր ողջամիտ ջանքերը ներդրողին հայտնաբերելու ու նրան վճարման ենթակա գումարը փոխանցելու ուղղությամբ: Ներդրողին հայտնաբերելու անհնարինության դեպքում Թողարկողը վճարման ենթակա գումարը վճարելու է նոտարի կամ դատարանի (<< օրենսդրությամբ սահմանված դեպքերում) դեպոզիտ համաձայն << օրենսդրության:

Արժեկտրոնի գումարի հաշվարկման համար հիմք է ընդունվում հետևյալ բանաձևը՝

$$ԱԳ=(FV \times C)/ f,$$

որտեղ՝

ԱԳ-ն արժեկտրոնի գումարն է,

FV-մեկ պարտատոմսի անվանական արժեքն է,

C-տարեկան արժեկտրոնային անվանական տոկոսադրույքն է՝ արտահայտված տոկոսներով,

f-ն մեկ տարում վճարվող արժեկտրոնների թիվն է (արժեկտրոնների եռամսյակային վճարման դեպքում $f=4$)

Արժեկտրոնի կուտակումն իրականացվելու է հետևյալ բանաձևով՝

$$AI = FV \times C / f \times DCS / DCC$$

AI-կուտակված արժեկտրոնային եկամուտն է,

FV-մեկ պարտատոմսի անվանական արժեքն է,

C-տարեկան արժեկտրոնային անվանական տոկոսադրույքն է՝ արտահայտված տոկոսներով

f – մեկ տարում վճարվող արժեկտրոնների թիվն է, հաճախականությունը,

(արժեկտրոնների եռամսյակային վճարման դեպքում $f=4$),

Օրերի հաշվարկման պայմանականությունը համարվում է Actual/Actual-ը, ընդ որում՝

DCS-գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի մարման/արժեկտրոնի կուտակման սկզբի ամսաթվի և գործարքի կատարման օրվա միջև եղած օրերի քանակն է համապատասխան պայմանականության դեպքում [D2M2Y2-D1M1Y1],

DCC- արժեկտրոնային փուլի օրերի քանակն է համապատասխան պայմանականության դեպքում [D3M3Y3-D1M1Y1],

D1M1Y1- գործարքի կատարման օրվա նախորդող արժեկտրոնի մարման/արժեկտրոնի կուտակման սկզբի ամսաթիվն է,

D2M2Y2- գործարքի կատարման ամսաթիվն է,

D3M3Y3- գործարքի կատարման օրվա հաջորդող արժեկտրոնի մարման/անվանական արժեքի մարման ամսաթիվն է:

11.6 Արժեթղթերի մարման (մասնակի մարումների) ժամկետը և արժեքը

Պարտատոմսերի տեղաբաշխումն սկսելու օրը ենթակա է որոշման Թողարկողի խորհրդի կողմից:

Պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման մեկնարկի օրը միևնույն օրն է:

Մեկ պարտատոմսինը՝ 100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ է: Պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրը փակվում է պարտատոմսերի մարման օրվա նախորդող օրը: Պարտատոմսերի մարման գումարն իրավունք ունեն ստանալ մինչև ռեեստրի փակման պահը պարտատոմսերի սեփականատերերի և/կամ անվանատերերի ռեեստրում գրանցված անձինք:

Թողարկողը պարտավոր է մինչև մարման գումարների վճարման օրվա ժամը 12:00 վարվող համապատասխան բանկային դրամական հաշվի վրա ապահովել վճարման համար անհրաժեշտ ամբողջ գումարը:

Պարտատոմսերի մարման գումարները պարտատոմսերի սեփականատերերին/անվանատերերին վճարվում են պարտատոմսերի մարման օրը /մինչև աշատանքային օրվա վերջը: Եթե մարման օրը ոչ աշխատանքային օր է, ապա մարման գումարները վճարվում են մարման օրվան հաջորդող աշխատանքային օրը:

Թողարկողը մարման գումարները վճարելու է անկանխիկ ձևով: Դրամական միջոցների այն մասը, որը հնարավոր չի լինի փոխանցել արժեթղթերի սեփականատիրոջը և/կամ անվանատիրոջը Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգում պարտատոմսի սեփականատերերի ռեեստրի փակման օրվա դրությամբ ռեեստրում նշված բանկային հաշիվների բացակայության կամ դրանց ճշտման անհնարինության պատճառով՝ Հաշվի օպերատորի կողմից կվերադարձվի Թողարկողի համապատասխան բանկային հաշվին: Այնուհետև Թողարկողը կգործադրի իրենից կախված բոլոր ողջամիտ ջանքերը ներդրողին հայտնաբերելու ու նրան վճարման ենթակա գումարը փոխանցելու ուղղությամբ: Ներդրողին հայտնաբերելու անհնարինության դեպքում Թողարկողը վճարման ենթակա գումարը վճարելու է նոտարի կամ դատարանի (<< օրենսդրությամբ սահմանված դեպքերում) դեպոզիտ համաձայն << օրենսդրության:

Թողարկված պարտատոմսերի մարման դիմաց վճարումները կատարվելու են << դրամով:

Պարտատոմսերի մասնակի մարումներ կամ վաղաժամկետ մարում չի նախատեսվում: Կազմակերպությունը պարտատոմսերի հետգնում չի նախատեսում իրականացնել:

11.7 Արժեթղթերի տարեկան եկամտաբերությունը

Արժեթղթերի եկամտաբերությունը ենթակա է որոշման Թողարկողի խորհրդի կողմից:

11.8.Նոր թողարկման մասին տեղեկատվություն

Պարտատոմսերի թողարկման/առաջարկի ծրագրի վերաբերյալ որոշումն ընդունվել է Թողարկողի միակ մասնակցի կողմից 2024թ.-ի դեկտեմբերի 6-ի որոշմամբ: Որոշմամբ ամրագրվել է այն առավելագույն ծավալը, որի շրջանակներում Թողարկողի խորհրդի կողմից առանձին որոշմամբ (որոշումներով) կարող է իրականացվել պարտատոմսերի տեղաբաշխում (տեղաբաշխումներ): Պարտատոմսերի տեղաբաշխումներին վերաբերող վերջնական պայմանները հաստատվում են Թողարկողի խորհրդի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

11.9 Արժեթղթերի ազատ շրջանառելիության սահմանափակումների նկարագրությունը

Պարտատոմսերի ազատ շրջանառության հետ կապված, Թողարկողի կանոնադրությամբ կամ պարտատոմսերի թողարկման մասին Թողարկողի համապատասխան խորհրդի որոշմամբ պարտատոմսերի թողարկման, ինչպես նաև պարտատոմսերում ներդրումներ կատարողների նկատմամբ որևէ սահմանափակումներ չեն սահմանվում, բացի տեղաբաշխման ընթացքում մեկ ներդրողի նկատմամբ կիրառվող ձեռք բերվող պարտատոմսերի ծավալի

սահմանափակումից, եթե նման որոշում կայացվի Թողարկողի խորհրդի կողմից, ինչպես նաև Արժեթղթերի շուկայի մասին օրենքի և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերի:

Թողարկողը պարտադիր դիմելու է Բորսա պարտատոմսերը Բորսայում առևտրի թույլտվություն ստանալու և/կամ ցուցակելու համար, և համաձայն գործող օրենսդրության պարտատոմսերի առևտրի թույլտվություն ստանալու և/կամ ցուցակելու դեպքում վերջիններիս շրջանառությունը կարող է իրականացվել միայն Բորսայում:

Ներդրողները կարող են իրենց ցանկությամբ օտարել պարտատոմսերը Բորսայում (առևտրի թույլտվություն ստանալու և/կամ լինելու ցուցակված դեպքում) Օրենքով սահմանված կարգով, ընդ որում ներդրողները պետք է հաշվի առնեն, որ ՀՀ օրենսդրությամբ չի թույլատրվում կարգավորվող շուկայից (Բորսա) դուրս վաճառել կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված կորպորատիվ արժեթղթեր, բացառություն են կազմում ՀՀ ԿԲ կողմից կնքվող գործարքները (ՀՀ ԿԲ և ֆինանսական. շուկայի մասնագիտացված ընկերությունների միջև հնարավոր գործարքներ, թողարկողի կողմից իր թողարկած արժեթղթերի հետգնման կամ ձեռքբերման գործարքներ):

11.10 Պարտատոմսերից ստացվող եկամուտների հարկման կարգը և նկարագիրը

Կարևոր ծանուցում: Չնայած այն հանգամանքին, որ Թողարկողը, իրականացնելով իր լավագույն ջանքերը և առկա գիտելիքները, սույն բաժնում

ներկայացնում է արժեթղթերից ստացվող եկամուտների հարկման մոտեցումները ՀՀ-ում, այնուամենայնիվ Թողարկողը ցանկանում է հայտարարել, որ ներդրողներն այն չպետք է համարեն հարկային խորհրդատվություն և ներդրումներ անելիս հիմնվեն միայն այս բաժնում ներկայացված նյութի վրա: Թողարկողը չի երաշխավորում, որ ներդրողի կողմից Ազդագրի ստացման և ծանոթացման պահին հարկային օրենսդրությունը կհամապատասխանի ներկայացվածին, կամ համարժեքորեն կիրառություն կունենա ՀՀ հարկային մարմինների կողմից և ցանկացած պարագայում խորհուրդ է տալիս օգտվել մասնագիտացված հարկային խորհրդատվության ծառայություններից: Թողարկողը ցանկանում է հայտարարել, որ սույնով զերծ է մնում ցանկացած ներդրողի հնարավոր պահանջներից կապված հարկային օրենսդրության և հարկման մեխանիզմների փոփոխության արդյունքում առաջացած լրացուցիչ ֆինանսական պահանջների նկատմամբ պատասխանատվությունից:

Պարտատոմսերից ստացված եկամուտը ենթակա է հարկման ըստ հետևյալ հարկատեսակների.

- ✓ **Շահութահարկ** (Իրավաբանական անձանց դեպքում),
- ✓ **Եկամտային հարկ** (Ֆիզիկական անձանց դեպքում):

Պարտատոմսերից կարելի է եկամուտ ստանալ հետևյալ տեսքով.

1. Տոկոսային եկամուտ (պարտատոմսերի դիմաց վճարվող արժեկտրոնը)

2. Կապիտալի հավելված (ծեռքբերման պահից հետո պարտատոմսի գնի աճը, հաշվարկվում է որպես մինչև մարման օրը պարտատոմսի վաճառքի և գնման գնի դրական տարբերություն)

Շահութահարկ

Շահութահարկ վճարողներ են համարվում ՀՀ գործող ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական անձինք: Հարկվող շահույթը հարկատուի՝ ՀՀ հարկային օրենսգրքի համապատասխան հոդվածներով սահմանված համախառն եկամտի և սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է: Այս պահին շահութահարկի դրույքը 18 տոկոս է:

Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց շահութահարկի դրույքաչափը պարտատոմսերում ներդրումներից ստացված եկամտի համար կազմում է 10 տոկոս: Թողարկողի պարտատոմսերում ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ ներդրողների համար Թողարկողը հանդիսանում է հարկային գործակալ:

2020թ.-ի մարտի 1-ից ոչ ռեզիդենտ իրավաբանական անձինք ՀՀ-ում գործող ֆոնդային բորսայում մինչև 2024թ.-ի դեկտեմբերի 31-ը ցուցակված պարտատոմսերից ստացվող տոկոսային եկամտի, ինչպես նաև նշյալ պարտատոմսերի օտարումից ստացվող եկամուտների մասով ազատվում են շահութահարկի վճարումից: Վերոնշյալ դրույթները տարածվում են այն արժեթղթերի (արժեթղթերի դասերի) վրա, որոնք ՀՀ գործող ֆոնդային բորսայում (կարգավորվող շուկայում) ցուցակվել են մինչև 2024թ. դեկտեմբերի 31-ը: Վերոնշյալ հարկային արտոնությունները չի տարածվում Ընկերության պարտատոմսերի վրա: Ընկերության պարտատոմսերը այս պահին չեն ընկում վերոնշյալ արտոնության տակ և եթե օրենքի փոփոխություն լինի Ընկերությունը լրացուցիչ կտեղեկացնի դրա վերաբերյալ:

Եկամտային հարկ

Եկամտային հարկ վճարողներ են համարվում ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք: Ֆիզիկական անձանց համար պարտատոմսերից ստացված միայն տոկոսային եկամուտն է ենթակա հարկման, իսկ հարկման դրույքաչափը ներկայումս սահմանված է 10%: Թողարկողի պարտատոմսերում ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ ներդրողների համար Թողարկողը հանդիսանում է հարկային գործակալ:

2020թ.-ի մարտի 1-ից ՀՀ-ում գործող Ֆոնդային բորսայում ցուցակված պարտատոմսերից ստացվող եկամուտները ազատվում են ռեզիդենտի եկամտային հարկից: Բացառություն են կազմում միայն բանկերի թողարկած այն պարտատոմսերը, որոնց տեղաբաշխման պահից մինչև մարումն ընկած ժամկետը պակաս է 2 տարուց: Վերոնշյալ դրույթները տարածվում են այն արժեթղթերի (արժեթղթերի դասերի) վրա, որոնք ՀՀ գործող Ֆոնդային բորսայում (կարգավորվող շուկայում) ցուցակվել են մինչև 2024թ. դեկտեմբերի 31-ը:

12. Առաջարկի ժամկետները և պայմանները

Առաջարկի պայմանները, առաջարկի վիճակագրությունը, ակնկալվող ժամանակացույցը և այն գործողությունները, որոնք անհրաժեշտ են առաջարկից օգտվելու համար

Առաջարկի ընդհանուր ծավալը

Պարտատոմսերի թողարկման (առաջարկի) ընդհանուր ծավալը կազմում է 1,500,000,000 (մեկ միլիարդ հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ: Տեղաբաշխման յուրաքանչյուր տրանշի ծավալը ենթակա է որոշման Թողարկողի խորհրդի կողմից:

Առաջարկի իրականացման սկիզբը և ավարտը

Պարտատոմսերի տեղաբաշխման ձևը, ինչպես նաև տեղաբաշխումն սկսելու օրը ենթակա են որոշման Թողարկողի խորհրդի կողմից:

Պարտատոմսերի տեղաբաշխումը իրականացվելու է արտաբորսայական եղանակով:

Պարտատոմսերի տեղաբաշխման հստակ ժամանակահատվածը ենթակա է որոշման Թողարկողի խորհրդի կողմից:

Թողարկողի կողմից պարտատոմսերի առաջարկը, ինչպես նաև տեղաբաշխումը կարող է հետաձգվել կամ չեղյալ հայտարարվել անհաղթահարելի ուժի ազդեցության դեպքում (Ֆորս մաժոր):

Եթե Թողարկողը տեղաբաշխման ընթացքում ներկայացնում է Ազդագրի լրացում, որը կապված է Ազդագրում ներառված տեղեկատվության էական փոփոխության, նոր էական հանգամանքի կամ փաստի ի հայտ գալու հետ, ապա նա ներդրողի պահանջով պարտավոր է չեղյալ համարել ներդրողի տված ակցեպտը և հետ վերադարձնել տեղաբաշխման ընթացքում նրանից ստացված միջոցները կամ հետ գնել մինչև լրացման ներկայացումը ներդրողին վաճառված արժեթղթերը՝ առնվազն նրա կողմից արժեթղթերի ձեռքբերման գնով: Սահմանված հետգնման պահանջը պետք է Տեղաբաշխողին ներկայացվի գրավոր: Հետգնման պահանջի ներկայացման ժամկետը չի կարող ավելի կարճ լինել, քան 10 (տասը) աշխատանքային օրը՝ Ազդագրի լրացման հրապարակումից հետո:

Եթե առկա են հետ վերադարձման ենթակա դրամական միջոցներ, ապա դրանք վերադարձվում են Տեղաբաշխողի կողմից հետաձգման կամ չեղյալ հայտարարման որոշումն ընդունելուց հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում՝ անկանխիկ եղանակով:

Տեղաբաշխումը դադարեցնելու մասին որոշման կայացման և տեղաբաշխման ընթացքում ստացված միջոցները ներդրողներին վերադարձվում են կուտակված արժեկտրոնային եկամուտների հետ միասին: Արժեկտրոնային եկամուտը նման դեպքում հաշվարկվում է տեղաբաշխման առաջին օրվա և այն դադարեցնելու մասին որոշման կայացման օրերի միջև ընկած ժամանակամիջոցի համար: ԿԲ-ն

իր որոշմամբ կարող է կասեցնել պարտատոմսերի տեղաբաշխման ընթացքը՝ Օրենքի համաձայն:

Տեղաբաշխողի նախաձեռնությամբ տեղաբաշխման ընթացքը կարող է կասեցվել միայն ԿԲ համաձայնությամբ՝ առավելագույնը 10 (տասը) աշխատանքային օրով: Եթե կասեցման ժամկետն ավարտվելու պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում տեղաբաշխումը չի շարունակվում, ապա Տեղաբաշխողը պարտավոր է կայացնել տեղաբաշխումը դադարեցնելու մասին որոշում և վերադարձնել տեղաբաշխման ընթացքում ստացված միջոցներն արժեթղթերը ձեռք բերած անձանց Օրենքով սահմանված կարգով՝ կասեցման ժամկետի ավարտից 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում:

Վերջնական պայմաններին վերաբերվող տեղեկությունները

Թողարկման վերջնական պայմանների հրապարակում

Կազմակերպությունը ծրագրային ազդագրի գրանցումից հետո արժեթղթերի յուրաքանչյուր թողարկման համար կազմվող թողարկման վերջնական պայմանների հրապարակումը նախատեսում է կատարել կազմակերպության պաշտոնական ինտերնետային հասցեում՝ shtigen.com, տեղաբաշխումից առնվազն 2 աշխատանքային օր առաջ:

Առաջարկից օգտվելու համար դիմելու գործընթացը

Պարտատոմսերի ձեռքբերման համար ներդրողները սահմանված կարգով պետք է լրացնեն և պատշաճ կերպով Թողարկողին ներկայացնեն պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականը, որով կհավաստեն պարտատոմսերի թողարկման պայմաններն ընդունելու իրենց պատրաստակամությունը, և որով այդ պայմանները կդառնան ներդրողների համար պարտադիր:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականները կիրառարակվեն Տեղաբաշխողի և/կամ Թողարկողի պաշտոնական ինտերնետային կայքերում:

Հայտ-հանձնարարականում պարտադիր լրացման դաշտ է համարվում ներդրողի արժեթղթերի հաշվի համարը և արժեթղթերի հաշիվը հաշվառող անձի անունը: Այդ նպատակով ներդրողները պարտավոր են լիցենզավորված որևէ հաշվի օպերատորի մոտ բացել արժեթղթերի հաշվառման անձնական արժեթղթերի հաշիվ և կրել վերջինիս հետ կապված ծախսերը:

Հետևյալ հղումով ներդրողը կարող է տեսնել այն պահառուների անվանումները և գտնվելու վայրերը, բացառությամբ Կենտրոնական Բանկի, որտեղ կարելի է արժեթղթերի հաշիվ բացել՝ https://cda.am/am/depository_account_operators:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականի լրացումից և պատշաճ կերպով Թողարկողին առաքումից հետո պարտատոմսերի ձեռքբերման համար համապատասխան դրամական միջոցները ներդրողների կողմից պետք է մուտքագրվեն թողարկման նպատակով բացված հաշվեհամարին մինչև հայտ-հանձնարարականի ձեռքբերման օրվա ավարտը: Հայտ-հանձնարարականը կհամարվի վավեր պատշաճ առաքման և համապատասխան վճարի կատարման հիմքով:

Սահմանված ժամկետում համապատասխան վճարում չիրականացրած ներդրողների հայտ-հանձնարարականները համարվում են անվավեր:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականի ձեռքբերման օրվա ավարտից հետո, ինչպես նաև պարտատոմսերի տեղաբաշխման նախատեսված վերջնաժամկետից հետո Թողարկման հաշվեհամարին ստացված գումարները

ենթակա են ետ վերադարձման, իսկ դրանց համապատասխան հայտ-
հանձնարարականները չեն կարող բավարարվել:

Տեղաբաշխման նպատակով Ընկերության անունով բացված բանկային
համապատասխան հաշվեհամարներին դրամական միջոցների ստացումից և
պարտատոմսերի ձեռքբերման հայտը ստանալուց անմիջապես հետո
Տեղաբաշխողը Դեպոզիտարիա է ներկայացնում պարտատոմսերի
տեղաբաշխման հանձնարարական Թողարկողի տեղաբաշխման հաշվից
համապատասխան քանակի պարտատոմսերի փոխանցման և ներդրողի կամ
ներդրողի անվանատիրոջ արժեթղթերի հաշվին հաշվեգրման համար:
Դեպոզիտարիայից ներդրողի կամ ներդրողի անվանատիրոջ դեպո հաշվին
պարտատոմսերի փոխանցման վերաբերյալ համապատասխան հաստատում
ստանալուց անմիջապես հետո Թողարկողը տեղաբաշխման նպատակով բացված
համապատասխան բանկային հաշվեհամարներից իր օգտագործման համար
մատչելի է դարձնում համապատասխան հայտում նշված դրամական միջոցները:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտը կհամարվի պատշաճ կերպով
առաքված Թողարկողին, եթե այն առաքվել է Թողարկողի հետ միայն ներքոնշյալ
կապի միջոցներից որևէ մեկի միջոցով (կամ առձեռն՝ գրասենյակ այցելելով) և
ստացվել է հասցեատիրոջ կողմից առաքման ստացման հաստատում՝ լրացնելով
համապատասխան հայտը:

Թողարկողի հետ կապի միջոցներն են՝ հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Դ. Անհաղթ
23, տարածք 6, «Շտիգեն» ՍՊԸ, էլեկտրոնային փոստ՝ investment@shtigen.com,
հեռ. (+374 11) 230023:

Ֆիզիկական անձ ներդրողների համար հայտի ձևը ներկայացված է Ծրագրային ազդագրի Հավելված 4-ում: Իրավաբանական անձ ներդրողների համար հայտի ձևը ներկայացված է Ծրագրային ազդագրի Հավելված 5-ում: Հայտին կից ներկայացվում են.

- ֆիզիկական անձի դեպքում՝ անձը հաստատող փաստաթղթի

(առկայության դեպքում սոցիալական քարտի կամ հանրային ծառայության համարանիշ պարունակող փաստաթղթի) պատճենները (կամ տեղեկանք հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ)

- իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցման վկայականը (ՀՀ պետական ռեգիստրում գրանցված ռեզիդենտ իրավաբանական անձի, ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց ՀՀ-ում ստեղծված մասնաճյուղերի և ներկայացուցչությունների դեպքում նաև գործող ղեկավարի գրանցման ներդիրը) կամ միասնական պետական գրանցամատյանից տրված քաղվածքը, լիազորված անձի դեպքում նաև լիազորագիրը:

Առաջարկի ընդհանուր ծավալի նվազեցման հնարավորությունը

Տեղաբաշխման ընթացքում առաջարկի ընդհանուր ծավալի նվազեցման հնարավորություն չի նախատեսվում Թողարկողի խորհրդի կողմից:

Տեղաբաշխման ժամանակ հայտ–հանձնարարականի մասնակի բավարարման դեպքում, եթե առկա է լինում ներդրողին ետ վերադարձման գումար, ապա տեղաբաշխման ավարտից հետո 3 (երեք) աշխատանաքային օրվա ընթացքում նշված գումարը Թողարկողի կողմից ենթակա է վերադարձման, ինչն

իրականացվում է անկանխիկ եղանակով՝ համապատասխան ներդրողի բանկային հաշվի փոխանցմամբ:

Նվազագույն և առավելագույն գումարները, որոնք կարող են նշվել ձեռքբերման (բաժանորդագրության) հայտերում:

Թողարկման ընթացքում կարող են լինել Պարտատոմսերի ձեռքբերման քանակական և գումարային սահմանափակումներ, եթե նման որոշում կայացվի Թողարկողի խորհրդի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Հայտը հետ կանչելու ժամանակաշրջանը

Հայտի ներկայացումից հետո սահմանված ժամկետում համապատասխան վճարում չիրականացրած ներդրողների հայտերը համարվում են անվավեր և չեն մասնակցում տեղաբաշխմանը: Բացի վերոնշյալ դեպքերից, ներդրողները պարտատոմսերի հայտերը պատշաճ կերպով առաքելուց, Բանկի կողմից հայտի ստացման հաստատումը/ծանուցումը ստանալուց և համապատասխան վճարումը կատարելուց հետո դրանք չեն կարող ետ կանչել:

Արժեթղթերի դիմաց վճարներ կատարելու մեթոդները

Թողարկողի կողմից թողարկվող պարտատոմսերի ձեռքբերման համար իրավաբանական և/կամ ֆիզիկական անձիք վճարումը կատարում են թողարկման նպատակով «Արմավիսբանկ» ՓԲԸ-ում բացված ՀՀ դրամային 2500010587010500 համապատասխան բանկային հաշվեհամարին: Համապատասխան հայտերը բավարարվելուց հետո ներդրողներն արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք կարող են ստանալ իրենց արժեթղթերի հաշիվը սպասարկող

Պահառուից կամ Հաշվի Օպերատորից՝ Թողարկողից իրենց հայտերի բավարարման մասին տեղեկացվելուց հետո:

«Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ը հաշվի օպերատորի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարները գանձվում են համաձայն հաշվի օպերատորի կողմից հաստատված սակագների, որոնց հետ ներդրողը կարող է ծանոթանալ “Հայաստանի ֆոնդային բորսա” ԲԲԸ-ի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով՝ www.amx.am :

Առաջարկի արդյունքների հրապարակման ձևի և ժամկետները

Տեղաբաշխման արդյունքները կհրապարակվեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում: Հրապարակային տեղաբաշխումն սկսելու պահից յուրաքանչյուր 30-րդ օրվա ավարտից հետո ոչ ուշ, քան 15-րդ օրը, ինչպես նաև տեղաբաշխման ավարտից հետո՝ 30 օրվա ընթացքում, Թողարկողը պարտավոր է ԿԲ ներկայացնել հաշվետվություն՝ տեղաբաշխման ընթացքի և արդյունքների մասին՝ ԿԲ նորմատիվ իրավական ակտերով սահմանված ձևով և կարգով:

Նախապատվության իրավունքի իրականացման կարգը

Ֆոնդային բորսայից դուրս տեղաբաշխման ժամանակ պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացվելու է ըստ պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականների և դրանց դիմաց կատարված վճարման ստացման հերթականության, այսինքն առաջնահերթություն ունի ներդրողը, ում հայտ-հանձնարարականի համաձայն վճարումը ավելի վաղ է ստացվել:

Թողարկվող պարտատոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունք ունեցող անձինք չկան:

Առաջարկի գինը

Արժեթղթերի գինը

Պարտատոմսերի լրիվ գինը յուրաքանչյուր 100 միավոր անվանական արժեքի դիմաց, տեղաբաշխման առաջին օրվանից սկսած հաշվարկվում է հետևյալ կերպ՝

$$DP = \frac{C}{f} \sum_{t=1}^N \frac{1}{\left(1 + \frac{y}{100 * f}\right)^{t-1+\tau}} + \frac{100}{\left(1 + \frac{y}{100 * f}\right)^{N-1+\tau}}$$

որտեղ՝

$$\tau = \frac{DSN}{DCC}$$

DP - Պարտատոմսի գինն է,

DSN - գործարքի կատարման օրից (settlement/trade date) մինչև հաջորդ արժեկտրոնի վճարումը մնացած օրերի քանակ համապատասխան պայմանականության դեպքում,

DCC - գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքին հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակ համապատասխան պայմանականության դեպքում,

f- արժեկտրոնի վճարման հաճախականությունն է,

N - հաշվարկման պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվը,

C - տարեկան արժեկտրոնը մեկ պարտատոմսի անվանական արժեքի դիմաց,

Y - մինչև մարում եկամտաբերություն:

Ներդրողները պարտավոր են լիցենզավորված որևէ հաշվի օպերատորի մոտ բացել արժեթղթերի հաշվառման անձնական արժեթղթերի հաշիվ և կրել վերջինիս հետ կապված ծախսերը:

Հետևյալ հղումով ներդրողը կարող է տեսնել այն պահառուների անվանումները և գտնվելու վայրերը, բացառությամբ Կենտրոնական Բանկի, որտեղ կարելի է արժեթղթերի հաշիվ բացել՝ https://cda.am/am/depository_account_operators:

Տեղաբաշխման պլանը

Ներդրողների խմբերը

Առաջարկն արվում է ՀՀ-ում և ուղղված է ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական, իրավաբանական անձանց, նաև ներդրումային ֆոնդերին:

Հայտերի բավարարման մասին տեղեկացումը

Ֆոնդային բորսայից դուրս տեղաբաշխման դեպքում ներդրողները Թողարկողից տեղեկացվում են իրենց հայտ-հանձնարարականների բավարարման մասին մինչև հայտ-հանձնարարականի ներկայացման օրվան հաջորդող աշխատանքային օրվա ավարտը: Հայտ-հանձնարարականների բավարարման մասին ներդրողին տեղեկացումը տրամադրվում է այն կապի միջոցով, որով ներդրողը Թողարկողին է ներկայացրել պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականները:

Տեղաբաշխումը

Չերաշխավորված տեղաբաշխման պայմանագիրը

Չերաշխավորված տեղաբաշխում իրականացնելու կապակցությամբ Թողարկողը կնքել է «Պարտատոմսերի տեղաբաշխման ծառայությունների մատուցման մասին» պայմանագիր «Դայմենշն» փակ բաժնետիրական ներդրումային ընկերության հետ (գրանցված ԿԲ-ի կողմից, գրանցման համար 14, լիցենզիա 0014, գրանցման հասցե՝ ՀՀ, գ. Երևան, Բաղրամյան 2, 27/1 ոչ բնակելի տարածք):

Համաձայն կնքված պայմանագրի՝ «Դայմենշն» ՓԲԸ-ն պարտավորվել է լավագույն ջանքերի գործադրմամբ տեղաբաշխել Թողարկողի կողմից թողարկվող անվանական արժեկտրոնային ոչ փաստաթղթային պարտատոմսերը:

Տեղաբաշխման պայմանները

Համաձայն Թողարկողի և Տեղաբաշխողի միջև կնքված արժեթղթերի չերաշխավորված պայմանագրի Տեղաբաշխման վճարը կազմում է տեղաբաշխված ծավալի 0.85 տոկոսը:

Տեղաբաշխումը իրականացվելու է արտաբորսայական եղանակով, իսկ պարտատոմսերի դիմաց անհրաժեշտ է վճարում կատարել թողարկման նպատակով «Շտիգեն» ՍՊԸ-ի անունով բացված բանկային հաշվեհամարին:

Թողարկողի պարտատոմսերի նկատմամբ իրավունքների և պարտավորությունների հաշվառումն ու (կամ) գրանցումն (սեփականատերերի/անվանատերերի ռեեստրի վարում) իրականացվելու է Դեպոզիտարիայի միջոցով, որը հանդես է գալիս որպես անվանական արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրավար՝ վերջինիս համակարգում գործող որևէ Հաշվի օպերատորի միջնորդությամբ:

Պարտատոմսերը կարող են հաշվառվել նաև ԿԲ կողմից լիցենզավորված որևէ պահառուի կողմից (այսուհետ նաև **Դեպոզիտարիայի ենթապահառու**)՝ այդ պահառուի մոտ պարտատոմսերի սեփականատիրոջ/անվանատիրոջ համար արժեթղթերի հաշիվ բացելու և վարելու միջոցով:

Դեպոզիտարիայի հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Վ. Սարգսյան 26/1, Էրեբունի Պլազա բիզնես կենտրոն, 5-րդ հարկ (հեռ.՝ +374 60 615 555, +374 10 543 321):

Մինչև պարտատոմսերի ձեռքբերումը ներդրողները պարտավոր են Դեպոզիտարիայում կամ լիցենզավորված որևէ այլ ենթապահառուի մոտ բացել արժեթղթերի հաշիվ:

13. Առևտրի թույլտվությունը և առևտրի կազմակերպումը

Սույն Ազդագիրը ՀՀ ԿԲ կողմից գրանցելուց և պարտատոմսերը տեղաբաշխելուց հետո Թողարկողը պարտադիր դիմելու է Բորսային տեղաբաշխված պարտատոմսերը կարգավորվող շուկայում առևտրի թույլտվություն ստանալու և/կամ ցուցակելու համար: Ընդ որում պարտատոմսերը կարգավորվող շուկայում առևտրի թույլտվություն ստանալու և/կամ ցուցակելու դիմումը կարող է չբավարարվել Բորսայի կողմից:

Պարտատոմսերի առևտրի թույլտվություն չստանալու դեպքում, տեղաբաշխումը կհամարվի չեղյալ և պարտատոմսերի ձեռքբերման հայտերի հիման վրա դրանց դիմաց կատարված վճարումները կվերադարձվեն 10 աշխատանքային օրվա ընթացքում: Տեղաբաշխման արդյունքում առևտրի թույլտվություն ստանալու համար Բորսայի կողմից սահմանված նվազագույն անհրաժեշտ ծավալը չբավարարելու դեպքում՝ տեղաբաշխումը կհամարվի չեղյալ իր հետագա գործընթացներով: Պարտատոմսերի առևտրի թույլտվություն չստանալու դեպքում, մինչև փաստացի վճարման օրը կուտակված արժեկտրոնային եկամուտները ևս ենթակա են վերադարձման գնորդներին:

Այս պահին Թողարկողի կողմից սույն Ազդագրով գրանցվող պարտատոմսերը թույլատրված չեն հրապարակային առևտրի ոչ մի շուկայում:

Թողարկողը մասնագիտացված անձանց հետ դեռ չի կնքել երկրորդային շուկայում շուկա ստեղծողի (մարքեթ մեյքերի) ծառայություններից օգտվելու վերաբերյալ պայմանագիր:

Բորսայի կողմից տեղաբաշխված պարտատոմսերը առևտրի թույլտվություն ստանալու և/կամ ցուցակելու դեպքում Թողարկողը պարտավորվում է մասնագիտացված անձանց հետ կնքել երկրորդային շուկայում շուկա ստեղծողի պայմանագիր:

Թողարկողը պարտավորվում է մասնագիտացված անձանց հետ երկրորդային շուկայում շուկա ստեղծողի պայմանագրի կնքումից հետո ողջամիտ ժամկետում տեղեկացնել իր պարտատոմսերի սեփականատերերին և անվանատերերին նման պայմանագրի ուժի մեջ մտնելու վերաբերյալ:

14. Լրացուցիչ տեղեկատվություն

Բացի սույն Ազդագրում ներկայացված Թողարկողի պատմական ֆինանսական հաշվետվություններից (2021, 2022, 2023 թվականների համար), որոնք ենթարկվել են աուդիտի անկախ աուդիտորական ընկերությունների կողմից, սույն Ազդագրում ներկայացված այլ տեղեկատվություն չի ենթարկվել աուդիտի անկախ աուդիտորական ընկերությունների կողմից: Հաշվետվությունների և դրանց վերաբերյալ անկախ աուդիտորական կազմակերպությունների կողմից տրված եզրակացությունների պատճենները ներկայացված են հավելված 3-ում:

Խորհրդատուներ

Սույն Ազդագրի պատրաստման ընթացքում Թողարկողը չի օգտվել երրորդ անձ խորհրդատուների ծառայություններից՝ բացի Տեղաբաշխողի կողմից մատուցվող տեղաբաշխման ծառայությունից:

Փորձագետների մասնագիտական կարծիքը և այլ անձանցից ստացված տեղեկությունները

Թողարկողը չի օգտվել երրորդ անձ փորձագետի կամ խորհրդատուի ծառայություններից և չի օգտագործել վերջիններիս մասնագիտական կարծիքը սույն Ազդագրում:

Պարտատոմսերով նախատեսված պարտավորությունների երաշխավորողի վերաբերյալ տեղեկություններ

Պարտատոմսերով նախատեսված պարտավորությունների երաշխավորող չկա, քանի որ տեղաբաշխվող պարտատոմսերն առանց ապահովման են:

Թողարկողի վարկանիշը

Թողարկողը վարկանշող կազմակերպությունների կողմից չի վարկանիշավորվել:

ԲԱԺԻՆ 3.ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

15. Անկախ աուդիտորները

Կազմակերպության 2023, 2022, և 2021 թվականների անկախ աուդիտորական ստուգումն իրականացրել է «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ աուդիտորական ընկերությունը:

«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ -ի հասցեն է՝ Հայաստան, 0010, Երևան Հանրապետության փող., 22 շենք, 5-րդ հարկ, հեռ.՝ +(374 10) 582 478, 544 301, 544 307, էլ. հասցե՝ info@bakertillyarmenia.com, ինտերնետային կայքի հասցեն է՝ www.bakertilly.am:

Աուդիտորական կազմակերպության գլխավոր տնօրենն է Վահե Գևորգյանը:

Աուդիտորական կազմակերպությանն ընտրությունն իրականացվում է մրցույթի հայտարարման միջոցով: Աուդիտի նպատակն է ձեռք բերել բավարար երաշխիքներ ֆինանսական հաշվետվությունների էական անճշտություններից զերծ լինելու և միջազգային ստանդարտներին համապատասխանելու մասին: Աուդիտորական կազմակերպության եզրակացությունները ներկայացված են կից Հավելվածներում:

16. Ռիսկային գործոններ

Գոյություն ունեն Թողարկողին և վերջինիս գործունեության ոլորտին հատուկ մի շարք գործոններ, որոնք կարող են ուղղակի կամ անուղղակի ձևով ազդեցություն ունենալ թողարկված արժեթղթերի ռիսկայնության մակարդակի վրա:

Ներդրողները պետք է որոշում կայացնեն՝ լիովին գիտակցելով ներդրումների բնույթն ու դրանցից բխող հիմնական ռիսկերը՝ ելնելով իրենց փորձից, նպատակներից, ֆինանսական ռեսուրսներից, ռիսկերի նկատմամբ հակվածության աստիճանից և այլ գործոններից:

Ներդրողները պետք է հասկանան նաև, որ Ազդագիրը չի կարող ներկայացնել Թողարկողի գործունեության հետ կապված բոլոր ռիսկերը: Թողարկողին առնչվող ռիսկերը կապված են նրա ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների հետ և արտահայտվում են ստանձնած պարտավորությունները սահմանված ժամկետներում ամբողջությամբ կամ մասամբ չկատարելու հանգամանքով: Թողարկողի բնականոն գործունեությանը սպառնացող ռիսկեր կարող են առաջացնել նաև արտաքին գործոնները: Թողարկողի գործունեությանն առնչվող ռիսկերը կարող են հանգեցնել պարտատոմսերի գնի նվազմանը:

Մրցակցային ռիսկ

«Շտիգեն» ՍՊԸ-ն առաջատար ընկերություններից մեկն է արևային էներգետիկայի լուծումների և տեխնոլոգիաների ներդրման ոլորտում՝ զբաղեցնելով «Շտիգեն» ՍՊԸ-ի ավելի քան 20%-ը:

Արևային էներգետիկայի ոլորտում գործունեություն են ծավալում 3-4 խոշոր ընկերություններ, իսկ մնացած մրցակիցների մեծ մասը փոքր և միջին ընկերություններն են: Որոշ փոքր և միջին ընկերություններ մրցակցությանը դիմանալու նպատակով հաճախ ներկրում են ավելի էժան և ցածրորակ վահանակներ: Սա հաճախ հանգեցնում է հաճախորդների վստահության նվազմանը արևային վահանակների արդյունավետության նկատմամբ: «Շտիգեն» ՍՊԸ-ն հավատարիմ է իր առաջարկած ապրանքների և ծառայություններին որակին, նույնիսկ եթե դա արվում է շահույթի հաշվին՝ ըստ այդմ պահպանելով շուկայում իր բարձր համբավը, առաջատար դիրքն ու կայունությունը:

Հազեցվածության ռիսկ

Համաձայն ՀՀ կառավարության որոշման (<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=149279>) ՀՀ-ում մինչև 2030թ. արևային էներգիայի արտադրության մասնաբաժինը ընդհանուրի մեջ պետք է հասցնել մինչև 15%: Հարկ է նշել որ վերջին տարիների առավել մեծ աճի տեմպի, ինչպես նաև ֆինանսական համակարգի և ՀՀ կառավարության կողմից տարբեր ծրագրերի իրականացման հետևանքով, շուկայի աճի տեմպերը գերազանցում են պլանավորված տեմպերին: Համաձայն ՀԾԿ տրամադրված հաշվետվությունների, եթե 2023 թ-ի առաջին կիսամյակում արևային էներգիայի մասնաբաժինը ընդհանուրի մեջ կազմում էր 4.2%, ապա 2024 թ նույն ժամանակահատվածի համար այն հասնում է արդեն մոտ 8%: (https://psrc.am/contents/fields/electric_energy/el_energy_reports): Վերը նշված թվերը չեն ներառում ինքնավար արտադրողների այն ծավալները, որոնք որ սպառվել են սեփական կարիքների համար: Տարբեր գնահատականներով այն կազմում է մոտ 4-5%:

Արևային կայանների աճի նման տեմպերը կարող են հանգեցնել ընդհանուր ցանցի ծանրաբեռնվածության՝ մասնավորապես ամառվա ամիսների ցերեկային ժամերին, որի հետևանքով կարող են նկատվել արևային վահանակների նոր վաճառքների տեմպերի նվազում ապագայում: Այսպիսի պայմաններում ընկերության զարգացումն ու աճը կարող են դանդաղել: Արևային վահանակներ

ներկրող ընկերությունները հանդիպում են հազեցվածության ռիսկի հատկապես ամռանը ցերեկային ժամերին, երբ կլանվող էլեկտրաէներգիայի ծավալը հասնում է առավելագույնին: Այստեղ խնդիր է առաջանում տվյալ ժամանակահատվածում սպառողների պահանջարկի բավարարման համար, ինչը հանգեցնում է ոլորտի հազեցվածության ռիսկի: Ընկերությունը ընդունել է աշխարհագրական դիվերսիֆիկացիայի ռազմավարություն և մասնավորապես արդեն իսկ հիմնադրել է համանման ընկերություններ Վրաստանի հանրապետությունում, որտեղ արևային էներգետիկան գրեթե զարգացած չէ և կան աճի մեծ հեռանկարներ:

Օրենսդրական ռիսկ

Վերականգնվող, մասնավորապես արևային էներգիայի ոլորտում օրենսդրական փոփոխությունները (օրինակ՝ հարկեր, սուբսիդիաների կրճատում, նոր արտոնագրեր կամ սահմանափակումներ) կարող են ազդել ընկերության վրա: Օրենսդրական կարգավորումների փոփոխությունները կարող են բարձրացնել ծախսերը և/կամ նվազեցնել շահութաբերությունը: ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը սահմանում է սակագին, որն իր ազդեցությունն ունի շուկայի ընդհանուր պահանջարկի և առաջարկի վրա: Սա նաև կարգավորման ռիսկ է, որի հետ բախվում են արևային վահանակներ ներկրող ընկերությունները սակագների փոփոխման արդյունքում:

Արտարժույթային ռիսկ

Արտարժույթների փոխարժեքների փոփոխությունները կարող են ազդել Ընկերության ծախսերի և շահույթի մեծության վրա, մասնավորապես, համապատասխան նյութերը և տեխնոլոգիաները ներմուծվում են արտերկրից, վճարելով օրինակ՝ ԱՄՆ դոլարով չինական իենով: Ընկերությունը ներկրում է արևային վահանակներ և էլեկտրական ավտոմեքենաներ Չինաստանից և ունենում է արտարժույթային ռիսկ իր մատակարարներին վճարումներ կատարելիս: ՀՀ դրամի կայունությունը կարևոր նշանակություն ունի ընկերության արտարժույթային ռիսկը կառավարելիս: Ընկերությունն ունենում է բաց արտարժույթային դիրքեր, որոնք արտացոլվում են ընկերության հաշվեկշռում: Ընկերությունը նման ռիսկերից խուսափելու համար աշխատում է շատ մեծ պահեստային մաս չձևավորել, այլ աշխատել առավել դինամիկ՝ խուսափելու արտարժույթի հնարավոր տատանման հետևանքով առաջացած վնասներից: Աշխատանքներ են տարվում արտարժույթային ռիսկի հեջավորման գործիքակազմի ներդրման ուղղությամբ ևս:

Լոգիստիկ ռիսկեր

Արտասահմանից ներմուծվող ապրանքների (օրինակ՝ արևային վահանակների և տեխնոլոգիաների) մատակարարման հապաղումները կամ մաքսային վարչարարական հնարավոր խնդիրները կարող են բարդացնել կամ դանդաղեցնել նախագծերի իրականացումը: Ընկերությունը աշխատում է արդյունավետ կառավարել ապրանքային պաշարների իր մնացորդներն այնպես, որպեսզի նման հնարավոր ֆորս մաժորային իրավիճակներում կարողանա բավարարել անհրաժեշտ առաջնային պահանջարկը հաճախորդների համար ողջամիտ ժամանակահատվածում՝ միևնույն ժամանակ չունենալով ապրանքանյութական չափից ավելի պաշարներ:

Վարկային/դեֆոլտի ռիսկ

Ընկերությունը 2024 թ-ի երկրորդ եռամսյակի դրությամբ ունի մոտ 579 մլն երկարաժամկետ և 736 մլն կարճաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ:

Կարճաժամկետ վարկի հիմնական նպատակը դա Մասրիկ 1 արևային կայանի աշխատանքների և ծառայությունների հետ կապված ֆինանսավորումն է, որի մարումը ակնալվում է իրականացնել աշխատանքների և ծառայությունների ավարտից և Մասրիկի կողմից վճարումների կատարումից հետո:

Կարճաժամկետ փոխառությունների նպատակն է խթանել ընկերության շրջանառության ավելացումը:

Հարկ է նշել որ 2024 թ-ի երրորդ եռամսյակում արդեն ընկերությունը համարել է իր կանոնադրական կապիտալը ևս 100 մլն ՀՀ դրամով՝ դրանով իսկ ամրապնդելով իր ֆինանսական կայության աստիճանը, ինչպես նաև հիմք ստեղծել հետագայում առավել խոշոր և գրավիչ պայմաններով ներգրավվել փոխառումիջոցներ, այդ թվում նաև թողարկել պատատոմսեր:

Ընկերությունն ակտիվորեն օգտվում է ֆինանսական շուկայում առկա գործիքներից և պատշաճ կատարում թե կարճաժամկետ և թե երկարաժամկետ պարտավորություններն գործընկերների և ֆինանսական հաստատությունների նկատմամբ: Եվ չնայած ընկերություն երկրորդ եռամսյակի վերջի դրությամբ բարձր կախվածության գործակցի (50.58), որը հիմնականում պայմանավորված է Մասրիկ 1 արևային կայանի շինարարության հետ, ընկերությունը հարկ եղած պարագայում կարող է նվազեցնել այդ գործակիցը՝ նվազեցնելով շրջանառության ծավալները:

Որպեսզի առավել մատչելի և կանխատեսելի լինեն ըներության փոխառու միջոցները, կայացվել է որոշում լրացնել փոխառու միջոցները նաև պարտատոմսերով, որի արդյունքում թե կնվազի փոխառու միջոցների ինքնարժեքը և թե կերկարի այդ միջոցների ժամկետայնությունը:

Իրացվելիության ռիսկ

Ընկերության ընդհանուր իրացվելիության գործակիցը (ընթացիկ ակտիվներ/կարճաժամկետ պարտավորություններ) կազմում է 1.05: Ընդ որում հարկ է նշել, որ ընկերության միջին բիզնես ցիկլը տևում է մոտ 4-5 ամիս, իսկ կարճաժամկետ պարտավորությունները մոտ 6 ամիս և ավելին: Ընկերության ակտիվեր ֆինանսավորվում են կապիտալից բացի վարկերի, փոխառություններ, առևտրային և կրեդիտորական պարտքերի միջոցով, որը կարող է առաջացնել իրացվելիության ռիսկեր: Այուամենայնիվ, Ընկերությունը կարողանում է կառավարել իր դրամական հոսքերն այնպես, որ համապատասխանեցնի իր պատավորությունների և ակտիվներ ժամկետայնությունները:

Գործառնական ռիսկ

Գործառնական ռիսկը կարող է ի հայտ գալ ներքին գործընթացների, համակարգերի խափանմամբ, մարդկային գործոնի կամ արտաքին գործոնների բացասական ազդեցության արդյունքում, ինչը կարող է բերել Թողարկողի կապիտալի և/կամ շահույթի կորստի: Գործառնական ռիսկի հետևանքով կարող է վտանգվել նաև Թողարկողի համբավը:

Ինչպես արդեն նշվեց, բարձ անհի տեմպերի արդյունքում ընկերությունը թևակոխում է զարգացման մեկ այլ փուլ, որտեղ առաջացել է անհրաժեշտություն ներդնելու տարբեր համակարկներ, այդ թվում հաճախորդների հետ հարաբերությունների կառավարման արդի համակարգ՝ անգլ. CRM: Նման համակարգերի ներդրումը մի կողմից պայմանավորված է դրանց անհրաժեշտությամբ՝ հաճախորդների առավել որակյալ և ժամանակին սպասարկման համար, մյուս կողմից՝ հղի է փոփոխությունների հետևանքով առաջացած գործառնական սխալներով: Ընկերությունը մասնագետներ է

ներգրավում նման փոփոխություններն առավել սահուն իրականացնելու և գործընթացը բարեհաջող ավարտին հասցնելու համար:

Արդարքին ռիսկեր

Ներկա պահին ՀՀ կառավարության կողմից ներդրվել են տարբեր ծրագրեր՝ աջակցելու վերականգնվող էներգետիկայի ոլորտի շահառուներին: Նման ծրագրերի անբարենպաստ փոփոխությունները կամ դադարեցումները կարող են բացասաբար անդրադառնալ ՀՀ-ում արևային էներգետիկայի ոլորտի ընկերությունների գործունեության վրա:

Ինչպես արդեն նշվեց, Շտիգեն ՍՊԸ-ն արդեն իսկ իրականացրել է քայլեր և այժմ ակտիվորեն աշխատում է տարածաշրջանում իր գործունեությունը ընդլայնելու ուղղությամբ՝ նվազեցնելով հնարավոր արտաքին ռիսկերի ազդեցություններն ընկերություն ցուցանիշների վրա:

17. Տեղեկատվություն Թողարկողի մասին

Թողարկողի լրիվ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ «Շտիգեն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

ռուսերեն՝ «Штиген» общество с ограниченной ответственностью

անգլերեն՝ “Shtigen” Limited Liability Company

Թողարկողի կրճապ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ «Շտիգեն» ՍՊԸ

ռուսերեն՝ "Штиген" ООО

անգլերեն՝ “Shtigen” LLC

Թողարկողի պետական գրանցման վայրն է՝

Թողարկողը գրանցված է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում, գրանցման համարը՝ 273.110.48849

Թողարկողի գտնվելու վայրն է՝

ՀՀ, ք. Երևան, 0069, Դավիթ Անհաղթ 23, տարածք 6

Ստեղծման տվյալներ՝

Ստեղծման տվյալներ՝

Շտիգեն ՍՊԸ (Shtigen LLC) Հայաստանի առաջատար արևային էներգիայի ընկերություններից մեկն է, որն առաջարկում է վերականգնվող էներգիայի լուծումներ: Այն հիմնադրվել է 2011 թվականին և ունի մի քանի դուստր ընկերություններ, որոնք զբաղվում են տարբեր բնագավառներում ներդրումներով, E-mobility-ի զարգացմամբ ՀՀ-ում և խորհրդատվական ծառայություններով:

Շտիգեն ՍՊԸ-ն մասնագիտացած է արևային էներգիայի տարբեր համակարգերի նախագծման, տեղադրման և սպասարկման մեջ: Դրանք ներառում են ցանցին միացած (on-grid), ցանցից անջատ (off-grid) և հիբրիդային համակարգեր:

Ընկերությունը համագործակցում է տարբեր ընկերությունների և կազմակերպությունների հետ՝ տեղադրելով խոշոր արևային կայաններ, ինչպիսիք են Գեղարքունիքի մարզի Աղբերք համայնքում կառուցված 5 ՄՎտ հզորությամբ կայանը:

Կազմակերպությունն իրավաբանական գրանցում է ստացել 2011 թվականի հոկտեմբերի 13-ին:

Կապի միջոցները՝

հեռ. +(374 11) 230023

էլ. Փոստ՝ info@shtigen.com

ինտերնետային կայք՝ shtigen.com

Թողարկողի հիմնադրման երկիրը՝ Հայաստանի Հանրապետություն

Թողարկողի մասնաճյուղերը՝ մասնաճյուղեր չունի

Ներդրումները

Պատմական ֆինանսական ժամանակաշրջանի ընթացքում և դրանից հետո մինչև Ազդագիրը գրանցման ներկայացնելու ամսաթիվը կազմակերպության կողմից էական ներդրումներ չեն կատարվել:

Կազմակերպության կառավարման մարմինները չեն ստանձնել որևէ պարտավորություն ապագայում էական ներդրումներ իրականացնելու վերաբերյալ:

18. Բիզնեսի նկարագիրը

18.1 Հիմնական գործունեությունը

«Շտիգեն» ՍՊԸ-ն առաջարկում է էներգետիկ անկախություն ձեռք բերելու համակարգային լուծումներ՝ ներառելով արևային տեխնոլոգիաներով աշխատող սարքեր (արևային վահանակ, ջրատաքացուցիչ, գեներատոր), ջեռուցման և հովացման համակարգեր, կուտակիչ մարտկոցներ:

Իր բիզնես նպատակներին հասնելու համար, ընկերությունը արդեն 10+ տարի է ինչ համագործակցում է արևային համակարգեր և սարքավորումներ արտադրող այնպիսի հայտնի ընկերությունների հետ ինչպիսիք են Huawei, Kstar, Hozon/Neta, Gecko, Hyundai, PhonoSolar, Fronius, Longi և մի շարք այլ առաջատար ընկերությունների հետ:

Ընկերությունը նախագծել, կառուցել ու սպասարկում է տարածաշրջանի խոշորագույն արևային ջերմային կայանը (Grand Sport), ինչպես նաև Հայաստանի խոշորագույն արևային կայանները (Masrik-1, Solar 5, Green Energy, ArSun):

«Շտիգեն» ՍՊԸ-ն կարևորում է էկոլոգիապես գիտակից հասարակություն ձևավորելու անհրաժեշտությունը, որը կունենա նորագույն էներգետիկայի և

էներգաարդյունավետ լուծումների վերաբերյալ պատշաճ գիտելիքներ, ուստի այդ ուղղությամբ ևս ջանքեր են գործադրվում:

Կազմակերպությունը մշտապես կատարելագործում է իր գործունեությունը՝ համապատասխանեցնելով շուկայի պահանջներին, և աշխատանքներ է տանում առաջարկվող պրոդուկտների տեսականին ընդլայնելու ուղղությամբ:

18.2 Հիմնական շուկաները

Թողարկողի ծառայությունների մատուցման հիմնական շուկաների նկարագիրը

Ընկերությունը ծառայություններ է մատուցում հիմնականում Հայաստանի Հանրապետությունում և Վրաստանում:

Մրցակցային դիրքի նկարագրությունը

ՀՀ շուկայում «Շտիգեն» ՍՊԸ-ն առաջատար ընկերություններից մեկն է արևային էներգետիկայի լուծումների և տեխնոլոգիաների ներդրման ոլորտում՝ զբաղեցնելով ՀՀ շուկայի ավելի քան 20%-ը:

Արևային էներգետիկայի ոլորտում գործունեություն են ծավալում 3-4 խոշոր ընկերություններ, իսկ մնացած մրցակիցների մեծ մասը փոքր և միջին ընկերություններն են: Որոշ փոքր և միջին ընկերություններ մրցակցությանը դիմանալու նպատակով հաճախ ներկրում են ավելի էժան և ցածրորակ վահանակներ: Սա հաճախ հանգեցնում է հաճախորդների վստահության նվազմանը արևային վահանակների արդյունավետության նկատմամբ: «Շտիգեն» ՍՊԸ-ն հավատարիմ է իր առաջարկած ապրանքների և ծառայություններին որակին, նույնիսկ եթե դա արվում է շահույթի հաշվին՝ ըստ այդմ պահպանելով շուկայում իր բարձր համբավը, առաջատար դիրքն ու կայունությունը:


19. Թողարկողի կառուցվածքը

Թողարկողը չի համարվում է խմբի անդամ:

Թողարկողը հանդիսանում է «Շտիգեն» ՍՊԸ-ն:

Ստորև ներկայացված է Ընկերության ներքին ակազմակերպական կառուցվածքը:

Թողարկողի կազմակերպական կառուցվածքը



20. Հիմնական միջոցները

Կազմակերպությունը իր բնականոն գործունեության ապահովման նպատակով ձեռք է բերել հիմնական միջոցներ, օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և ոչ նյութական ակտիվներ, որոնց արժեքի համագումարը չի գերազանցում Կազմակերպության ընդհանուր ակտիվների հաշվեկշռային արժեքի 10%-ը: Կազմակերպության հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը կազմել է 317,131

հազար ՀՀ դրամ, որից արտադրական և տնտեսական գույքի արժեքը կազմել է 59 մլն. ՀՀ դրամ, իսկ Շարժական գույքը՝ 257 մլն. ՀՀ դրամ 30.06.2024թ.-ի դրությամբ:

Կազմակերպության կողմից իր հիմնական միջոցների օգտագործումը սահմանափակող հանգամանքներ առկա չեն:

Կազմակերպության հիմնական միջոցներն ունեցել են հետևյալ կազմը և կառուցվածքը:

30.06.2024	Տնտեսական գույք և այլ հիմնական միջոցներ	Շարժական գույք	Ընդամենը
Սկզբնական արժեք	144,361,845	329,462,991	473,824,837
Կուտակված մաշվածություն	84,374,988	72,318,577	156,693,565
Զուտ հաշվեկշռային արժեք	59,986,857	257,144,414	317,131,271

21. Զարգացման վերջին միտումները


30.06.2024թ.-ի դրությամբ Կազմակերպության ակտիվներն աճել են 1,36 մլրդ. ՀՀ դրամով կամ 44.42%-ով և կազմել 4,5 մլրդ. ՀՀ դրամ 31.12.2023թ.-ի դրությամբ 3,07 մլն ՀՀ դրամի հետ համեմատած:

Թողարկողը համալրել է Ընկերության կանոնադրական կապիտալ 100 մլն. ՀՀ դրամով 2024թ.-ին, որը դրական ազդեցություն է ունեցել Ընկերության Լևերիջի գործակցի վրա:

30.06.2024թ.-ի դրությամբ պարտավորությունների ծավալը կազմել է մոտ 4,35 ՀՀ դրամ՝ 2023թ.-ի դեկտեմբերի 31-ի համեմատ աճելով 51%-ով:

Կազմակերպության ակտիվների, պարտավորությունների, սեփական կապիտալի դինամիկաները 2021–2023թթ. և 2024 թվականի առաջին կեսի ընթացքում ներկայացված են ստորև.

Հաշվեկշռի վերլուծություն



Կազմակերպության գործունեության ցուցանիշների վերաբերյալ առավել ամբողջական պատկերացում կազմելու համար պոտենցիալ ներդրողները կարող են ծանոթանալ Կազմակերպության տարեկան և եռամսյակային հաշվետվություններին, որոնք տեղադրված են Կազմակերպության պաշտոնական կայքի (shtigen.com) «Հաշվետվություններ» բաժնում:

ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ ԿԱՄ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Ընկերության ակտիվների շահութաբերության (ROA) և կապիտալի շահութաբերության (ROE) ցուցանիշների կանխատեսումներն արտացոլված են ստորև բերվող աղյուսակում:

Ցուցանիշներ	2024	2025	2026
Ակտիվների շահութաբերություն (ROA)	5%	6%	7%
Կապիտալի շահութաբերություն (ROE)	35%	40%	48%

Մոտակա տարիների գործունեության և շահույթի կանխատեսումներում Ընկերությունը հիմնվել է հետևյալ հիմնարար սկզբունքների վրա.

- ✓ Ոլորտի ուսումնասիրություն և միտումների բացահայտում. ապագա պահանջարկի գնահատումը օգնում է արդյունավետ պլանավորել ռեսուրսներն ու ներդրումները: Լինելով տեխնոլոգիական նորամուծությունների կենտրոնում, ինչպիսիք են արհեստական բանականությունն և բլոկչեյնը, թույլ են տալիս ընկերությանը մնալ արդիական և շահույթ գեներացնել նոր հնարավորություններից:
- ✓ Հաճախորդակենտրոն մուտեցում. հաճախորդների կարծիքներին առաջնահերթություն տալը մեծացնում է գոհունակությունն ու հավատարմությունը, ինչն էլ նպաստում է դրական արձագանքների վերաբաշխմանը և տարածմանը: Հաճախորդների հետադարձ կապի կանոնավոր հավաքագրումը և համապատասխան քայլեր ձեռնարկելը օգնում են բարելավել ապրանքներն ու ծառայությունները, դրանք ավելի լավ համապատասխան դարձնելով շուկայի

պահանջներին:

- ✓ Հետազոտություն և զարգացում. այսպիսի ներդրումները խթանում են նորարարությունը՝ ընկերությանը հնարավորություն տալով առաջարկել հաճախորդներին գրավիչ առաջադեմ լուծումներ: Ընկերությունը իրականացնում է կանոնավոր թարմացումներ և նոր ապրանքների գործարկում, որոնք ապահովում են ընկերության առաջարկելի ծառայությունների թարմությունն ու մրցունակությունը:

22. Թողարկողի կառավարման մարմինները

Ըստ կազմակերպության կանոնադրության Ընկերության կառավարման մարմիններն են Մասնակիցների ընդհանուր ժողովը, տնօրենների խորհուրդը և Ընկերության միանձնյա գործադիր մարմնի ղեկավարը: Ընկերությունը 2024 թվականի հունիսի 30-ի դրությամբ ունի 177 աշխատակից:

1. Մասնակիցների ընդհանուր ժողով

Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովն է,

Տարեկան ժողովը գումարվում է հերթական ֆինանսական տարվա ավարտից հետո 6 ամսվա ընթացքում:

Ժողովի որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցող՝ քվեարկող բաժնեմասերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ, եթե «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով ձայների ավելի շատ քանակ սահմանված չէ:

Ժողովի իրավասություններն են՝

- 1) կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը, կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ.
- 2) Ընկերության տնօրենների խորհրդի ձևավորումը, խորհրդի անդամների նշանակումը կամ լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.
- 3) Ընկերության գործադիր մարմնի (միանձնյա կամ կոլեգիալ) ձևավորումը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.
- 4) Ընկերության վերակազմակերպումը.
- 5) Ընկերության լուծարումը.
- 6) ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը.
- 7) բաժնեմասերի անվանական արժեքի փոքրացման, բաժնեմասերի ընդհանուր քանակի կրճատման նպատակով Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնեմասերի ձեռքբերման, ինչպես նաև Ընկերության կողմից ձեռք բերված բաժնեմասերի մարման ճանապարհով կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը.
- 8) բաժնեմասերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնեմասերի տեղաբաշխման միջոցով կանոնադրական կապիտալի չափի ավելացումը.
- 9) Ընկերության գործադիր մարմնի (միանձնյա կամ կոլեգիալ) ձևավորումը, լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, ինչպես նաև Ընկերության գործադիր մարմնի լիազորությունները ժամանակավորապես իրականացնող պաշտոնատար անձի նշանակումը.
- 10) Ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատումը.
- 11) Ընկերության վերստուգիչ հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրությունը և նրանց (նրա) լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Ընկերության վերստուգիչ հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրության հարցերը ժողովին վերապահված լինելու դեպքում քննարկվում են բացառապես տարեկան ժողովներում: Ընկերության վերստուգիչ հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրության հարցն արտահերթ ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել Ընկերության վերստուգիչ հանձնաժողովի (վերստուգողի) կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին.

12) Ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը: Նշված հարցերը քննարկվում են բացառապես տարեկան ժողովներում: Եթե սահմանված ժամկետում տարեկան ժողովը տեղի չի ունեցել, ապա արտահերթ ժողով կարող է հրավիրվել միայն Ընկերության լուծարման կամ սույն ենթակետում նշված հարցերը քննարկելու համար: Նշված հարցերով հրավիրված արտահերթ ժողովում այլ հարցեր քննարկվել չեն կարող, բացառությամբ սույն ենթակետում նշված հարցերով կայացված որոշումներով պայմանավորված կանոնադրական կապիտալի նվազեցման դեպքերի:

13) ժողովի վարման կարգի հաստատումը.

14) հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը.

15) խոշոր գործարքների կնքման մասին որոշման ընդունումը.

16) Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնեմասերի ձեռքբերումը և հետգնումը.

17) Ընկերության ղեկավար պաշտոնատար անձանց աշխատանքի վարձատրության պայմանների որոշումը.

18) օրենքով և կանոնադրությամբ նախատեսված այլ որոշումների ընդունումը:

2. Ընկերության Տնօրենների խորհուրդ

Ընկերության տնօրենների խորհուրդը ստանձնում է Ընկերության ձեռնարկատիրական գործունեության առաջնորդումը և ռազմավարական կառավարումը:

Տնօրենների խորհուրդը պատասխանատու է գործադիր մարմնի և Ընկերության գործունեության վերահսկողության համար: Տնօրենների խորհուրդը նաև խորհրդատվություն է մատուցում գործադիր մարմնին: Իրենց պարտականություններն իրականացնելիս տնօրենների խորհրդի անդամները պետք է առաջնորդվեն Ընկերության շահերով:

Ընկերության տնօրենների խորհրդի բացառիկ լիազորություններն են՝

- 1) Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների, ներառյալ՝ կորպորատիվ քաղաքականությունների որոշումը, ռազմավարական և տարեկան գործարար ծրագրերի ու դրանց կատարողականների հաստատումը.
- 2) Ընկերության տարեկան հաշվետվությունների հաստատումը.
- 3) Ընկերության կառավարման պրակտիկայի, գործունեության արդյունավետության գնահատումը և անհրաժեշտության դեպքում փոփոխությունների առաջարկումը.
- 4) ներքին հսկողության պատշաճ համակարգերի, մասնավորապես ռիսկերի, ֆինանսական և հաշվապահական հսկողության, իրավական համապատասխանության համակարգերի պատշաճ գործունեության ապահովումը.
- 5) տարեկան և արտահերթ ժողովների գումարումը.
- 6) մասնակիցների ժողովների օրակարգի հաստատումը.
- 7) ժողովներին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակը կազմելու տարվա, ամսվա, ամսաթվի հաստատումը, ինչպես նաև բոլոր այն հարցերի լուծումը, որոնք կապված են ժողովների նախապատրաստման ու գումարման հետ և վերապահված են խորհրդի իրավասությանը՝ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համապատասխան.
- 8) Ընկերության վերստուգիչ հանձնաժողովի անդամների կամ վերստուգողի (ներքին աուդիտորի) վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի և պայմանների վերաբերյալ ժողովի համար առաջարկությունների նախապատրաստումը,
- 9) Ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատմանը վերաբերող առաջարկությունների ներկայացումը ժողովին և նրա վճարման չափի սահմանումը.
- 10) Ընկերության բաժնեմասերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ ժողովին առաջարկությունների նախապատրաստումը.
- 11) Ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին այն փաստաթղթերի հաստատումը, որոնք վերապահված չեն մասնակիցների ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը և որոնց վերապահումը գործադիր մարմնին արգելված է «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքով.

12) «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքով և սույն կանոնադրությամբ ու Ընկերության ներքին իրավական ակտերով իր իրավասությանը վերապահված այլ հարցերի լուծումը:

3. Գործադիր մարմին՝ տնօրեն

Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Ընկերության տնօրենը, ով գործում է «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր իրավասությունների շրջանակներում:

Ընկերության տնօրենը հաշվետու է Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովին և տնօրենների խորհրդին:

Ընկերության տնօրենը՝

- 1) տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Ընկերության անունից.
- 2) ներկայացնում է Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում.
- 3) գործում է առանց լիազորագրի.
- 4) տալիս է լիազորագրեր.
- 5) սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային.
- 6) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.
- 7) սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Ընկերության աշխատակիցներին.
- 8) Ընկերության աշխատակիցների դրամական և ոչ դրամական խրախուսումների սահմանումը.
- 9) աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ.
- 10) իրականացնում է «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքով և սույն կանոնադրությամբ ու Ընկերության ներքին իրավական ակտերով իր իրավասությանը վերապահված այլ գործառույթներ:

23. Թողարկողի կառավարման մարմինների անդամները և գործունեությունը

Կազմակերպության բաժնետերն է ՀՀ քաղաքացի Հայկ Շեկյանը:
Կազմակերպության կառավարման մարմինը ընկերության խորհուրդն է:

Խորհրդի անդամներ՝

N	Անուն, Ազգանուն	Զբաղեցրած պաշտոնը	Բնակության վայր	Իրավասություններն ու պարտականությունները	Կազմակերպության գործունեությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Փորձառությունը
1	Հայկ Շեկյան	Խորհրդի նախագահ	ՀՀ, ք. Երևան	համաձայն կազմակերպության կանոնադրության	Armenia-India Business Council (AIBC)-ի համահիմնադիր	24 տարի
2	Տիգրան Գասպարյան	Խորհրդի անդամ	ՀՀ, ք. Երևան	համաձայն կազմակերպության կանոնադրության	Պրոֆիքս Բոնասալթինգ ՍՊԸ – 2016-2024 թթ (գործադիր տնօրեն)	12 տարի
3	Սոֆյա Սարգսյան	Խորհրդի անդամ	ՀՀ, ք. Երևան	համաձայն կազմակերպության կանոնադրության	Աշխատում է Synopsys Armenia ընկերությունում	20 տարի

4	Վախթանգ Աբրահամյան	Խորհրդի անդամ	ՀՀ, ք. Երևան	համաձայն կազմակերպության կանոնադրության	Fastex-ի գլխավոր տնօրեն	16 տարի
5	Հայկ Գրիգորյան	Խորհրդի անդամ	ՀՀ, ք. Երևան	համաձայն կազմակերպության կանոնադրության	SharpeMachine, LLC-ի հիմնադիր և տնօրեն	10 տարի

Գործադիր անդամներ՝

Անուն, Ազգանուն	Զբաղեցրած պաշտոնը	Բնակության վայր	Իրավասություններն ու պարտականությունները	Կազմակերպության գործունեությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Փորձառությունը
Հայկ Շեկյան	Գլխավոր տնօրեն և հիմնադիր	ՀՀ, ք. Երևան	համաձայն կազմակերպության կանոնադրության	Armenia-India Business Council (AIBC)-ի համահիմնադիր	24 տարի
Արշավիր Մկրտչյան	Գլխավոր ֆինանսական տնօրեն	ՀՀ, ք. Երևան	համաձայն կազմակերպության կանոնադրության	Կազմակերպության գործունեությունից դուրս այլ գործունեություն չի ծավալում	34 տարի
Լեյլա Առաքելյան	ՄՌԿ և կորպորատիվ մշակույթի ղեկավար	ՀՀ, ք. Երևան	համաձայն կազմակերպության կանոնադրության	Կազմակերպության գործունեությունից դուրս այլ	17 տարի

				գործունեություն չի ծավալում	
--	--	--	--	-----------------------------	--

Ընկերության և նրա կառավարման մարմինների անդամների միջև սույն փաստաթղթի ներկայացման պահի դրությամբ շահերի բախման դեպքեր և հիմքեր չկան:

Ընկերությունը հետևում է ՀՀ-ում ընդունված կորպորատիվ կառավարման սկզբունքներին և գիտակցում է, որ արժեթղթերի շուկա մուտք գործելուց հետո անհրաժեշտ է լինելու ամբողջությամբ բավարարել ՀՀ կորպորատիվ կառավարման սկզբունքներին:

Ընկերության կորպորատիվ կառավարման համար ուղեցույց է հանդիսանում ՀՀ կառավարության կողմից 30.07.2024թ. N 1955-Ն որոշմամբ հաստատված Կորպորատիվ կառավարման կանոնագիրքը:

24. Հսկող անձինք

Ընկերության հսկող անձ է հանդիսանում ՀՀ քաղաքացի Հայկ Շեկյանը, ում պատկանում է Ընկերության 100% բաժնեմասը:

25. Տեղեկատվություն Թողարկողի ակտիվների, պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի մասին

Պարմական ֆինանսական տեղեկատվություն

Ընկերության 2021, 2022 և 2023 թվականների անկախ աուդիտորական եզրակացությամբ հաստատված հաշվետվությունները և 2024թ.-ի աուդիտ չանցած եռամսյակային և տարեկան հաշվետվությունները ներկայացված են սույն Ազդագրի - Հավելված 3-ում: Ցանկության դեպքում ներդրողները Ընկերության ֆինանսական հաշվետվություններին կարող են ծանոթանալ Թողարկողի պաշտոնական ինտերնետային կայքում՝ shtigen.com:

Թողարկողի ֆինանսական վիճակի էական փոփոխությունները

2024թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ Ընկերության կանոնադրական կապիտալը համալրվել է 100 մլն. ՀՀ դրամով:

2023 թվականի դեկտեմբերի 31-ից մինչև ՀՀ ԿԲ-ի կողմից Ազդագիրը գրանցման ներկայացնելու օրն ընկած ժամանակահատվածում Թողարկողի ֆինանսական վիճակի այլ էական փոփոխություն տեղի չի ունեցել:

Դատական, արբիտրաժային և վարչական վարույթների մասին տեղեկատվություն

Ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող 12 ամսվա ընթացքում Ընկերությունը ներգրավված չէ ֆինանսական վիճակի կամ շահութաբերության վրա էական ազդեցություն ունեցող դատական, արբիտրաժային և (կամ) վարչական վարույթներում:

26. Կանոնադրական կապիտալը

26.1. Կանոնադրական կապիտալը

2024թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 100,050,000 (մեկ հարյուր միլիոն հիսուն հազար) ՀՀ դրամ, որը բաղկացած է թվով՝ 100,050 (մեկ հարյուր հազար հիսուն) հատ, յուրաքանչյուրը՝ 1,000 (մեկ հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով բաժնեմասերից:

2024թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ Ընկերության կանոնադրական կապիտալը կազմող 100,050 (մեկ հարյուր հազար հիսուն) հատ, յուրաքանչյուրը՝ 1,000 (մեկ հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով բաժնեմասերը լրիվ վճարված են, տեղաբաշխված են և սեփականության

իրավունքով պատկանում են Ընկերության հիմնադրին, ով հանդիսանում է Ընկերության միակ մասնակիցը:

2024թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ ընկերության միակ մասնակիցն է ՀՀ քաղաքացի Հայկ Շեկյանը:

26.2. Կանոնադրությունը

Համաձայն Թողարկողի կանոնադրության Հոդված 1.1-ի՝ Թողարկողի գործունեության նպատակը շահույթի ստացումն է: Ընկերության հիմնական գործունեությունն է նորագույն էներգետիկայի ոլորտում մատչելի, բարձրորակ և կայուն ծառայություններ ապահովելը, նորագույն էներգետիկայի շուկան զարգացնելը՝ քայլերով համաշխարհային շուկայի զարգացման միտումներին համընթաց, ինչպես նաև նորագույն էներգետիկայի ոլորտի զարգացման միջոցով նպաստել ՀՀ տնտեսության հավասարակշռված և կայուն զարգացմանը: «Շտիգեն» ՍՊԸ-ն առաջարկում է էներգետիկ անկախություն ձեռք բերելու համակարգային լուծումներ՝ ներառելով արևային տեխնոլոգիաներով աշխատող սարքեր (արևային վահանակ, ջրատաքացուցիչ, գեներատոր), ջեռուցման և հովացման համակարգեր, կուտակիչ մարտկոցներ:

27. Էական պայմանագրերը

Ընկերությունում առկա չեն Ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին 1 տարվա ընթացքում Ընկերության կողմից բնականոն գործունեության շրջանակներից դուրս կնքված և գործողության մեջ գտնվող պայմանագրեր, որոնց գինը գերազանցում է Ընկերության վերջին հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում նշված սեփական կապիտալի արժեքի 5 տոկոսը:

28. Փորձագետի, գնահատողի, խորհրդատուի կամ հաշվապահի մասնագիտական կարծիքը և երրորդ անձանցից վերցված տեղեկատվությունը

Այլ անձանց մասնագիտական կարծիք կամ երրորդ անձանցից վերցված տեղեկատվություն ներկայացվող Ազդագրում չի օգտագործվել:

Բացի Ազդագրում ներկայացված Թողարկողի պատմական ֆինանսական հաշվետվություններից, որոնք ենթարկվել են աուդիտի անկախ աուդիտորական ընկերությունների կողմից, Ազդագրում ներկայացված այլ տեղեկատվություն չի ենթարկվել աուդիտի անկախ աուդիտորական ընկերությունների կողմից: Որպես սույն բաժնում ներկայացված տեղեկատվության ստացման աղբյուր, երրորդ անձինք ներգրավված չեն:

29. Այլ տեղեկատվություն

Ազդագրի կիրառության ողջ ժամկետի ընթացքում Կազմակերպության կանոնադրությունը, միջանկյալ և տարեկան ֆինանսական հաշվետվությունները, տարեկան անկախ աուդիտորական եզրակացությունները մշտապես հասանելի են

հանրությանը ինչպես էլեկտրոնային, այնպես էլ թղթային ձևով: Նշված փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակները տեղադրված են Կազմակերպության պաշտոնական կայքում՝ shtigen.com հասցեով, իսկ թղթային տարբերակով ստանալու համար ներդրողները կարող են դիմել Կազմակերպության գրասենյակ՝ ՀՀ, ք. Երևան, 0069, Դավիթ Անհաղթ 23, տարածք 6:

Հավելված 1: Ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևերը

Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS) = Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Բաժնետոմսերի միջին կշռված թիվը

Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE) = (Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Սեփական կապիտալի միջին մեծություն) x 100

Ակտիվների շահութաբերություն (ROA) = (Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Ընհանուր ակտիվների միջին մեծություն) x 100

Զուտ շահույթի մարժա (NPM) = Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Գործառնական եկամուտ

Կապիտալի համարժեքության գործակից = Սեփական կապիտալ / Ընդհանուր ակտիվներ

Ֆինանսական կախվածության գործակից = Ընդամենը պարտավորություններ / Սեփական կապիտալ

Բացարձակ իրացվելիության գործակից = (Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ + Ընթացիկ ֆինանսական ներդրումներ) / Ընթացիկ պարտավորություններ

Ընթացիկ իրացվելիության գործակից = (Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ + Ընթացիկ ֆինանսական ներդրումներ + Ընթացիկ դեբիտորական պարտքեր և կանխավճարներ) / Ընթացիկ պարտավորություններ

Ընդհանուր իրացվելիության գործակից = Ընթացիկ ակտիվներ / Ընթացիկ պարտավորություններ

Դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից = Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ / Վաճառքների գծով դեբիտորական պարտքերի միջին արժեքը

Դեբիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով = 365 / (Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ / Վաճառքների գծով դեբիտորական պարտքերի միջին արժեքը)

Պաշարների շրջանառելիության գործակից = Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք / Պաշարների միջին արժեքը

Պաշարների շրջապտույտի տևողությունն օրերով = 365 / (Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք / Պաշարների միջին արժեքը)

Կրեդիտորական պարտքերի շրջանառելիության գործակից = Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք / Կրեդիտորական պարտքերի միջին արժեքը

Կրեդիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով = 365 / (Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք / Կրեդիտորական պարտքերի միջին արժեքը)

ՀԱՎԵԼՎԱԾ 2: Թողարկման Վերջնական Պայմաններ

----- 2025 թ.

«Շտիգեն» ՍՊԸ

անվանական, արժեկտրոնային, ոչ փաստաթղթային, ոչ փոխարկելի
պարտատոմս

Թողարկողի և թողարկվող արժեթղթերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվության ձեռքբերման համար անհրաժեշտ է համատեղ դիտարկել ծրագրային ազդագիրը (գրանցված է ----- 2024 թ.), դրա լրացումները և սույն թողարկման վերջնական պայմանները: Ծրագրային ազդագիրը, դրա լրացումները գտնվում են «Շտիգեն» ՍՊԸ-ում ՀՀ, ք. Երևան, 0069, Դավիթ Անհաղթ 23, տարածք 6

<p>Ընդհանուր տեղեկություններ (Այն տեղեկությունները, որոնք կիրառելի չեն, նշվում է «ոչ կիրառելի»: Եթե միևնույն սերիայի ներքո տարբեր հիմնական պայմաններով (թողարկման արժույթ, առաջարկի գին, անվանական արժեք և այլն) արժեթղթեր են թողարկվում, ապա յուրաքանչյուր պայմանին բավարարող արժեթղթերի խմբի համար տարբերվող պայմանները ներկայացվում են տարանջատված:)</p>	
Թողարկողը (թողարկողի անվանումը)	«Շտիգեն» ՍՊԸ

	Տեղաբաշխող	չերաշխավորված տեղաբաշխում իրականացնելու կապակցությամբ Թողարկողը կնքել է «Պարտատոմսերի տեղաբաշխման ծառայությունների մատուցման մասին» պայմանագիր «Դայմենշն» փակ բաժնետիրական ներդրումային ընկերության հետ
	Սերիան	
	Տվյալ սերիայի թողարկման ընդհանուր ծավալը	ենթակա է որոշման թողարկողի խորհրդի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
	Արժեթղթերի դասակարգման մասին տեղեկատվություն՝ թողարկողի պարտավորությունների մարման հերթականության տեսանկյունից (ստորադասությունը), ներառյալ՝ տվյալ սերիայի ներքո յուրաքանչյուր թողարկման ծավալը՝ ըստ ստորադասության	Ամենայն մանրամասնությամբ ներկայացված է Ծրագրային Ազդագրի 11.3-րդ կետում
	Թողարկման արժույթը	ՀՀ դրամ
	Առաջարկի գինը	ենթակա է որոշման թողարկողի խորհրդի կողմից

		պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
	Անվանական արժեքը	100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ
	Քանակը	15,000 (տասնհինգ հազար) հատ
	Առաջարկի իրականացման սկիզբը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները)	Ենթակա է որոշման թողարկողի խորհրդի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
	Առաջարկի իրականացման ավարտը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները)	Ենթակա է որոշման թողարկողի խորհրդի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
	Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը (ISIN) կամ այլ նմանատիպ տարբերակիչ ծածկագիր	
	Թողարկման և տեղաբաշխման վերաբերյալ որոշում ընդունած իրավասու մարմինը և որոշման ամսաթիվը	Պարտատոմսերի թողարկման վերաբերյալ

	(լրացվում է այն դեպքում, եթե տվյալ հրապարակային առաջարկի համար առանձին որոշում է ընդունվել, հակառակ դեպքում նշվում է «ոչ կիրառելի»)	որոշումն ընդունվել է Թողարկողի միակ մասնակցի որոշմամբ: Հաջորդ թողարկումները ենթակա են որոշման Թողարկողի խորհրդի կողմից:
Արժեկտրոնի վերաբերյալ տեղեկություններ		
	Արժեկտրոնի հաշվարկման առաջին օրը	ենթակա է որոշման թողարկողի խորհրդի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
	Արժեկտրոնի տոկոսադրույքը և վճարման պարբերականությունը, եթե արժեկտրոնի տոկոսադրույքը լողացող է, ապա ներկայացնել տեղեկատվություն, թե ինչ ցուցանիշից (դրա փոփոխությունից) է կախված տոկոսադրույքի մեծությունը, և որտեղ կարելի է ստանալ այդ ցուցանիշի/դրա փոփոխության մասին տեղեկատվություն	ենթակա է որոշման թողարկողի խորհրդի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
	Արժեկտրոնի վճարման հստակ օրերը (օր, ամիս, տարի)	ենթակա է որոշման թողարկողի խորհրդի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից

		առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
	Արժեկտրոնի օրերի հաշվարկման կարգը (օրինակ 30/360, Act/Act, Act/360 և այլն)	Փաստացի օրեր արժեկտրոնի փուլի ընթացքում/Փաստացի օրեր տարվա ընթացքում (Actual/Actual)
	Լողացող արժեկտրոնի հաշվարկն իրականացնողը	Ենթակա է որոշման թողարկողի խորհրդի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
	Արժեկտրոնի հաշվարկման այլ էական պայմաններ	Ենթակա է որոշման թողարկողի խորհրդի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
	Զրոյական արժեկտրոնով (գեղջատոկոսային) արժեթղթերի վերաբերյալ դրույթ (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	Ոչ կիրառելի
Մայր գումարի մարման վերաբերյալ տեղեկություններ		

	Մարման (մասնակի մարումների) ժամկետը	ենթակա է որոշման թողարկողի խորհրդի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
	Մարման (մասնակի մարումների) արժեքը, եթե հնարավոր չէ, ապա նշվում է հաշվարկման մեթոդաբանությունը	Անվանական արժեքով
	Մարման արժեքի փոփոխությունը (լրացվում է այն բոլոր պայմանները, որոնց դեպքում հնարավոր է մարման արժեքի փոփոխություն)	Չի նախատեսվում
	Վաղաժամկետ մարման հնարավորություն թողարկողի նախաձեռնությամբ/քոլ օպցիոն (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	ոչ կիրառելի
	Ժամկետ(ներ)ը	Չի նախատեսվում
	Օպցիոնի իրականցման գինը, դրա հաշվարկման մեթոդը (առկայության դեպքում),	Չի նախատեսվում
	Մասնակի մարման հնարավորության դեպքում՝ նվազագույն և առավելագույն մարման արժեքը	Չի նախատեսվում
	Այլ տեղեկություններ	
	Վաղաժամկետ մարման հնարավորություն ներդրողի նախաձեռնությամբ/փոփ օպցիոն (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	ոչ կիրառելի
	Ժամկետ(ներ)ը	
	Օպցիոնի իրականցման գինը, դրա հաշվարկման մեթոդը (առկայության դեպքում),	Չի նախատեսվում

	Այլ տեղեկություններ (տեղեկացման ժամանակաշրջանը)	
Տեղաբաշխման վերաբերյալ տեղեկություններ		
	Տեղաբաշխողի անվանումը, գտնվելու վայրը	«Դայմենշն» ՓԲԸ, ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան 2, 27/1 ոչ բնակելի տարածք
	Տեղաբաշխման այլ պայմաններ (որոնք ներառված չեն ազդագրում)	Ենթակա է որոշման թողարկողի խորհրդի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
Այլ տեղեկություններ		
	Տվյալ դասի արժեթղթերի կարգավորվող շուկայում առևտրին թույլտվության առկայություն (նշվում է համապատասխան կարգավորվող շուկաների անվանումները, թույլտվության ամսաթիվը)	Արժեթղթերը դեռևս թույլատրված չեն որևէ կարգավորվող շուկայում առևտրի
	Եթե առաջարկվող արժեթղթերի մասով հետագայում հայցվելու է կարգավորվող շուկայում առևտրին թույլտվություն, ապա նշվում է տեղեկություններ այդ մասին (շուկայի անվանումը, նաև դրույթ, որ առևտրին թույլտվության հայցը կարող է չբավարարվել, առևտրին թույլտվության սպասվող ամսաթիվը (հնարավորության դեպքում))	Թողարկողը պարտադիր դիմելու է պարտատոմսերը կարգավորվող շուկայում առևտրի թույլտվություն ստանալու և/կամ ցուցակելու համար, և համաձայն ՀՀ գործող օրենսդրության պարտատոմսերի առևտրի թույլտվություն ստացման և/կամ

		ցուցակման դեպքում վերջիններիս հետագա շրջանառությունը կարող է իրականացվել միայն կարգավորվող շուկայում: Կարգավորվող շուկա ասելով Թողարկողը նկատի ունի «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲ ընկերությունը:
	Արժեթղթի վարկանիշը	Ոչ կիրառելի
	Արժեթղթերի դիմաց վճարներ կատարելու մեթոդները (պարբերականությունը, բանկային հաշիվները և այլն) և ժամկետները, ինչպես նաև արժեթղթերը ստանալու մեթոդները և ժամկետները, արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք ստանալու ձևը	Ենթակա է որոշման թողարկողի խորհրդի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ

Թողարկողը պատասխանատու է սույն «Թողարկման վերջնական պայմաններում» ներառված տեղեկությունների համար: Թողարկողը հավաստիացնում է, որ սույն փաստաթղթում ներառված տեղեկությունները համապատասխանում են այն տեղեկություններին (ներկայացված ընդհանուր մեթոդաբանությանը), որոնք ներառված են ծրագրային ազդագրում, դրա լրացումներում, ինչպես նաև ճշգրիտ են (այնքանով, որքանով հայտնի են), և որևէ փաստ բաց չի թողնվել կամ խեղաթյուրվել:

ՀԱՎԵԼՎԱԾ 3: Հայտ ֆիզիկական անձ ներդրողների համար
«Շտիգեն» ՍՊԸ -ի թողարկած արժեկտրոնային պարտատոմսերի
ձեռքբերման Հայտ
(ֆիզիկական անձանց համար)

Հայտի ներկայացման ամսաթիվը և _____
ժամանակը (օր, ամիս, տարի, ժամ, րոպե)

Ֆիզիկական անձի անվանումը _____
(Անուն, Ազգանուն)

Էլ. փոստի հասցեն, հեռախոսահամարը _____

ՀԾՀ _____

Ռեզիդենտությունը _____
(ռեզիդենտ/ ոչ ռեզիդենտ)

Սույն Հայտի ներկայացմամբ ընդունում ենք «Էմ Բի Ջի Գրուպ» ՍՊԸ (այսուհետ՝ Ընկերություն) առաջարկը, որով և ցանկություն ենք հայտնում ձեռք բերել թողարկած արժեկտրոնային պարտատոմսերը հետևյալ պայմաններով՝

Պարտավորումների ձեռքբերման ամսաթիվը _____
(օր, ամիս, տարի)

Ձեռք բերվող պարտավորումների արժույթը ՀՀ դրամ

Ձեռք բերվող պարտավորումների քանակը՝ _____
հատ քանակը թվերով (տառերով)

*Ձեռք բերվող պարտավորումների միավորի
ձեռքբերման գինը*

գինը թվերով

*Ձեռք բերվող պարտավորումների
ձեռքբերման դիմաց վճարված ընդհանուր
գումարը*

ընդհանուր գումարը թվերով (տառերով)

Անձի բանկային հաշվի համարը

Բանկի անվանումը

Արժեթղթերի հաշիվը հաշվառող անձի
անունը

Արժեթղթերի հաշվի համարը

Սույն Հայտով, հավաստում ենք, որ Հայտը ներկայացնելուց առաջ ծանոթացել ենք պարտատոմսի Ծրագրային ազդագրին, թողարկման վերջնական պայմաններին, ընդունում և համաձայն ենք դրանցում նշված պայմաններին և պատրաստակամ ենք ստանձնել Ընկերության թողարկած պարտատոմսերում ներդրումների հետ կապված հնարավոր ռիսկերը:

Հաստատում ենք, որ ֆինանսական միջոցները, որոնք փոխանցվում են Ընկերությանը ստացված են օրինական ճանապարհով և ոչ մի կերպ կապված չեն ահաբեկչության ֆինանսավորման, թմրանյութերի վաճառքի, մարդկանց վաճառքի, հարկերի վճարումից խուսափելու և այլ հանցավոր գործունեության հետ:

Հաստատում ենք, որ սույն Հայտի բավարարման դեպքում Հայտը կհանդիսանա մեր և Ընկերության միջև պատշաճ ձևակերպված և վավեր պայմանագիր՝ մեր կողմից պարտավորումների ձեռքբերման (առքի) վերաբերյալ:

Հիշեցում: Եթե ներդրողի կողմից պարտավորումների ձեռքբերման համար դրամական միջոցները «Արմավիսբանկ» ՓԲԸ դրամային 2500010587010500 հաշվին են մուտքագրվում մինչև պարտավորումների ձեռքբերման օրվա ժամը 14:00-ը, ապա այդ դրամական միջոցները մուտքագրված են համարվում դրանց վճարման օրը, իսկ եթե համապատասխան գումարները վճարվում են փոխալ աշխատանքային օրը 14:00-ից հետո, ապա դրանք մուտքագրված են համարվում վճարմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:

ՀԱՎԵԼՎԱԾ 4: Հայտ իրավաբանական անձ ներդրողների համար

**«Շտիգեն» ՍՊԸ -ի թողարկած արժեկտրոնային պարտատոմսերի
ձեռքբերման Հայտ**

(իրավաբանական անձանց համար)

Հայտի ներկայացման ամսաթիվը և
ժամանակը

(օր, ամիս, տարի, ժամ, րոպե)

Իրավաբանական անձի անվանումը

(ֆիրմային անվանում, կազմակերպարավական ձև)

Պետոնեգիստրի գրանցման տվյալները

(գրանցման վկայականի համար, ամսաթիվ)

Գրանցման վայրի հասցեն, էլ. փոստի
հասցեն, հեռախոսահամարը

ՀՎՀՀ

Ռեզիդենտությունը

(ռեզիդենտ/ ոչ ռեզիդենտ)

Սույն Հայտի ներկայացմամբ ընդունում ենք «Էմ Բի Ջի Գրուպ» ՍՊԸ (այսուհետ՝ Ընկերություն) առաջարկը, որով և ցանկություն ենք հայտնում ձեռք բերել թողարկած արժեկտրոնային պարտատոմսերը հետևյալ պայմաններով՝

Պարտատոմսերի ձեռքբերման ամսաթիվը

(օր, ամիս, տարի)





ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ
«Շտիգեն» ՍՊԸ-ի կողմից թողարկվող կորպորատիվ
արժեկտրոնային պարտատոմսեր

Ձեռք բերվող պարտավորումների արժույթը

ՀՀ դրամ

*Ձեռք բերվող պարտավորումների քանակը՝
հատ*

_____ քանակը թվերով (տառերով)

*Ձեռք բերվող պարտավորումների միավորի
ձեռքբերման գինը*

_____ գինը թվերով

*Ձեռք բերվող պարտավորումների
ձեռքբերման դիմաց վճարված ընդհանուր
գումարը*

_____ ընդհանուր գումարը թվերով (տառերով)

Անձի բանկային հաշվի համարը

Բանկի անվանումը

Արժեթղթերի հաշիվը հաշվառող անձի
անունը

Արժեթղթերի հաշվի համարը

Սույն Հայտով, հավաստում ենք, որ Հայտը ներկայացնելուց առաջ ծանոթացել ենք պարտատոմսի Ծրագրային ազդագրին, թողարկման վերջնական պայմաններին, ընդունում և համաձայն ենք դրանցում նշված պայմաններին և պատրաստակամ ենք ստանձնել Ընկերության թողարկած պարտատոմսերում ներդրումների հետ կապված հնարավոր ռիսկերը:

Հաստատում ենք, որ ֆինանսական միջոցները, որոնք փոխանցվում են Ընկերությանը ստացված են օրինական ճանապարհով և ոչ մի կերպ կապված չեն ահաբեկչության ֆինանսավորման, թմրանյութերի վաճառքի, մարդկանց վաճառքի, հարկերի վճարումից խուսափելու և այլ հանցավոր գործունեության հետ:

Հաստատում ենք, որ սույն Հայտի բավարարման դեպքում Հայտը կհանդիսանա մեր և Ընկերության միջև պատշաճ ձևակերպված և վավեր պայմանագիր՝ մեր կողմից պարտատոմսերի ձեռքբերման (առքի) վերաբերյալ:

Հիշեցում: Եթե ներդրողի կողմից պարտավորումների ձեռքբերման համար դրամական միջոցները «Արմսվիսբանկ» ՓԲԸ դրամային 2500010587010500 հաշվին են մուտքագրվում մինչև պարտավորումների

ձեռքբերման օրվա ժամը 14:00-ը, ապա այդ դրամական միջոցները մուտքագրված են համարվում դրանց վճարման օրը, իսկ եթե համապատասխան գումարները վճարվում են տվյալ աշխատանքային օրը 14:00-ից հետո, ապա դրանք մուտքագրված են համարվում վճարմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:

ՀԱՎԵԼՎԱԾ 5: Ֆինանսական հաշվետվություններ

Միջանկյալ ֆինանսական տեղեկատվություն

2024թ.-ի 1-ին և 2րդ եռամսյակների ոչ աուդիտորական հաշվապահական հաշվետվություններ (եկամուտների և ծախսերի հաշվետվություն, հաշվապահական հաշվեկշիռ, դրամական ծախսերի հաշվետվություն):

Թողարկողի ամփոփ ֆինանսական տվյալները

(հազ. դրամ)

**ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ
այլ կազմակերպությունների համար**

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ցուցանիշի Անվանումը	2024 II եռամսյակ	2024 I եռամսյակ
Հասույթ	2,626,021	1,547,653
Վաճառքի ինքնարժեք	(2,119,960)	(1,286,417)
Համախառն շահույթ	506,061	261,237
Իրացման ծախսեր	(201,724)	(176,801)
Վարչական ծախսեր	(267,928)	(232,459)
Այլ եկամուտ	6,787	11,750
Այլ ծախսեր	(11,602)	(4,227)
Գործառնական շահույթ	31,595	(140,500)
Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից օգուտ/վնաս, զուտ	(1,314)	24,556
Ֆինանսական եկամուտ/ծախս, զուտ	(21,393)	8,265
Անօրհանգիստ կազմակերպության օգուտի/վնասի բաժին	0	0
Շահույթը մինչև հարկումը	8,888	(107,678)
Շահութահարկի գծով ծաս	0	0
Զուտ Շահույթ	8,888	(107,678)
Այլ համապարփակ եկամուտ	0	0
Ընդամենը համապարփակ արդյունք	8,888	(107,678)

Գործադիր տնօրեն
Հայկ Շեկյան



Ֆինանսական տնօրեն
Արշավիր Մկրտչյան

ԱՄՓՈԹ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ

Ցուցանիշի անվանումը	2024 II եռամսյակ	2024 I եռամսյակ
Ակտիվներ		
Ոչ ընթացիկ ակտիվներ		
Հիմնական միջոցներ	313,808	318,885
Ոչ նյութական ակտիվներ	3,324	3,938
Ժամկետային ավանդներ	80,000	40,000
Հետաձգված հարկային ակտիվներ	30,307	30,307
Ներդրումներ փոխկապակցված կազմակերպություններում	24,024	26,463
Տրամադրված փոխառություններ	166,177	0
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	617,640	419,593
Ընթացիկ Ակտիվներ		
Պաշարներ	2,115,398	1,759,602
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	1,445,660	1,138,282
Շահութահարկի գծով	11,369	9,052
Տրամադրված փոխառություններ	36,297	34,406
Ժամկետային ավանդներ	40,415	43,103
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	10,000	10,000
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	169,045	16,370
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	3,828,184	3,010,815
Ընդամենը ակտիվներ	4,445,824	3,430,408
Սեփական կապիտալ և պարտավորություններ		
Սեփական կապիտալ		
Կանոնադրական կապիտալ	50	50
Կուտակված շահույթ	87,398	87,249
Չվերահսկվող բաժնեմաս	(1,253)	(1,253)
Ընդամենը սեփական կապիտալ	86,195	86,046
Ոչ ընթացիկ պարտավորություններ		
Վարկեր և փոխառություններ	579,355	630,602
Վարձակալության գծով պարտավորություն	136,563	151,633
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	715,918	782,235
Ընթացիկ պարտավորություններ		
Վարկեր և փոխառություններ	736,765	478,091
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	2,890,939	2,067,309
Շահութահարկի գծով պարտավորություն	0	0
Վարձակալության գծով պարտավորություն	16,007	16,727



Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	3,643,711	2,562,127
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ	4,445,824	3,430,408



Գործադիր տնօրեն
Հայկ Շեկյան





Ֆինանսական տնօրեն
Արշավիր Սկրտչյան

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՍՓՈՓ ՏԿՅԱԼՆԵՐ

Ցուցանիշի անվանումը	2024 II եռամսյակ	2024 I եռամսյակ
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու շրջանի սկզբում	19,058,079	10,113,126
Գործառնական գործունեությունից դրամական զուտ հոսքեր	213,012,558	(3,222,409)
Ներդրումային գործունեությունից դրամական զուտ հոսքեր	(50,927,404)	18,425,800
Ֆինանսական գործունեությունից դրամական զուտ հոսքեր	(12,098,340)	10,417,799
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու շրջանի վերջում	169,044,894	19,058,079



Գործադիր տնօրեն
Հայկ Շեկյան





Ֆինանսական տնօրեն
Արշավիր Սկրտչյան

«Շտիգեն»

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ


31 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2023թ.

ԵՐԵՎԱՆ 2024

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն	6
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն	8
Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն	9
Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

23.09.2024թ.
N032422



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
«Ելքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ
Գլխավոր տնօրեն
Վահե Գևորգյան

ԱՆԿԱՆ ԱՌԻԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

«Շտիգեն» ՄՊԸ մասնակցին

Կարծիք

Մեր կողմից իրականացվել է «Շտիգեն» Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերության (հետայսու՝ «Ընկերություն») և նրա դուստր ընկերությունների (հետայսու՝ «Խումբ») համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, որոնք ներառում են 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համար շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Խմբի ֆինանսական վիճակը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքներն ու դրամական հոսքերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՄ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ՄՄՄ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրի (ՀՄԴ-ի Վարքագիրք) և Հայաստանի Հանրապետությունում կիրառելի՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, և մենք կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝ այդ պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Խմբի ղեկավարությունը պատասխանատու է ՏՀՄՍ-ների համապատասխան համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվություններ, որոնք զերծ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ղեկավարությունը պատասխանատու է Խմբի՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու, ինչպես նաև գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, քանի դեռ ղեկավարությունը չի նախատեսում լուծարել Խումբը կամ դադարեցնել դրա գործունեությունը, կամ չունի իրատեսական այլընտրանք, բացի նշվածներից:

Կառավարման օղակներում ներգրավված անձինք պատասխանատու են Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ երաշխիքներ՝ խարդախությունների կամ սխալների հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն, որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՍ համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցրած կարող են ազդել այս ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝ դրանց հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ, մենք.

- Բացահայտում և գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ Հնկերության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյոք առկա է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել Խմբի անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ: Եթե մենք գալիս ենք եզրահանգման, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք համախմբված ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ եթե նման բացահայտումները պատշաճ կերպով ներկայացված չեն, մենք պետք է ձևափոխենք կարծիքը: Մեր

ADVISORY • ASSURANCE • ACCOUNTING • TAX

Baker Tilly Armenia CJSC is a member of the global network of Baker Tilly International Ltd., the members of which are separate and independent legal entities.

եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, աուդիտորը չի կարող երաշխավորել, որ ապագա իրադարձությունները կամ հանգամանքները չեն կարող հանգեցնել նրան, որ Խումբը կորցնի իր անընդհատ գործելու կարողությունը:

- Գնահատում ենք ընդհանուր առմամբ համախմբված ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, և արդյոք համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:
- Ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ Խմբի ֆինանսական տեղեկատվության կամ գործունեության վերաբերյալ՝ ֆինանսական հաշվետվությունների մասին կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատվություն ենք կրում աուդիտորական աշխատանքների ուղղորդման, վերահսկման ու կատարման համար: Մենք լիովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հետ աուդիտի պլանավորած շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

Աուդիտոր

Սերգեյ Բաղայան



ՇԱՀՈՒՑԹԻ ԿԱՍ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	Ծան.	2023թ.	(հազար դրամ) 2022թ.
Հասույթ	5	6,144,556	4,621,511
Վաճառքի ինքնարժեք	6	(4,872,029)	(3,693,236)
Համախառն շահույթ		1,272,527	928,275
Իրացման ծախսեր	7	(515,206)	(303,236)
Վարչական ծախսեր	8	(725,508)	(511,796)
Այլ եկամուտ	9	134,108	115,649
Այլ ծախսեր	10	(40,428)	(99,571)
Գործառնական շահույթ		125,493	129,322
Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից օգուտ/(վնաս), զուտ		(34,470)	24,864
Ֆինանսական ծախս, զուտ	11	(47,870)	(34,004)
Ասոցիացված կազմակերպության վնասի բաժին		-	(150)
Շահույթ մինչև հարկումը		43,153	120,032
Շահութահարկի գծով ծախս	12	(4,480)	(31,723)
Զուտ շահույթ		38,673	88,309
Այլ համապարփակ եկամուտ			
Այլ համապարփակ արդյունք		-	-
Ընդամենը համապարփակ արդյունք		38,673	88,309

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Ծան.	2023թ.	(հազար դրամ) 2022թ.
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	13	390,344	137,879
Ոչ նյութական ակտիվներ		4,393	8,311
Ժամկետային ավանդներ	18	64,497	5,021
Հետաձգված հարկային ակտիվներ	14	30,307	12,798
Ներդրումներ չկապակցված կազմակերպություններում	15	26,322	15,972
Տրամադրված փոխառություններ		37,988	-
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		553,851	179,981
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	16	1,416,629	1,356,900
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	17	1,068,013	1,005,210
Շահութահարկի գծով		3,506	-
Տրամադրված փոխառություններ		10,753	16,370
Ժամկետային ավանդներ	18	5,505	43,041
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	19	10,000	10,000
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	20	10,113	10,287
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		2,524,519	2,441,808
Ընդամենը ակտիվներ		3,078,370	2,621,789
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Սեփական կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	21	50	50
Կուտակված շահույթ		190,233	156,196
Զվերահսկվող բաժնեմաս		(1,253)	(1,279)
Ընդամենը սեփական կապիտալ		189,030	154,967
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	22	849,818	279,066
Վարձակալության գծով պարտավորություն		59,730	-
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		909,548	279,066
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	22	348,987	280,739
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	23	1,613,230	1,885,230
Շահութահարկի գծով պարտավորություն		-	21,787
Վարձակալության գծով պարտավորություն		17,575	-
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		1,979,792	2,187,756
Ընդամենը սեփական կապիտալի պարտավորություններ		3,078,370	2,621,789



[Signature]
Պրոֆիբու Բոնատյոնգ ՍՊԸ-ի
ներկայացուցիչ՝ Տիգրան Գասպարյան
Գլխավոր հաշվապահ

23 սեպտեմբերի 2024թ.

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՂԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	<i>(հազար դրամ)</i>			
	Կանոնադրական կապիտալ	Կուտակված շահույթ(վնաս)	Չվերահսկվող բաժնեմաս	Ընդամենը
Մնացորդը առ 1 հունվարի 2022թ.	50	67,378	(770)	66,658
<i>Համապարփակ եկամուտ</i>				
Տարվա շահույթ	-	88,818	(509)	88,309
Ընդամենը համապարփակ արդյունք	-	88,818	(509)	88,309
<i>Կապիտալում ուղղակիորեն գրանցված գործարքներ սեփականատերերի հետ</i>				
Շահաբաժիններ	-	-	-	-
Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ	-	-	-	-
<i>Փոփոխություններ չվերահսկող բաժնեմասում</i>				
Ներդրումներ	-	-	-	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.	50	156,196	(1,279)	154,967
Մնացորդը առ 1 հունվարի 2023թ.	50	156,196	(1,279)	154,967
<i>Համապարփակ եկամուտ</i>				
Տարվա շահույթ	-	38,647	26	38,673
Ընդամենը համապարփակ արդյունք	-	38,647	26	38,673
<i>Կապիտալում ուղղակիորեն գրանցված գործարքներ սեփականատերերի հետ</i>				
Շահաբաժիններ	-	(4,610)	-	(4,610)
Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ	-	(4,610)	-	(4,610)
<i>Փոփոխություններ չվերահսկվող բաժնեմասում</i>				
Ներդրումներ	-	-	-	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2023թ.	50	190,233	(1,253)	189,030

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	2023թ.	(հազար դրամ) 2022թ.
Տարվա շահույթ	38,673	88,309
Ճշգրտումներ		
Մաշվածություն և ամորտիզացիա	62,674	38,058
Դեբիտորական պարտքերի պահուստի աճ/(հակադարձում)	(51,835)	62,510
Կրեդիտորական պարտքերի դուրսգրում	(70,995)	(86,007)
Հիմնական միջոցների օտարում	21,568	4,439
Ֆինանսական ծախս/(եկամուտ), զուտ	47,870	34,004
Հատկացումներ արձակուրդայինի պահուստին	53,210	28,332
Երաշխիքային պասսարկման գծով պահուստի աճ	13,153	-
Շահութահարկի գծով ծախս	4,480	31,723
Փոխարժեքային տարբերությունից վնաս/(օգուտ)	34,470	(24,864)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր՝ մինչև շրջանառու կապիտալի փոփոխությունները	153,268	176,504
Փոփոխություններ		
Պաշարներում	(59,729)	91,203
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերում	(42,237)	(517,279)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերում	(356,694)	335,004
Գործառնական գործունեությունից/(գործունեության համար օգտագործված) դրամական միջոցների հոսքեր	(305,392)	85,432
Վճարված շահութահարկ	(20,813)	(30,503)
Գործառնական գործունեությունից/(գործունեության համար օգտագործված) դրամական միջոցների զուտ հոսքեր	(326,205)	54,929
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(261,328)	(98,656)
Ներդրումներ չկապակցված կազմակերպություններում	(10,350)	(8,239)
Փոխառությունների տրամադրում	(32,371)	(12,920)
Ավանդների (ներդրում)/ հավաքագրում	(21,940)	(48,062)
Ստացված շահաբաժիններ	-	24,619
Ստացված տոկոսային եկամուտ	27,898	6,537
Ներդրումային գործունեության համար օգտագործված դրամական միջոցների զուտ հոսքեր	(298,091)	(136,721)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ստացված վարկեր, զուտ	740,084	77,642
Տոկոսների վճարում	(98,825)	(40,541)
Շահաբաժինների վճարում	(4,610)	-
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	636,649	37,101
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/աճ	12,353	(44,691)
Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների վրա	(12,527)	(1,554)
Դրամական միջոցները տարեսկզբի դրությամբ	10,287	56,532
Դրամական միջոցները տարեվերջի դրությամբ	10,113	10,287

**ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ
ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

1. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներառում են «Շտիզեն» ՍՊԸ-ի (հետայսու՝ «Ընկերություն») և նրա դուստր ընկերությունների՝ «Էներքս» ՓԲԸ-ի, «Անդրոն» ՓԲԸ-ի և «Շտիզեն Ըղվայգրի» ՍՊԸ-ի (բոլորը միասին հետայսու՝ «Խումբ») ֆինանսական հաշվետվությունները :

«Շտիզեն» ՍՊԸ-ն հիմնադրվել է 2011թ-ին Հայաստանի Հանրապետության օրենքների ներքո՝ ՀՀ քաղաքացի Հայկ Վալերիկի Շեկյանի կողմից: Ընկերության գրասենյակը գտնվում է 0033, ՀՀ ք. Երևան, Վիկտոր Համբարձումյան 119, բն 23:

Ընկերության գործունեության հիմնական նպատակը խնայող և անվտանգ արևային էներգետիկ համակարգերի կառուցումն է: Ընկերությունը նախագծել, կառուցել և սպասարկում է տարածաշրջանի խոշորագույն արևային ջերմային կայանը (Grand Sport), ինչպես նաև Հայաստանի խոշորագույն արևային էլեկտրակայանները (Green Energy, ArSun, Solar 5):

Դուստր կազմակերպությունները հիմնադրվել են 2021թ. ՀՀ օրենքների ներքո: Ընկերությանն են պատկանում «Էներքս» ՓԲԸ-ի և «Անդրոն» ՓԲԸ-ի բաժնետոմսերի 90% և «Շտիզեն Ըղվայգրի» ՍՊԸ-ի բաժնեմասի 51%: Ընկերությանն են պատկանում նաև Շտիզեն Վենչուրս ՓԲԸ-ի բաժնետոմսերի 30%: Վերջինս դասակարգվել է որպես Ընկերության ասոցիացված կազմակերպություն:

2. ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

2.1 Համապատասխանություն

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից հրապարակված՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն:

Չափման հիմունքներ

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են պատմական արժեքի սկզբունքով:

2.2 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն Ընկերության գործառնական արժույթն է և որով ներկայացվում են այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.3 Գնահատումների և դատողությունների կիրառում

Ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունից պահանջվում է կատարել մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամուտների և ծախսերի ներկայացված գումարների վրա: Գնահատումները և վերջիններիս համար հիմք հանդիսացող ենթադրությունները

հիմնված են պատմական փորձի և այլ տարբեր գործոնների վրա, որոնք ողջամիտ են համարվում՝ ելնելով այդ պահին առկա գիտելիքներից: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և վերջիններիս համար հիմք հանդիսացող ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են վերանայման ժամանակաշրջանում, եթե գնահատումները ազդեցություն ունեն միայն այդ ժամանակաշրջանի վրա: Եթե ազդեցությունը վերաբերում է ընթացիկ և ապագա ժամանակաշրջաններին, ապա վերանայումները ճանաչվում են ինչպես ընթացիկ, այնպես էլ ապագա ժամանակաշրջաններում:

Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են համախմբված ֆինանսական հաշվետվություններին համար, բացահայտված են ստորև.

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետները

Ղեկավարությունը կատարել է հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետների գնահատում: Ղեկավարության համոզմամբ գնահատված հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետները էականորեն չեն տարբերվում այդ ակտիվների տնտեսական կյանքից: Եթե հիմնական միջոցների օգտակար ծառայության փաստացի ժամկետները տարբերվեն գնահատումներից, ապա ֆինանսական հաշվետվությունները կարող են էականորեն փոխվել:

Չափում. Անհուսալի ու կասկածելի պարտքերի պահուստ

Խումբը վերանայում է իր առևտրային և այլ դեբիտորական պարտքերը՝ դրանց վերականգնելիության ապացույցներ հայտնաբերելու համար: Այդպիսի ապացույցը ներառում է հաճախորդի վճարումների հաշվառումը և հաճախորդի ընդհանուր ֆինանսական դիրքը: Եթե առկա են պարտքի չվերականգնման հայտանիշեր, ապա հաշվարկվում է փոխհատուցվող գումարը և ձևավորվում է պահուստ՝ համապատասխան անհուսալի և կասկածելի պարտքերի համար: Պահուստի գումարը արտացոլվում է շահույթում կամ վնասում: Վարկային ռիսկի ուսումնասիրությունը շարունակական գործընթաց է, և պահուստի գնահատման համար կիրառվող մեթոդաբանությունն ու ենթադրությունները պարբերաբար վերանայվում են և համապատասխանաբար ճշգրտվում:

Հնացած և դանդաղ շրջանառելի պաշարների պահուստ

Խումբը ուսումնասիրում է իր պաշարների գրառումները՝ դրանց վաճառելիության և օտարման պահին իրացման գուտ արժեքի վերաբերյալ ապացույցներ գտնելու համար: Հնացած և դանդաղ շրջանառելի պաշարների պահուստը հիմնվում է ղեկավարության նախկին փորձի վրա՝ հաշվի առնելով պաշարների արժեքը, ինչպես նաև պաշարների յուրաքանչյուր դասի խմբաքանակի շարժը և մակարդակը:

Պահուստի գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Պաշարների իրացման գուտ արժեքի դիտարկման գործընթացը շարունակական է, և հնացած ու դանդաղ շրջանառելի պաշարների պահուստի գնահատման համար կիրառվող մեթոդաբանությունն ու ենթադրությունները պարբերաբար վերանայվում են և համապատասխանաբար ճշգրտվում:

3. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հետևյալ հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողաբար կիրառվել է սույն համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր տարիների համար և Խմբի ֆինանսական վիճակի ներկայացման ժամանակ: Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողականորեն կիրառվում է Խմբի բոլոր ընկերությունների կողմից:

3.1 Համախմբման հիմքերը

Դուստր ընկերություններն այն կազմակերպություններն են, որոնք վերահսկվում են Խմբի կողմից: Վերահսկողությունն առկա է, երբ Խումբը կարող է ղեկավարել կազմակերպության գործունեության ֆինանսական և գործառնական քաղաքականությունը՝ նրա գործունեությունից օգուտ ստանալու համար:

Տարվա ընթացքում ձեռք բերված կամ օտարված դուստր ընկերությունների ֆինանսական հաշվետվություններն ընդգրկված են Համախմբված համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ սկսած վերահսկողության սահմանման ամսաթվից մինչև վերահսկողության դադարեցման ամսաթիվը: Ներխմբային հաշվեկշիռները և ներխմբային գործարքներից չիրացված եկամուտներն ու ծախսերը դուրս են հանվում համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ժամանակ:

Անհրաժեշտության դեպքում ճշգրտումներ են արվում դուստր ընկերությունների ֆինանսական հաշվետվություններում՝ դրանց քաղաքականությունները Խմբի այլ անդամների կողմից կիրառվող քաղաքականությանը համապատասխանեցնելու համար:

3.2 Հասույթի ճանաչում

Հասույթը սովորական գործունեության ընթացքում տրամադրված ապրանքի և ծառայությունների համար ստացվելիք գումարն է և չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցումների իրական արժեքով՝ հանած զեղչերը և վաճառքի հետ կապված հարկերը: Խմբի կողմից ստացված հասույթի ճանաչումը կատարվում է հետևյալ հիմունքով.

Ապրանքի վաճառք

Ապրանքի վաճառքը ճանաչվում է ապրանքի սեփականության հետ կապված էական ռիսկերը և սեփականությունից ստացվող օգուտները հաճախորդին փոխանցելուց հետո, ինչը սովորաբար տեղի է ունենում, երբ Խումբը վաճառում կամ առաքում է ապրանքը հաճախորդին, հաճախորդն ընդունում է ապրանքը, և համապատասխան դեբիտորական պարտքի հավաքագրելիությունը հիմնավորված է:

Ծառայությունների մատուցում

Ծառայությունների վաճառքը ճանաչվում է այն հաշվետու ժամանակաշրջանում, որում ավարտվել է ծառայությունների մատուցումը ըստ առանձին գործարքի, ինչը գնահատվում է որպես փաստացի մատուցված ծառայության և մատուցվող ամբողջ ծառայության հարաբերակցություն:

3.3 Ֆինանսական եկամուտ և ծախս

Ընկերության ֆինանսական եկամուտներն ու ծախսերը կազմված են հետևյալից.

- Տոկոսային եկամուտ
- Տոկոսային ծախս
- Ֆինանսական ակտիվների ու ֆինանսական պարտավորությունների գծով փոխարժեքային տարբերություններից առաջացող գուտ օգուտ կամ վնաս

Տոկոսային եկամուտը կամ ծախսը ճանաչվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանը անմիջականորեն վերագրելի փոխառության ծախսումները այդ ակտիվի արժեքի մասն են կազմում (կապիտալացվում են):

3.4 Աշխատակիցների վարձատրություն

Աշխատավարձերը և աշխատողների այլ հատուցումները չափվում են չգեղջված հիմունքով և ծախսագրվում են այն ժամանակաշրջանում, որում համապատասխան ծառայությունը մատուցվել է:

3.5 Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը, 2023թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 404.79 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 447.90 ՀՀ դրամ (2022թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 393.57 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 420.06 ՀՀ դրամ): Ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում և չափվում են պատմական արժեքով (հաշվարկվում են՝ օգտագործելով գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքը), բացառությամբ իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածների, որոնք վերահաշվարկվում են իրական արժեքի չափման օրվա դրությամբ գործող փոխարժեքով:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

3.6 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Սկզբնական արժեքը ներառում է ակտիվի ձեռքբերմանն ուղղակի վերագրելի ծախսումները: Սեփական ուժերով կառուցված ակտիվների սկզբնական արժեքը ներառում է նյութերի արժեքը, ուղղակի աշխատուժի գծով ծախսերը, ակտիվն իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ցանկացած այլ ծախսումները, ակտիվի ապատեղակայման և քանդման ծախսերը, տեղանքի վերականգնման ծախսերը և փոխառության կապիտալացված ծախսումները: Ձեռքբերված համակարգչային ծրագիրը, որը հանդիսանում է համապատասխան սարքավորման ֆունկցիոնալության անբաժանելի մասը, կապիտալացվում է որպես այդ սարքավորման մաս:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում որպես այլ եկամուտ/ծախս:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցիչ փոխարինման ծախսումները ճանաչվում են հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքում, եթե հավանական է, որ այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի Ընկերություն, իսկ արժեքը կարող

է արժանահավատորեն չափվել: Փոխարինված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքը ապաճանաչվում է: Հիմնական միջոցի առօրյա սպասարկման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ առաջանալուն պես:

Մաշվածություն

Հիմնական միջոցների միավորների մաշվածության հաշվարկը սկսվում է դրանց տեղադրման և շահագործման հանձնելու պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններիս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Մաշվածությունը հաշվարկվում է հիմնվելով ակտիվի սկզբնական արժեքի վրա՝ հանած դրա գնահատած մնացորդային արժեքը:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների միավորի յուրաքանչյուր մասի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, քանի որ այդ մեթոդն առավել ճիշտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտների օգտագործման մոդելը, բացառությամբ միջազգային բեռնավորադրումների համար օգտագործվող փոխադրամիջոցների, որոնց մաշվածությունը ճանաչվում է թողարկված միավորների մեթոդով՝ համաձայն յուրաքանչյուր շահագործված կիլոմետրի: Հոդատարածքի գծով մաշվածություն չի հաշվառվում:

Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Մեքենաներ և սարքավորումներ	-5 տարի
Արտադրական տնտեսական գույք	-5 տարի
Տրանսպորտային միջոցներ	-8 տարի
Համակարգչային տեխնիկա	-1 տարի

Մաշվածության հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և, անհրաժեշտության դեպքում, ճշգրտվում:

3.7 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Ընկերության կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն դեպքում, երբ դրանք մեծացնում են համապատասխան ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում կատարվելուն պես:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության գնահատված ժամկետների ընթացքում, սկսած դրանց օգտագործման համար մատչելի լինելու ամսաթվից, քանի որ այդ մեթոդն առավել ճիշտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտների օգտագործման մոդելը: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության գնահատված ժամկետը կազմում է 10 տարի:

Ամորտիզացիաի հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտին և, անհրաժեշտության դեպքում, ճշգրտվում:

3.8 Պաշարներ

Պաշարները չափվում են սկզբնական արժեքից և իրացման գուտ արժեքից նվազագույնով: Պաշարների սկզբնական արժեքը հաշվարկվում է միջին կշռված արժեքի սկզբունքով և ներառում է պաշարների ձեռքբերման ծախսումները, արտադրական կամ փոխարինման ծախսումները և դրանք ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված այլ ծախսումները: Արտադրված պաշարների և անավարտ արտադրանքի դեպքում սկզբնական արժեքը ներառում է արտադրական վերադիր ծախսումների համապատասխան մասը՝ հիմք ընդունելով արտադրական նորմատիվային հզորությունը:

Իրացման գուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի գնահատված գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար ծախսումները:

3.9 Ֆինանսական գործիքներ

ՖՀՄՍ 9-ը ներառում է ֆինանսական ակտիվների երեք հիմնական դաս՝ ամորտիզացված արժեքով չափվող, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող և շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ: ՖՀՄՍ 9-ով նախատեսված ֆինանսական ակտիվների դասակարգումը որպես կանոն հիմնված է այն բիզնես մոդելի վրա, որի շրջանակներում կառավարվում է ֆինանսական ակտիվը, և դրամական միջոցների հոսքերի պայմանագրով նախատեսված այդ ակտիվին վերաբերող բնութագրերի վրա: ՖՀՄՍ 9-ի համաձայն՝ այլևս չեն գործում ՀՀՄՍ 39-ով սահմանված մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների, փոխառությունների և դեբիտորական պարտքերի և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների դասերը: ՖՀՄՍ 9-ը մեծամասամբ պահպանում է ֆինանսական պարտավորությունների դասակարգման և չափման համար գործող ՀՀՄՍ 39-ի պահանջները:

ՖՀՄՍ 9-ի կիրառումն էական ազդեցություն չի ունեցել ֆինանսական պարտավորություններին վերաբերող Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականության վրա:

Ճանաչում և սկզբնական չափում

Առևտրական դեբիտորական պարտքերի սկզբնական ճանաչումը տեղի է ունենում դրանց առաջացման օրը: Մյուս բոլոր ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում, երբ Խումբը դառնում է գործիքի պայմանագրային դրույթների կողմ:

Ֆինանսական ակտիվի (եթե այն առևտրական դեբիտորական պարտք չէ, որը չի պարունակում էական ֆինանսավորման բաղկացուցիչ) կամ ֆինանսական պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով՝ գումարած, շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չչափվող միավորի համար, գործիքի ձեռքբերմանը կամ թողարկմանն ուղղակիորեն վերադրելի գործարքի հետ կապված ծախսումները: Էական ֆինանսավորման բաղադրիչ չպարունակող առևտրական դեբիտորական պարտքի սկզբնական չափումն իրականացվում է գործարքի գնով:

Դասակարգում և հետագա չափում

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվը դասակարգվում է որպես ամորտիզացված արժեքով չափվող, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող՝ պարտքային ներդրումների համար, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող՝ բաժնային ներդրումների համար, կամ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն դեպքերի, երբ Խումբը փոխում է ակտիվների կառավարման իր բիզնես մոդելը, որի դեպքում բոլոր այն ֆինանսական ակտիվները, որոնց վրա ազդում է այդ փոփոխությունը, վերադասակարգվում են բիզնես մոդելի փոփոխությանը հաջորդող առաջին հաշվետու ժամանակաշրջանի առաջին օրը:

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախատեսված չէ որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

- ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ակտիվը պայմանագրային դրամական միջոցների հոսքեր հավաքագրելու համար և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացում են դրամական միջոցների հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ:

Առևտրական նպատակներով չպահվող բաժնային գործիքում ներդրման սկզբնական ճանաչման ժամանակ Խումբը կարող է անդառնալիորեն որոշել ներկայացնել ներդրման իրական արժեքի հետագա փոփոխություններն այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում: Այս ընտրությունը կատարվում է առանձին յուրաքանչյուր ներդրման համար:

Բոլոր ֆինանսական ակտիվները, որոնք դասակարգված չեն որպես ամորտիզացված արժեքով չափվող կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող, ինչպես ներկայացված է վերը, չափվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով: Այս ակտիվները ներառում են բոլոր ածանցյալ ֆինանսական ակտիվները: Սկզբնական ճանաչման պահին Խումբը կարող է անդառնալիորեն նախատեսել ֆինանսական ակտիվը, որն այլապես բավարարում է ամորտիզացված արժեքով կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափման պահանջները, որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե դա թույլ կտա վերացնել կամ էականորեն նվազեցնել հաշվառման անհամապատասխանությունը, որը հակառակ դեպքում կառաջանա:

Ֆինանսական ակտիվներ – Բիզնես մոդելի գնահատում

Խմբի պորտֆելի մակարդակով գնահատում է այն բիզնես մոդելի նպատակը, որի շրջանակներում պահվում է ակտիվը, քանի որ այս գնահատումը լավագույնս արտացոլում է գործունեության կառավարման և ղեկավարությանը տեղեկատվության տրամադրման եղանակը: Գնահատման ժամանակ դիտարկվում է հետևյալ տեղեկատվությունը.

- պորտֆելի համար սահմանված քաղաքականությունը և նպատակները և այդ քաղաքականության աշխատանքը գործնականում: Մասնավորապես, արդյոք ղեկավարության ռազմավարությունն ուղղված է պամանագրով նախատեսված տոկոսային եկամտի ստացմանը, տոկոսադրույքների որոշակի կառուցվածքի պահպանմանը, ֆինանսական ակտիվների մարման ժամկետների համապատասխանեցմանը համապատասխան պարտավորությունների մարման ժամկետներին կամ դրամական միջոցների ակնկալվող արտահոսքին, կամ դրամական միջոցների հոսքերի իրացմանն ակտիվների վաճառքի միջոցով:
- ինչպես է գնահատվում պորտֆելի եկամտաբերությունը և ինչպես է այդ տեղեկատվությունը հաղորդվում Խմբի ղեկավարությանը:
- բիզնես մոդելի (և այդ բիզնես մոդելի շրջանակներում պահվող ֆինանսական ակտիվների) արդյունավետության վրա ազդող ռիսկերը և այդ ռիսկերի կառավարման եղանակը:

Ֆինանսական ակտիվների փոխանցումը երրորդ կողմերին այնպիսի գործարքներում, որոնք չեն բավարարում ապաճանաչման պայմանները, չի դիտարկվում որպես վաճառք այս նպատակի համար, և Խումբը շարունակում է ճանաչել ակտիվները:

Ֆինանսական ակտիվները, որոնք պահվում են առևտրական նպատակների համար կամ կառավարվում են և որոնց ստեղծած արդյունքը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, չափվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով:

Ֆինանսական ակտիվներ – Գնահատում, թե արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ

Այս գնահատման նպատակների համար «մայր գումարը» սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեքը սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» սահմանվում է որպես փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և փոխատվության հետ կապված այլ ռիսկերի և ծախսերի (օրինակ՝ իրացվելիության ռիսկի և վարչական ծախսերի), ինչպես նաև շահույթի մարժայի հատուցում:

Գնահատելիս, թե արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ, Խուսիքը դիտարկում է գործիքի պայմանագրային պայմանները: Այստեղ ներառվում է այն գնահատումը, թե արդյոք ֆինանսական ակտիվը պարունակում է այնպիսի պայմանագրային պայման, որը կարող է այնպես փոխել պայմանագրային դրամական միջոցների ժամկետը կամ գումարը, որ ֆինանսական ակտիվը չի բավարարի այդ պայմանը: Այս գնահատումն իրականացնելիս Խուսիքը դիտարկում է հետևյալը.

- պայմանական դեպքերը, որոնք կարող են փոխել դրամական միջոցների գումարը կամ ժամկետները,
- վաղաժամկետ մարման և գործողության ժամկետի երկարաձգման պայմանները:

Վաղաժամկետ մարման պայմանը համապատասխանում է միայն մայր գումարի և տոկոսների վճարում հանդիսանալու չափանիշին, եթե վաղաժամկետ մարման գումարը, ըստ էության, իրենից ներկայացնում է մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների չվճարված գումարները, որոնք կարող են ներառել լրացուցիչ ողջամիտ հատուցում պայմանագրի վաղաժամկետ դադարեցման համար: Բացի այդ, պայմանագրի անվանական արժեքի գեղջով կամ հավելավճարով ձեռքբերված ֆինանսական ակտիվի համար վաղաժամկետ մարում թույլատրող կամ պահանջող պայմանն այն գումարի չափով, որն, ըստ էության, իրենից ներկայացնում է պայմանագրի անվանական արժեքը գումարած հաշվեգրված (սակայն չվճարված) պայմանագրային տոկոսները (կարող են ներառել լրացուցիչ ողջամիտ հատուցում պայմանագրի վաղաժամկետ դադարեցման համար), դիտարկվում է որպես նշված չափանիշին համապատասխանող, եթե վաղաժամկետ մարման պայմանի իրական արժեքն էական չէ սկզբնական ճամանայման պահին:

Ֆինանսական ակտիվներ – Հետագա չափում, շահույթ և վնաս

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ
Այս ակտիվները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ամորտիզացված արժեքը նվազեցվում է արժեզրկումից կորստի չափով: Տոկոսային եկամուտը, փոխարժեքային տարբերություններից առաջացող շահույթը և վնասը և արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում: Ապաճանաչումից առաջացող շահույթը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Ֆինանսական պարտավորություններ – Դասակարգում, հետագա չափում, շահույթ և վնաս

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես ամորտիզացված արժեքով չափվող կամ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող: Ֆինանսական պարտավորությունը դասակարգվում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե այն դասվում է առևտրական նպատակներով պահվող գործիքների դասին, հանդիսանում է ածանցյալ գործիք կամ նախատեսված է որպես այդպիսին սկզբնական ճանաչման պահին: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունները չափվում են իրական արժեքով, իսկ դրանց գծով գուտ շահույթը և վնասը, ներառյալ՝ տոկոսային ծախսը, ճանաչվում են շահույթում կամ

վնասում: Այլ ֆինանսական պարտավորությունները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Տոկոսային ծախսը և փոխարժեքային տարբերություններից առաջացող շահույթը և վնասը ճանաչվում են շահույթում կամ վնասում: Ապաճանաչումից առաջացող ցանկացած շահույթը կամ վնասը նույնպես ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների փոփոխություն

Ֆինանսական ակտիվներ

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները փոխվում են, Խումբը գնահատում է, թե արդյոք փոփոխված ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Եթե դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր են («նշանակալի փոփոխություն»), ապա սկզբնական ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս դեպքում սկզբնական ֆինանսական ակտիվն ապաճանաչվում է և ճանաչվում է նոր ֆինանսական ակտիվ՝ իրական արժեքով:

Խումբն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում, այսինքն, գնահատում է, թե արդյոք սկզբնական ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբերվում են փոփոխված կամ փոխարինող ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերից: Խումբը գնահատում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գործոնների հիման վրա հետևյալ հերթականությամբ՝ որակական գործոններ, քանակական գործոններ, որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցություն: Եթե դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր են, ապա սկզբնական ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս գնահատումն իրականացնելիս Խումբը կիրառում է ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման ուղեցույցին նմանատիպ ուղեցույց:

Խումբը եզրահանգում է, որ փոփոխությունը նշանակալի է ելնելով հետևյալ որակական գործոններից.

- ֆինանսական ակտիվի արժույթի փոփոխություն,
- գրավի կամ ապահովվածության այլ միջոցների փոփոխություն:

Եթե ամորտիզացված արժեքով հաշվառվող փոփոխված ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր չեն, փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը: Այս դեպքում, Խումբը վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը և համախառն հաշվեկշռային արժեքի ճշգրտումից առաջացող գումարը ճանաչում է որպես փոփոխության գծով շահույթ կամ վնաս՝ շահույթի կամ վնասի կազմում: Ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը վերահաշվարկվում է որպես ֆինանսական ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված, վերանայված կամ փոփոխված պայմանագրային դրամական միջոցների ներկա արժեք: Ցանկացած կրած ծախսերը կամ վճարված վճարները ճշգրտում են փոփոխված ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում են փոփոխված ֆինանսական ակտիվի գործողության մնացած ժամկետի ընթացքում:

Ֆինանսական պարտավորություններ

Խումբն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ փոխվում են վերջինիս պայմանները և երբ փոփոխված պայմաններով պարտավորության գծով դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Այս դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն՝ իրական արժեքով: Մարված ֆինանսական պարտավորության և փոփոխված պայմաններով նոր ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքների տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Եթե փոփոխությունը (կամ փոխարինումը) չի հանգեցնում ֆինանսական պարտավորության ապաճանաչմանը, Խումբը կիրառում է այն հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, համաձայն որի ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը ճշգրտվում է, երբ փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչման, այսինքն, Խումբը ճանաչում է փոփոխության (կամ փոխարինման) արդյունքում առաջացող ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքի ճշգրտումը շահույթում կամ վնասում փոփոխության (կամ փոխարինման) ամսաթվի դրությամբ:

Գոյություն ունեցող ֆինանսական պարտավորությունների գծով դրամական միջոցների հոսքերի փոփոխությունները չեն համարվում փոփոխություն, եթե հանդիսանում են գործող պայմանագրային պայմանների արդյունք:

Խումբն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում՝ դիտարկելով որակական գործոնները, քանակական գործոնները և որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցությունը: Խումբը եզրահանգում է, որ փոփոխությունը նշանակալի է հետևյալ որակական գործոնների հիման վրա.

- ֆինանսական պարտավորության արժույթի փոփոխություն,
- գրավի կամ ապահովվածության այլ միջոցների փոփոխություն,
- փոխարկման պայմանի ավելացում,
- ֆինանսական պարտավորության ստորադասության փոփոխություն:

Քանակական գնահատման համար պայմանները նշանակալիորեն տարբեր են, եթե նոր պայմանների համաձայն դրամական միջոցների հոսքերի զեղչված ներկա արժեքը, ներառյալ՝ վճարված վճարները (առանց ստացված վճարների)՝ զեղչված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով, առնվազն 10 տոկոսով տարբերվում է սկզբնական ֆինանսական պարտավորության գծով մնացած դրամական միջոցների հոսքերի զեղչված ներկա արժեքից: Եթե պարտքային գործիքների փոխարինումը կամ վերջիններիս պայմանների փոփոխությունը հաշվառվում է որպես մարում, ապա ցանկացած կրած ծախսերը կամ վճարված վճարները ճանաչվում են որպես մարումից շահույթի կամ վնասի մաս: Եթե փոխարինումը կամ պայմանների փոփոխությունը չի հաշվառվում որպես մարում, ապա ցանկացած կրած ծախսերը կամ վճարված վճարները ճշգրտում են պարտավորության հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում են փոփոխված պարտավորության գործողության մնացած ժամկետի ընթացքում:

Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Խումբն ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի ստացման պայմանագրային իրավունքներն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ որում, Խումբը ոչ փոխանցում է, ոչ էլ պահպանում է սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները և չի պահպանում վերահսկողությունը ֆինանսական ակտիվի նկատմամբ:

Խումբն իրականացնում է գործարքներ, որոնց շրջանակներում փոխանցում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվների սեփականության հետ կապված կամ բոլոր, կամ, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները: Նման դեպքերում փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում:

Ֆինանսական պարտավորություններ

Խումբն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ պայմանագրում նշված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում կամ ուժը կորցնում է: Խումբը նաև ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ փոփոխվում են վերջինիս պայմանները և երբ փոփոխված պարտավորությունից առաջացող դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր են, որի դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն՝ իրական արժեքով:

Ֆինանսական պարտավորության ապաճանաչման ժամանակ մարված հաշվեկշռային արժեքի և վճարված հատուցման (ներառյալ՝ փոխանցված ոչ դրամային ակտիվները կամ ստանձնած պարտավորությունները) միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները հաշվանցվում են և ներկայացվում են զուտ գումարով ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում միայն այն դեպքում, երբ Խումբն ունի գումարները հաշվանցելու ներկայումս իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

3.10 Արժեզրկում

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվները արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստը դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորուստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվների արժեզրկում

ՖՀՄՍ 9-ը փոխարինում է ՀՀՄՍ 39-ով սահմանված «կրած վնասի» մոդելը «սպասվող պարտքային վնասի» մոդելով: Արժեզրկման նոր մոդելը կիրառելի է ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական

ակտիվների, պայմանագրային ակտիվների, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային գործիքներում ներդրումների, սակայն ոչ՝ բաժնային գործիքներում ներդրումների համար: ՖՀՄՄ 9-ի համաձայն՝ պարտքային վնասն ավելի շուտ է ճանաչվում, քան պահանջվում էր ՀՀՄՄ 39-ով:

ՖՀՄՄ 9-ի արժեզրկման մոդելի գործողության ոլորտում գտնվող ակտիվների համար սովորաբար ակնկալվում է, որ արժեզրկումից կորուստները կաճեն և կդառնան առավել փոփոխական:

Խումբը ճանաչում է սպավող պարտքային վնասի գծով պահուստ ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների համար:

Խումբը չափում է վնասի գծով պահուստը ֆինանսական գործիքի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում սպասվող պարտքային վնասին հավասար գումարի չափով, բացառությամբ հետևյալ գործիքների, որոնց համար վնասի գծով պահուստը չափվում է 12 ամսվա ընթացքում սպասվող պարտքային վնասին հավասար գումարի չափով.

- (i) պարտքային արժեթղթեր, եթե որոշվել է, որ դրանք ունեն ցածր պարտքային ռիսկ հաշվետու ամսաթվի դրությամբ և
- (ii) այլ պարտքային արժեթղթեր և բանկային հաշիվների մնացորդներ, որոնց գծով պարտքային ռիսկը (օրինակ, ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ժամկետի ընթացքում պարտականությունների չկատարման ռիսկ) էականորեն չի աճել սկզբնական ճանաչման պահից:

Առևտրական դեբիտորական պարտքերի և պայմանագրային ակտիվների վնասի գծով պահուստը միշտ չափվում է ֆինանսական գործիքի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում սպասվող պարտքային վնասին հավասար գումարի չափով:

Երբ Խումբը որոշում է, թե արդյոք տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկի էական աճ սկզբնական ճանաչումից հետո և երբ գնահատում է սպասվող պարտքային վնասը, այն դիտարկում է ողջամիտ և հիմնավորված տեղեկատվությունը, որը տեղին է և հասանելի առանց անհարկի ծախսերի կամ ջանքերի: Գնահատումը ներառում է թե՛ քանակական և թե՛ որակական տվյալները, ինչպես նաև Խմբի նախկին փորձի և պարտքի հիմնավորված գնահատման վրա հիմնված վերլուծությունը և ներառում է հեռանկարի վերաբերյալ տեղեկատվությունը:

Խումբը ենթադրում է, որ տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկի էական աճ, եթե այն ավելի քան 365 օր ժամկետանց է:

Խումբը համարում է, որ ֆինանսական ակտիվի գծով պարտականությունները չեն կատարվել, եթե՝

- (i) հավանական չէ, որ փոխառուն ամբողջությամբ կկատարի պարտքի հետ կապված իր պարտականությունները, եթե Խումբը չձեռնարկի այնպիսի գործողություններ, ինչպիսին գրավի իրացումն է (վերջինիս առկայության դեպքում), կամ
- (ii) ֆինանսական ակտիվն ավելի քան 365 օր ժամկետանց է:

Ֆինանսական գործիքի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում սպասվող պարտքային վնասն իրենից ներկայացնում է այն սպասվող պարտքային վնասը, որն առաջանում է պարտավորությունների չկատարման բոլոր հնարավոր դեպքերի արդյունքում ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ամբողջ ժամկետի ընթացքում:

12 ամսվա ընթացքում սպասվող պարտքային վնասն իրենից ներկայացնում է սպասվող պարտքային վնասի այն մասը, որն առաջանում է պարտավորությունների չկատարման այն դեպքերի արդյունքում, որոնք հնարավոր են հաշվետու ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում (կամ ավելի կարճ ժամկետի ընթացքում, եթե գործիքի ակնկալվող գործողության ամբողջ ժամկետը պակաս է 12 ամսից):

Սպասվող պարտքային վնասի գնահատման ժամանակ դիտարկվող առավելագույն ժամկետն իրենից ներկայացնում է առավելագույն պայմանագրային ժամկետը, որի ընթացքում Խումբը ենթարկվում է պարտքային ռիսկի:

Սպասվող պարտքային վնասի չափում

Սպասվող պարտքային վնասն իրենից ներկայացնում է պարտքային վնասի հավանականությունից ելնելով կշռված պարտքային վնասի գնահատականը: Պարտքային վնասը չափվում է որպես բոլոր պակասող դրամական միջոցների ներկա արժեք (այսինքն՝ որպես տարբերություն այն դրամական միջոցների հոսքերի միջև, որոնք Խումբը պետք է ստանա պայմանագրի համաձայն, և որոնք ակնկալում է ստանալ):

Արժեզրկված ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Խումբը գնահատում է ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվները և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային արժեթղթերն արժեզրկված լինելու տեսանկյունից: Ֆինանսական ակտիվը համարվում է արժեզրկված, եթե տեղի են ունեցել մեկ կամ ավելի դեպքեր, որոնք բացասական ազդեցություն ունեն ֆինանսական ակտիվի գծով գնահատված ապագա դրամական միջոցների հոսքերի վրա:

Ֆինանսական ակտիվի արժեզրկված լինելու վկայությունը ներառում է հետևյալ դիտարկելի տվյալները.

- փոխառուի կամ թողարկողի նշանակալի ֆինանսական դժվարությունները,
- պայմանագրի խախտումը, այդ թվում՝ պարտականությունների չկատարումը կամ վճարման ավելի քան 180 օր ուշացումը,
- Խմբի կողմից փոխառության կամ փոխատվության պայմանների այնպիսի վերանայումը, որը Խումբն այլ պայմաններում չէր դիտարկի,
- փոխառուի հավանական սնանկացումը կամ այլ ֆինանսական վերակազմավորումը կամ
- արժեթղթի համար գործող շուկայի վերացումը ֆինանսական դժվարությունների պատճառով:

Սպասվող պարտքային վնասի ներկայացումը համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների վնասի գծով պահուստը նվազեցվում է այդ ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքից:

Ղուրսգրում

Ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը դուրս է գրվում, եթե Խումբը չունի ողջամիտ հիմքեր ակնկալելու ֆինանսական ակտիվի ամբողջական կամ մասնակի փոխհատուցումը: Խումբը չի ակնկալում դուրս գրված գումարների էական փոխհատուցում: Այնուամենայնիվ, դուրս գրված ֆինանսական ակտիվները կարող են դեռևս հանդիսանալ կատարողական գործողությունների առարկա՝ հասանելիք գումարների փոխհատուցման հետ կապված Խմբի ընթացակարգերի հետ համապատասխանությունն ապահովելու համար:

Անորոշիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Խումբն այս ակտիվները դիտարկում է արժեզրկման վկայության առանձին և հավաքական հիմունքներով: Բոլոր առանձին վերցված նշանակալի ակտիվները գնահատվում է արժեզրկման տեսանկյունից՝ առանձին հիմունքով: Արժեզրկման առանձին վկայություն չհայտնաբերելու դեպքում, այս ակտիվները գնահատվում է հավաքական հիմունքով՝ տեղի ունեցած, սակայն չբացահայտված արժեզրկման վկայություն հայտնաբերելու նպատակով:

Ակտիվները, որոնք առանձին վերցված նշանակալի չեն, գնահատվում են արժեզրկման տեսանկյունից հավաքական հիմունքով՝ խմբավորելով ռիսկի համանման բնութագրերով ակտիվները:

Հավաքական արժեզրկումը գնահատելիս Խումբը դիտարկում է փոխհատուցման ժամկետների և կրած վնասի գումարի նախորդ ժամանակաշրջանների տեղեկատվությունը և կատարում է ճշգրտում, եթե ընթացիկ տնտեսական և վարկավորման պայմանները թույլ են տալիս, որպեսզի փաստացի վնասն ավել կամ պակաս լինե՞ր նախկինում առկա միտումներով առաջարկվողներից:

Արժեզրկումից կորուստը հաշվարկվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և այդ ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով գեղջված դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերություն: Կորստի գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ պահուստային հաշվում: Եթե Խումբը գտնում է, որ չկա ակտիվը փոխհատուցելու իրատեսական հնարավորություն, համապատասխան գումարները դուրս են գրվում: Եթե հետագայում տեղի ունեցած դեպքը հանգեցնում է արժեզրկումից կորստի գումարի նվազեցմանը և այդ նվազեցումը կարելի է անկողմնակալորեն վերագրել արժեզրկման ճանաչումից հետո տեղի ունեցած դեպքին, ապա արժեզրկումից կորստի գումարի նվազեցումը հակադարձվում է շահույթի կամ վնասի միջոցով:

3.11 Վարձակալություն

Երբ Ընկերությանն են փոխանցվում վարձակալված ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները (ֆինանսական վարձակալություն), ակտիվը համարվում է անմիջականորեն գնված ակտիվ: Սկզբնապես որպես ակտիվ ճանաչված գումարը վարձակալված գույքի իրական արժեքի և վարձակալության ժամկետի ընթացքում վճարվելիք նվազագույն վարձավճարների ներկա արժեքի գումարներից փոքրագույնն է: Համապատասխան վարձակալական պարտավորությունը ներկայացվում է որպես պարտավորություն: Վարձակալության վճարները բաղկացած են երկու բաղադրիչից՝ մայր գումարից և տոկոսավճարներից: Տոկոսավճարների բաղադրիչը արտացոլվում է Համախմբված համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ վարձակալության ժամկետի ընթացքում, և հաշվարկվում է՝ ներկայացնելով վարձակալության պարտավորության հաստատուն մասը: Մայր գումարի բաղադրիչը նվազեցնում է փոխատուին վճարվելիք գումարի հաշվեկշիռը:

Երբ վարձակալված ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները չեն փոխանցվում Ընկերությանը (գործառնական վարձակալություն), Պայմանագրի կնքման ժամանակ Խումբը գնահատում է, թե արդյո՞ք պայմանագիրը վարձակալական է կամ պարունակում է վարձակալություն: Պայմանագիրը վարձակալական է կամ պարունակում է վարձակալության իրավունք, եթե այն փոխանցում է, փոխհատուցման դիմաց, հիմքում ընկած ակտիվի օգտագործումը տվյալ ժամանակահատվածում վերահսկելու իրավունքը: Ստուգելու համար, թե արդյո՞ք պայմանագիրը փոխանցում է առանձնացված ակտիվի օգտագործումը վերահսկելու իրավունքը, Խումբն օգտագործում է ՖՀՄՍ 16-ի վարձակալության սահմանումը:

Խումբը որպես վարձակալ

Խումբը կիրառում է ճանաչման և չափման միասնական մոտեցում բոլոր վարձակալությունների համար, բացառությամբ կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների:

վարձակալությունների: Խումբը ճանաչում է վարձակալության գծով պարտավորություններ՝ վարձակալության գծով վճարումներ կատարելու համար, և օգտագործման իրավունքով ակտիվներ, որոնք ներկայացնում են հիմքում ընկած ակտիվներն օգտագործելու իրավունքը:

Օգտագործման իրավունքով ակտիվներ

Խումբը ճանաչում է օգտագործման իրավունքով ակտիվներ վարձակալության սկզբնական ամսաթվի դրությամբ (այն ամսաթիվը, երբ հիմքում ընկած ակտիվը հասանելի կլինի օգտագործման համար): Օգտագործման իրավունքով ակտիվները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկման կորուստները, և ճշգրտվում են վարձակալության գծով պարտավորության ցանկացած վերաչափման պարագայում: Օգտագործման իրավունքով ակտիվների սկզբնական արժեքը ներառում է վարձակալության գծով ճանաչված պարտավորությունների գումարը, սկզբնական ուղղակի ծախսումները, վարձակալության մեկնարկի ամսաթվին կամ դրանից առաջ կատարված վարձակալության վճարները՝ հանած ստացված ցանկացած վարձակալության խրախուսավճարներ: Բացառությամբ այն դեպքերի, երբ Խումբը խելամտորեն համոզված է, որ ձեռք կբերի վարձակալված ակտիվի նկատմամբ սեփականության իրավունքը պայմանագրի ավարտին, օգտագործման իրավունքով ակտիվի մաշվածությունը հաշվարկում է գծային հիմունքով վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև օգտագործման իրավունքով ակտիվի օգտակար ծառայության ավարտի ամսաթվից և վարձակալության ժամկետի ավարտի ամսաթվից ամենավաղը: Օգտագործման իրավունքով ակտիվները ենթակա են արժեզրկման:

Վարձակալության գծով պարտավորություններ

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ Խումբը ճանաչում է վարձակալության գծով պարտավորությունը վարձակալության ժամկետի ընթացքում վճարման ենթակա վարձավճարների ներկա արժեքով: Վարձավճարները պարունակում են հաստատուն վճարումները (ներառյալ՝ ըստ էության հաստատուն վճարումներ)՝ հանած վարձակալության ցանկացած ստացվելիք խրախուսավճար, վարձակալության փոփոխուն վճարումներ, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, և գումարներ, որոնք ակնկալվում է, որ կվճարվեն մնացորդային արժեքի երաշխիքի ներքո: Վարձավճարները ներառում են նաև գնման օպցիոնի իրագործման գինը, երբ Խումբը խելամտորեն համոզված է, որ կիրագործի այդ օպցիոնը, և վարձակալությունը դադարեցնելու հետ կապված տուգանքների վճարումները, եթե վարձակալության ժամկետն արտացոլում է Խմբի՝ վարձակալությունը դադարեցնելու օպցիոնի իրագործումը: Փոփոխուն վարձավճարները, որոնք կախված չեն ինդեքսից կամ դրույքից, ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, որի ընթացքում տեղի է ունենում այդ վճարումներին հանգեցնող դեպքը կամ իրավիճակը:

Վարձավճարների ներկա արժեքի հաշվարկման ժամանակ Խումբն օգտագործում է վարձակալության սկզբնական ամսաթվին լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը, եթե վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը հնարավոր չէ հեշտությամբ որոշել: Մեկնարկի ամսաթվից հետո վարձակալության գծով պարտավորության գումարը ավելացվում է՝ վարձակալության գծով պարտավորության տոկոսը արտացոլելու համար, և նվազեցվում է՝ կատարված վարձավճարները արտացոլելու համար: Ավելին, վարձակալության գծով պարտավորության հաշվեկշռային արժեքը վերաչափվում է, եթե տեղի են ունենում վերափոխումներ, վարձակալության ժամկետի փոփոխություն, ըստ էության հաստատուն վարձավճարների փոփոխություն կամ հիմքում ընկած ակտիվի գնման օպցիոնի գնահատումներում փոփոխություն:

Կարճաժամկետ վարձակալություններ և փոքրարժեք ակտիվների վարձակալություններ

Խումբը բացառում է օգտագործման իրավունքով ակտիվների, ինչպես նաև կարճաժամկետ վարձակալության և փոքրարժեք ակտիվների վարձակալության գծով պարտավորությունների ճանաչումը: Խումբը ճանաչում է այդ վարձակալությունների հետ կապված վարձավճարները որպես ծախս գծային հիմունքով, վարձակալության ժամկետի ընթացքում:

3.12 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Ընկերությունը՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, ունի ընթացիկ իրավական կամ կառուցողական պարտավորություն, որը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, և հավանական է, որ այդ պարտավորությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Պահուստները որոշվում են ակնկալվող դրամական միջոցների ապագա հոսքերը գեղջելով հարկումից առաջ այն դրույքով, որն արտացոլում է տվյալ շուկայում փողի ժամանակային արժեքը և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերը: Ջեռլի ծախսագրումը ճանաչվում է որպես ֆինանսական ծախս:

3.13 Բաժնետիրական կապիտալ

Ընկերության կողմից թողարկված բաժնեմասեր, որոնք հաշվառվում են անվանական արժեքով:

3.14 Շահաբաժիններ

Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն՝ դրանց հայտարարման ժամանակաշրջանում:

3.15 Համեմատական տվյալներ

Անհրաժեշտության դեպքում համեմատական տվյալները ճշգրտվում են՝ ընթացիկ տարվա ներկայացման փոփոխություններին համապատասխանելու համար:

4. ՆՈՐ ԵՎ ՎԵՐԱՆԱՅՎԱԾ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման օրվա դրությամբ լույս են տեսել մի շարք նոր ստանդարտներ, գործող ստանդարտների վերաբերյալ փոփոխություններ և մեկնաբանություններ, որոնք դեռևս ուժի մեջ չեն մտել:

Ընկերությունը վաղաժամկետ չի ընդունել այդ ստանդարտներից և մեկնաբանություններից որևէ մեկը: Ղեկավարությունը կանխատեսում է, որ կիրառելի նոր ստանդարտներն ու մեկնաբանությունները կընդունվեն Ընկերության կողմից՝ դրանց ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող առաջիկա ժամանակաշրջանում:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև:

- Ֆինանսական հաշվետվությունների հայեցակարգային հիմունքներին հղումներ (ՖՀՄՍ 3-ի փոփոխություններ)
- ՖՀՄՍ 17 «Ապահովագրության պայմանագրեր» և ՖՀՄՍ 17 «Ապահովագրության պայմանագրեր» փոփոխություններ
- Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտում (ՀՀՄՍ 1-ի և ՖՀՄՍ վերաբերյալ գործնական առաջարկներ 2-ի փոփոխություններ):

5. ՀԱՍՈՒՅԹ

	2023թ.	(հազար դրամ) 2022թ.
Ապրանքների վաճառքից	6,050,648	4,376,204
Ծառայությունների մատուցումից	93,908	245,307
	6,144,556	4,621,511

6. ՎԱՃԱՌՔԻ ԻՆՔՆԱՐՇԵՔ

	2023թ.	(հազար դրամ) 2022թ.
Նյութեր	2,801,232	2,709,931
Ձեռքբերված ծառայություններ	1,703,266	843,743
Փոխհատուցումներ աշխատակիցներին	358,153	130,141
Մաշվածություն	9,378	9,421
	4,872,029	3,693,236

7. ԻՐԱՑՄԱՆ ԾԱԽՍԵՐ

	2023թ.	(հազար դրամ) 2022թ.
Ինֆորմացիոն ծառայություն	60,494	35,230
Գովազդի և մարկետինգի ծախսեր	39,135	36,454
Վարձավճարներ	22,420	53,226
Տրանսպորտային ծախսեր	29,657	69,227
Փոխհատուցում աշխատակիցներին	330,581	67,746
Լիզինգի ծախսեր	18,408	30,903
Մաշվածություն	7,450	4,264
Ապահովագրական ծախսեր	2,469	4,296
Այլ ծախսեր	4,592	1,890
	515,206	303,236

8. ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

	2023թ.	(հազար դրամ) 2022թ.
Փոխհատուցումներ աշխատակիցներին	351,303	415,143
Աուդիտորական և խորհրդատվական ծախսեր	37,384	21,106
Բանկային ծախսեր	126,472	19,255
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	27,761	14,594
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	4,428	3,274
Մաշվածության և ամորտիզացիայի ծախսեր	45,846	24,372
Ակտիվի օգտագործման իրավունքի ամորտիզացիա	17,792	-
Վարձակալություն	36,608	-
Տրանսպորտային ծախսեր	15,751	-
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	19,947	4,573
Չփոխհատուցվող հարկեր	3,929	8,290
Այլ ծախսեր	38,287	1,189
	725,508	511,796

9. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏ

	2023թ.	(հազար դրամ) 2022թ.
Կրեդիտորական պարտքերի դուրսգրումից եկամուտ	70,995	86,007
Պարտքային կորուստների գծով պահուստի հակադարձում	51,835	-
Շահաբաժիններից եկամուտ	-	24,619
Այլ	11,278	5,023
	<u>134,108</u>	<u>115,649</u>

10. ԱՅԼ ԾԱԽՍԵՐ

	2023թ.	(հազար դրամ) 2022թ.
Հատկացումներ արձակուրդայինի պահուստին	-	28,332
Դեբիտորական պարտքերի դուրսգրման (արժեզրկման) ծախսեր	-	62,510
Երաշխիքային սպասարկման պահուստի գծով ծախսեր	13,153	-
Այլ ծախսեր	27,275	8,729
	<u>40,428</u>	<u>99,571</u>

11. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾԱԽՍ, ԶՈՒՏ

	2023թ.	(հազար դրամ) 2022թ.
<i>Ֆինանսական ծախս</i>		
Վարկերից տոկոսային ծախսեր	65,407	40,541
Վարձակալության գծով տոկոսային ծախսեր	10,361	-
	<u>75,768</u>	<u>40,541</u>
<i>Ֆինանսական եկամուտ</i>		
Բանկային հաշիվներից տոկոսային եկամուտ	14,539	3,485
Ավանդից տոկոսային եկամուտ	13,359	3,052
	<u>27,898</u>	<u>6,537</u>
<i>Ֆինանսական ծախս, զուտ</i>	<u>47,870</u>	<u>34,004</u>

12. ԾԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԾԱԽՍ

	2023թ.	(հազար դրամ) 2022թ.
Ընթացիկ հարկի գծով ծախս	21,989	36,823
Հետաձգված հարկի գծով փոխհատուցում (ծանոթագրություն`14)	(17,509)	(5,100)
	<u>4,480</u>	<u>31,723</u>

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

	Արդյունավետ հարկային տոկոսադրույք (%)		<i>(հազար դրամ)</i> Արդյունավետ հարկային տոկոսադրույք (%)	
	2023թ.		2023թ.	
Շահույթ մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՄ-ների)	43,153		120,032	
Շահութահարկ՝ 18% դրույքաչափով (2022թ.՝ 18%) (Չհարկվող եկամուտ)/ չնվազեցվող ծախսեր, գուտ	7,768	18.00	21,606	18.00
Շահութահարկի գծով ծախս/(փոխհատուցում)	(3,288)	(7.62)	10,117	8.43
	<u>4,480</u>	<u>10.38</u>	<u>31,723</u>	<u>26.43</u>

13. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

(հազար դրամ)

	Մեքենաներ և սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Արտադրական, տնտեսական գույք, գործիքներ	Այլ հիմնական միջոցներ	Օգտագործման իրավունքի գծով ակտիվ	Ընդամենը
Սկզբնական արժեք						
1 հունվարի 2022թ.	12,984	30,658	54,537	31,082	-	129,261
Ավելացում	8,186	-	1,100	81,410	-	90,696
Օտարումներ/Դուրսգրումներ	(1,107)	(6,908)	-	(485)	-	(8,500)
2022թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ	20,063	23,750	55,637	112,007	-	211,457
Ավելացում	161,091	44,721	26,902	10,822	89,252	332,788
Օտարում/Դուրսգրում	(23,693)	-	-	-	-	(23,693)
2022թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ	157,461	68,471	82,539	122,829	89,252	520,552
Մաշվածություն						
1 հունվարի 2022թ.	12,025	8,882	15,643	7,460	-	44,010
Տարեկան մաշվածություն	4,550	4,490	14,044	10,545	-	33,629
Օտարումներ/Դուրսգրումներ	(1,107)	(2,762)	-	(192)	-	(4,061)
2022թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ	15,468	10,610	29,687	17,813	-	73,578
Տարեկան մաշվածություն	22,191	7,158	7,693	3,921	17,792	58,755
Օտարում/Դուրսգրում	(2,125)	-	-	-	-	(2,125)
2023թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ	35,534	17,768	37,380	21,734	17,792	130,208
Զուտ հաշվեկշռային արժեք						
31 դեկտեմբերի 2022թ.	4,595	13,140	25,950	94,194	-	137,879
31 դեկտեմբերի 2023թ.	121,927	50,703	45,159	101,095	71,460	390,344

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 68,293 հազար դրամ հաշվեկշռային արժեքով հիմնական միջոցներ՝ սարքավորումներ, գրավադրվել են բանկերում որպես ապահովման միջոց:

Հիմնական միջոցների մաշվածության ծախսը բաշխվել է հետևյալ կերպ.

	(հազար դրամ)	
	2023թ.	2022թ.
Վաճառքի ինքնարժեք	9,378	9,121
Վարչական	41,927	20,244
Իրացման	7,450	4,264
	58,755	33,629

14. ՀԵՏԱԶԳՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ

	(հազար դրամ)	
	2023թ.	2022թ.
Տարեկգրի մնացորդ	12,798	7,698
Ֆինանսական արդյունքներում ճանաչված (տե՛ս ծանոթագրություն 12)	17,509	5,100
Տարելերջի մնացորդ	30,307	12,798

Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների շարժ

	(հազար դրամ)		
	2022	Ֆինանսական արդյունքով ճանաչում	2023
Չօգտագործված արձակուրդայինի գծով պահուստ	12,798	9,577	22,375
Անհուսալի դեբիտորական պարտքերի գծով պահուստ	-	5,564	5,564
Երաշխիքային սպասարկման գծով պահուստ	-	2,368	2,368
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ	12,798	17,509	30,307
Զուտ հետաձգված հարկային ակտիվ	12,798	17,509	30,307

	(հազար դրամ)		
	2021	Ֆինանսական արդյունքով ճանաչում	2022
Չօգտագործված արձակուրդայինի գծով պահուստ	7,698	5,100	12,798
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ	7,698	5,100	12,798
Զուտ հետաձգված հարկային ակտիվ	7,698	5,100	12,798

15. ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ ԶԿԱՊԱԿՑՎԱԾ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Կազմակերպություն	2023թ.		2022թ.	
	Բաժնետոմսերի քանակ,	Բաժնեչափ (%)	Գումար (հազար դրամ)	Բաժնետոմսերի քանակ, բաժնեչափ (%)
Հայէկոնտմբանկ ԲԲԸ	25,076	6,338 հատ բաժնետոմս	14,725	823 հատ բաժնետոմս
Այ Թի Սի ՍՊԸ	570	19% բաժնեմասեր	570	19% բաժնեմասեր
Ռեպ Քառ ՍՊԸ	673	19% բաժնեմասեր	673	19% բաժնեմասեր
Սոլար-5 ՍՊԸ	4	19% բաժնեմասեր	4	19% բաժնեմասեր
	26,322		15,972	

16. ՊԱՇԱՐՆԵՐ

	2023թ.	(հազար դրամ) 2022թ.
Ապրանքներ պահեստում	358,542	3,128
Անավարտ արտադրություն	2,854	1,906
Հումք և նյութեր	1,055,233	1,351,866
	<u>1,416,629</u>	<u>1,356,900</u>

17. ԱՌԵՎՏՐԱՅԻՆ և ԱՅԼ ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ

	2023թ.	(հազար դրամ) 2022թ.
<i>Ֆինանսական ակտիվներ</i>		
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	507,449	826,827
Պարտքային կորուստների գծով պահուստ	(10,675)	-
Այլ դեբիտորական պարտքեր	161,302	138
	<u>658,076</u>	<u>826,965</u>
<i>Ոչ ֆինանսական ակտիվներ</i>		
Տրված կանխավճարներ	382,136	176,653
Դեբիտորական պարտքեր հարկերի գծով	27,801	1,592
	<u>409,937</u>	<u>178,245</u>
	<u>1,068,013</u>	<u>1,005,210</u>

Դեբիտորական պարտքերի իրական արժեքները հավասար են դրանց հաշվեկշռային արժեքներին:

18. ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՎԱՆԴՆԵՐ

	2023թ.	(հազար դրամ) 2022թ.
Արժույթ		
ՀՀ դրամ	70,002	48,062
	<u>70,002</u>	<u>48,062</u>

Ավանդների պայմաններն ու ժամկետները ներկայացված են ստորև.

Բանկի անվանում	Ավանդի մայր գումար	Արժույթ	Ավանդի վերադարձման ամսաթիվ	Տարեկան %	Ավանդի մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.	
					(հազար դրամ) Մայր գումար	Հաշվեգրված %
Արմավիրսի ֆԲԸ	5,057,000	ՀՀ դրամ	15/03/2024թ.	8.25%	5,057	88
Արմավիրսի ֆԲԸ	20,000,000	ՀՀ դրամ	15/01/2025թ.	9.75%	20,000	791
Արմավիրսի ֆԲԸ	40,415,000	ՀՀ դրամ	20/02/2025թ.	10.50%	40,415	3,651
					<u>65,472</u>	<u>4,530</u>

19. ՊԱՀԱՆՋՆԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Ընկերությունն իրականացնում է ապառիկ վաճառքներ, որոնց ապահովվման համար «Հայէկոնոմբանկ» ՓԲԸ-ում Ընկերության հաշվարկային հաշվում առկա 10,000 հազար դրամ մնացորդը սառեցվել է:

20. ՄՆԱՑՈՐԴՆԵՐ ԴՐԱՄԱՐԿՂՈՒՄ և ԲԱՆԿԵՐՈՒՄ

	(հազար դրամ)	
	2023թ.	2022թ.
Կանխիկ միջոցներ	3,901	5,201
Բանկային հաշիվներ	6,212	5,086
	<u>10,113</u>	<u>10,287</u>

21. ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ

2023թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ կանոնադրական կապիտալը կազմել է 50,000 ՀՀ դրամ (2022թ.՝ 50,000 ՀՀ դրամ): Կանոնադրական կապիտալը բաղկացած է 1,000 ՀՀ դրամ անվանական արժեքով 50 բաժնեմասից: Ընկերության միակ մասնակիցն է ՀՀ քաղաքացի Հայկ Վալերիկի Շեկյանը:

22. ՎԱՐԿԵՐ և ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	(հազար դրամ)	
	2023թ.	2022թ.
Ոչ ընթացիկ		
Գրավով ապահովված բանկային վարկեր	351,380	74,547
Երկարաժամկետ փոխառություն	498,438	204,519
	<u>849,818</u>	<u>279,066</u>
Ընթացիկ		
Գրավով ապահովված բանկային վարկեր	341,287	280,691
Կարճաժամկետ փոխառություն	7,700	48
	<u>348,987</u>	<u>280,739</u>
	<u>1,198,805</u>	<u>559,805</u>

Վարկերի ու փոխառությունների պայմաններն ու ժամկետները ներկայացված են ստորև.

	Արժույթ	Մարման տարի	Անվանական տոկոսադրույք	(հազար դրամ)	
				2023թ.	2022թ.
Գրավով ապահովված բանկային վարկ (վարկային գիծ)	ՀՀ դրամ	03.10.23	12.50%	45,500	28,600
Գրավով ապահովված բանկային վարկ	ՀՀ դրամ	20.02.24	13.50%	19,512	-
Գրավով ապահովված բանկային վարկ	ՀՀ դրամ	16.10.25	13.75%	58,200	-
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	19.02.24	9.50%	5,246	-
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	15.04.24	9.00%	9,720	-
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	15.04.24	9.00%	11,108	-
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	15.05.24	9.00%	9,511	-
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	15.05.24	9.00%	4,323	-
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	23.07.24	9.25%	21,587	-
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	23.07.24	9.25%	2,746	-
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	23.07.24	9.25%	21,972	-
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	23.07.24	9.25%	10,686	-
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	23.07.24	9.25%	6,850	-
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	23.07.24	9.25%	15,283	-
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	23.07.24	9.25%	16,991	-
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	18.11.24	9.25%	17,478	-
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	24.05.24	9.25%	24,287	-
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	19.02.24	9.50%	29	-
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	15.04.24	9.00%	50	-
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	15.04.24	9.00%	58	-
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	15.05.24	9.00%	49	-
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	15.05.24	9.00%	22	-

Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	23.07.24	9.25%	115	-
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	23.07.24	9.25%	15	-
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	23.07.24	9.25%	117	-
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	23.07.24	9.25%	57	-
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	23.07.24	9.25%	36	-
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	23.07.24	9.25%	84	-
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	24.05.24	9.25%	90	-
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	18.11.24	9.25%	93	-
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	24.05.24	9.25%	117	-
Գրավով ապահովված բանկային վարկ	ՀՀ դրամ	11.05.26	8.50%	344	-
Գրավով ապահովված բանկային վարկ	ՀՀ դրամ	20.02.24	13.50%	151	-
Գրավով ապահովված բանկային վարկ	ՀՀ դրամ	16.10.25	13.75%	319	-
Գրավով ապահովված բանկային վարկ	ՀՀ դրամ	16.05.24	13.50%	1,243	-
Գրավով ապահովված բանկային վարկ	ՀՀ դրամ	16.05.24	13.50%	160,000	-
Գրավով ապահովված բանկային վարկ	ՀՀ դրամ	20.03.23	8.50%	-	2,010
Գրավով ապահովված բանկային վարկ	ՀՀ դրամ	14.05.27	8.50%	70,280	87,312
Գրավով ապահովված բանկային վարկ	ՀՀ դրամ	01.11.23	13.00%	-	20,000
Գրավով ապահովված բանկային վարկ	ՀՀ դրամ	27.11.23	12.50%	-	38,941
Գրավով ապահովված բանկային վարկ (օվերդրաֆտ)	ՀՀ դրամ	16.10.23	11.50%	-	25,377
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	31.03.23	8.50%	-	15,156
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	27.04.23	8.50%	-	8,800
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	19.05.23	8.50%	-	5,035
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	19.05.23	8.50%	-	6,714
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	20.06.23	9.75%	-	4,024
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	04.07.23	9.75%	-	15,737
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	26.07.23	9.75%	-	10,504
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	15.09.23	10.25%	-	17,058
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	15.09.23	10.25%	-	14,539
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	18.10.23	10.50%	-	9,576
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	18.10.23	10.50%	-	5,283
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	16.11.23	10.00%	-	14,473
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	20.12.23	9.50%	-	3,541
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	20.12.23	9.50%	-	13,775
Գրավով ապահովված բանկային վարկ	ՀՀ դրամ	18.10.24	14.00%	-	8,783
Գրավով ապահովված բանկային վարկ	ՀՀ դրամ	18.10.24	14.00%	158,398	-
Զապահովված փոխառություններ	ՀՀ դրամ	23.12.30		անտոկոս	204,567
				1,198,805	559,805

23. ԱՌԵՎՏՏՐԱՅԻՆ և ԱՅԼ ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ

	2023թ.	(հազար դրամ) 2022թ.
Կրեդիտորական պարտքեր ձեռքբերումների գծով	482,963	277,409
Մտացված կանխավճարներ	882,676	1,458,801
Վճարվելիք հարկեր և պարտադիր վճարներ	104,913	76,913
Զվճարված արձակուրդայինի պահուստ	124,308	71,098
Երաշխիքային սպասարկման գծով պահուստ	13,153	-
Պարտավորություններ աշխատակիցներին	2,212	1,009
Այլ	3,005	-
	1,613,230	1,885,230

24. ՀԵՏՀԱՇՎԵԿՇՈՒՑՖԻՆ ԻՐԱՂԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2024թ. փետրվարի 9-ին Վրաստանում գրանցվել է «Չինարեն» ՍՊԸ-ն, որտեղ Ընկերությունը ձեռք է բերել 90 տոկոս մասնաբաժին: Նորաստեղծ ընկերությունը ներգրավված է հողմային էներգետիկայի ոլորտում:

2024թ. մարտի 27-ին Վրաստանում գրանցվել է «Շտիգեն Գրուփ» ՍՊԸ-ն, որտեղ Ընկերությունը ձեռք է բերել 80 տոկոս մասնաբաժին: Նորաստեղծ ընկերությունը ներգրավված է վերականգնվող էներգետիկայի ոլորտում:

25. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԸ

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև.

Ֆինանսական ակտիվներ

	2023թ.	(հազար դրամ) 2022թ.
<i>Անորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ</i>		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	658,076	889,475
Ժամկետային ավանդներ	70,002	48,062
Ներդրումներ չկապակցված կազմակերպություններում	26,322	15,972
Տրամադրված փոխառություններ	48,741	16,370
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	10,000	10,000
Մնացորդներ բանկերում և դրամարկղում	10,113	10,287
	823,254	990,166

Ֆինանսական պարտավորություններ

	2023թ.	(հազար դրամ) 2022թ.
<i>Անորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ</i>		
Վարկեր և փոխառություններ	1,198,805	559,805
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	488,180	278,418
Վարձակալություն	77,305	-
	1,764,290	838,223

26. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈւՂՂՈւԹՅՈւՆՆԵՐԸ

Ֆինանսական գործիքներն օգտագործելիս Խումբը ենթարկվում է հետևյալ ռիսկերին.

- Պարտքային ռիսկ
- Իրացվելիության ռիսկ
- Շուկայական ռիսկ

Ղեկավարությունը լիովին պատասխանատու է Խմբի ռիսկերի կառավարման համակարգի մշակման և վերահսկողության համար:

Խմբի ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել և վերլուծել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Խումբը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և համակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են շուկայական պայմանների ու Խմբի գործունեության փոփոխություններն արտացոլելու նպատակով:

1) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով կնվազեն հաշվետու ամսաթվի դրությամբ առկա ֆինանսական ակտիվներից առաջացած ապագա դրամային հոսքերը: Այս ռիսկն առաջանում է ֆինանսական գործիքներից, ինչպիսիք են առևտրային և այլ դեբիտորական պարտքերը, տրված փոխառությունները և բանկերում պահվող դրամական միջոցներն ու դրանց համարժեքները: Խումբը որդեգրել է քաղաքականություն՝ ապահովելու, որ սպրանքի ու ծառայությունների վաճառքը կատարվի պատշաճ վարկային պատմություն ունեցող հաճախորդներին, և շարունակաբար վերահսկում է իր դեբիտորական պարտքերի իրավիճակը: Փոխառությունները տրամադրվում են կապակցված կողմերին: Դրամային մնացորդները պահվում են վարկային պորտֆելի բարձր որակ ապահովող ֆինանսական հաստատություններում:

Պարտքային ռիսկի ազդեցությունը

Պարտքային ռիսկի առավելագույն ազդեցությունը ներկայացվում է ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքով: Պարտքային ռիսկի առավելագույն ազդեցությունը հաշվետու ամսաթվի դրությամբ բերված է առորև.

	2023թ.	(հազար դրամ) 2022թ.
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	658,076	889,475
Ժամկետային ավանդներ	70,002	48,062
Ներդրումներ չկապակցված կազմակերպություններում	26,322	15,972
Տրամադրված փոխառություններ	48,741	16,370
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	10,000	10,000
Ընթացիկ բանկային հաշիվներ	3,901	5,086
	817,042	984,965

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Խումբը անկարող կլինի կատարել իր պարտավորությունները: Իրացվելիության ռիսկը առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում: Այդ անհամապատասխանությունը կարող է մեծացնել շահութաբերությունը, սակայն կարող է նաև մեծացնել կորուստների ռիսկը: Խումբն ունի այդպիսի կորուստների նվազեցմանն ուղղված ընթացակարգեր, որոնցից են բավարար դրամային միջոցներ և այլ բարձր իրացվելիության ընթացիկ ակտիվներ պահելը, ինչպես նաև համապատասխան վարկային միջոցների առկայությունը:

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների պայմանագրային ժամկետայնությունը՝ ներառյալ գնահատված տոկոսավճարները հաշվետու ամսաթվի դրությամբ:

31 դեկտեմբերի 2023թ.

	Հաշվեկշռային արժեք	Պայմանագրային դրամական միջոցների հոսքեր	(հազար դրամ)			
			Մինչև 3 ամիս	3-12 ամիս	1-5 տարի	5-10 տարի
Վարկեր և փոխառություններ	1,198,805	1,298,467	188,379	445,837	163,321	500,930
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	1,613,230	1,613,230	5,217	1,378,792	167,067	62,154
	2,812,035	2,911,697	193,596	1,824,629	330,388	563,084

31 դեկտեմբերի 2022թ.

(հազար դրամ)

	Հաշվեկշռային արժեք	Պայմանագրային դրամական միջոցների հոսքեր	Մինչև 3 ամիս	3-12 ամիս	1-5 տարի	5-10 տարի
Վարկեր և փոխառություններ	559,805	606,344	87,967	208,192	76,266	233,919
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	1,885,230	1,885,230	77,922	1,736,210	71,098	-
Շահութահարկի գծով պարտավորություն	21,788	21,788	-	21,788	-	-
	2,466,823	2,513,362	165,889	1,966,190	147,364	233,919

2) Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը Ընկերության եկամուտների կամ վերջինիս ֆինանսական գործիքների արժեքի փոփոխության ռիսկն է շուկայական գների, այդ թվում՝ արտարժույթի փոխարժեքների, տոկոսադրույքների և բաժնետոմսերի գների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն է, որը թույլ կտա պահպանել այս ռիսկին ենթարկվածության աստիճանն ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

Արտարժույթի ռիսկ

Արտաժույթի ռիսկն արտարժույթի փոխարժեքների տատանման հետևանքով ֆինանսական գործիքի ապագա դրամական հոսքերի իրական արժեքների տատանման ռիսկն է: Ընկերությունը ենթարկվում է արտարժույթի ռիսկին այնքանով, որքանով չեն համապատասխանում Ընկերության ֆունկցիոնալ արժույթը և այն արժույթները, որոնցով արտահայտված են Ընկերության գործառնությունները, ակտիվներն ու պարտավորությունները: Արտաժույթի ռիսկը հիմնականում առաջանում է Ընկերության ներգրավված վարկերից, արտերկրյա վաճառքներից և ձեռքբերումներից, որոնք հիմնականում արտահայտված են ԱՄՆ դոլարով, Եվրոյով, ՌԴ ռուբլով:

Ստորև ներկայացված է արտարժույթի ռիսկին Ընկերության ենթարկվածությունը.

31 դեկտեմբեր 2023թ.

	ԱՄՆ դոլար	Եվրո
Ֆինանսական ակտիվներ		
Մնացորդներ բանկերում և դրամարկղում	-	-
	-	-
Ֆինանսական պարտավորություններ		
Վարկեր և փոխառություններ	838,378	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	142,531	67,328
	<u>980,909</u>	<u>67,328</u>
Զուտ ենթարկվածություն	<u>(980,909)</u>	<u>(67,328)</u>

31 դեկտեմբեր 2022թ.

(հազար դրամ)

	ԱՄՆ դոլար	Եվրո
Ֆինանսական ակտիվներ		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	10,139	8,771
Մնացորդներ բանկերում և դրամարկղում	109	-
	<u>10,248</u>	<u>8,771</u>
Ֆինանսական պարտավորություններ		
Վարկեր և փոխառություններ	344,697	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	113,572	-

	458,269	-
Զուտ ենթարկվածություն	(448,021)	8,771

Զգայունության վերլուծություն

Դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի 10% արժևորումը (արժեզրկումը) ԱՄՆ դոլարի, Եվրոյի նկատմամբ կազդեր արտարժույթով արտահայտված ֆինանսական գործիքների չափման և շահույթի կամ վնասի վրա ստորև ներկայացված գումարների չափով: Վերլուծությունն իրականացնելիս ենթադրվում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ և հաշվի չի առնվում կանխատեսվող վաճառքների և գնումների ազդեցությունը:

10% արժևորում

(հազար դրամ)

	ԱՄՆ դոլարի ազդեցություն		Եվրոյի ազդեցություն	
	2023թ.	2022թ.	2023թ.	2022թ.
Շահույթ/(վնաս)	98,091	44,802	6,733	(877)

10% արժեզրկում

(հազար դրամ)

	ԱՄՆ դոլարի ազդեցություն		Եվրոյի ազդեցություն	
	2023թ.	2022թ.	2023թ.	2022թ.
Շահույթ/(վնաս)	(98,091)	(44,802)	(6,733)	877

Կապիտալի կառավարում

Ընկերությունն իր կապիտալը կառավարում է այնպես, որպեսզի ապահովի իր անընդհատ գործելու հնարավորությունը՝ առավելագույնին հասցնելով բաժնետերերի եկամուտները՝ փոխառու և կապիտալ միջոցների օպտիմալ համապատասխանություն ապահովելու միջոցով:

Ղեկավարությունը պարբերաբար վերանայում է Խմբի կապիտալի պահանջները, որպեսզի ապահովի արդյունավետ ֆինանսական կառուցվածք՝ միաժամանակ խուսափելով ավելորդ պարտքերի առաջացումից: Այստեղ հաշվի են առնվում Խմբի՝ պարտքերի տարբեր դասերի ենթակայության մակարդակները: Խումբը կառավարում է կապիտալի կառուցվածքը և ճշգրտումներ անում՝ հաշվի առնելով տնտեսական պայմանների փոփոխությունները և համապատասխան ակտիվների ռիսկի առանձնահատկությունները:

27. ԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔ

Ղեկավարությունը գտնում է, որ Խմբի ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքները մոտավորապես համապատասխանում են դրանց հաշվեկշռային արժեքներին՝ հաշվետու ամսաթվի դրությամբ:

28. ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԴԵՊԷՆԸ

Գործարար միջավայր

Որպես զարգացող շուկայական տնտեսական համակարգ, Հայաստանը շարունակում է անցնել քաղաքական և տնտեսական վերափոխումներ՝ կապված կենտրոնացված պլանավորումից դեպի ազատ շուկա անցման հետ: Հայաստանը չի ավարտել զարգացած ինստիտուցիոնալ համակարգի և ենթակառուցվածքների ձևավորման գործընթացը, որոնք սովորաբար առկա են ավելի հասուն ազատ շուկայական տնտեսություններում:

Նման տնտեսություններում գործող ընկերությունների համար վերը նշվածը առաջացնում է արտաձին գործոնների, ինչպիսիք են հարկային վարչարարությունը, կապիտալի հոսքի վերահսկողությունը, արտարժույթի գործառնությունները, ձևականությունները, արտահանման / ներմուծման սակագները և այլն, շարունակական կամ երբեմն կտրուկ փոփոխությունների բնորոշ ռիսկ, այդ գործոնները կարող են

բացասաբար ազդել Խմբի հետագա ֆինանսական վիճակի և արդյունքների վրա: Այնուամենայնիվ, քանի դեռ այս անորոշություններում առկա տարակուսանքներն ու ենթադրությունները շատ են, ղեկավարությունը չի կարող արժանահավատորեն գնահատել, թե ինչ չափով դրանք կարող են ազդեցություն ունենալ Ընկերության ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վրա:

Ընկերության ղեկավարությունը գտնում է, որ համապատասխան քայլեր է ձեռնարկում գոյություն ունեցող պայմաններում Խմբի կայունությունն ապահովելու համար:

Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են զարգացած շուկայական տնտեսություններում, Հայաստանում դեռևս այստեղ չեն կիրառվում:

Հարկեր

Հայաստանի հարկային համակարգին բնորոշ են օրենսդրության հաճախակի փոփոխությունները և Հարկային օրենսգրքի սխալ մեկնաբանությունից և գործնականում սխալ կիրառությունից բխող վիճաբանությունները:

Այդ հանգամանքները կարող են Հայաստանում գործող ընկերությունների համար ստեղծել հարկային ռիսկեր, ինչը բնորոշ է աշխարհի ցանկացած այլ զարգացող շուկայական տնտեսություններին: Դեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ՝ հիմնվելով կիրառելի հարկային օրենսդրության, պաշտոնական դրույթների և դատական որոշումների իրենց մեկնաբանության վրա: Այնուամենայնիվ, համապատասխան մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց գերակայության դեպքում ազդեցությունը սույն ֆինանսական հաշվետվությունների վրա կարող է զգալի լինել:

29. ԳՈՐԾԱՐՔՆԵՐ ԿԱՊԱԿՑՎԱԾ ԿՈՂՄԵՐԻ ՀԵՏ

Խմբի կապակցված կողմերում ներառվում են նրա մասնակիցը և հիմնական ղեկավար անձնակազմը:

Ստորև ներկայացված են կապակցված կողմերի հետ կատարված գործարքներն ու մնացորդները:

Գործարքներ	2023թ.	(հազար դրամ) 2022թ.
	<i>Մասնակից</i>	
Շահաբաժինների վճարում	4,610	-
Փոխառության ստացում	6,932,267	138,518
Փոխառության հետվերադարձ	6,580,170	162,924
<i>Հիմնական ղեկավար անձնակազմ</i>		
Աշխատավարձ և պարգևատրումներ	23,577	8,500
<i>Մնացորդներ</i>		
<i>Մասնակից</i>		
Ստացված փոխառություն	578,189	201,919
<i>Հիմնական ղեկավար անձնակազմ</i>		
Չվճարված արձակուրդային	22,642	6,919

«ՇՏԻԳԵՆ»

**ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

31 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2022թ.

ԵՐԵՎԱՆ 2023


Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն	6
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն	8
Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն	9
Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

28.12.2023թ.
N 032325

Հ Ա Ս Ս Ա Տ Ու Մ Ե Մ

**«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ
Գլխավոր տնօրեն**



Վ. Գևորգյան

ԱՆԿԱՆ ԱՌՈՂԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Շտիգեն» ՄՊԸ-ի մասնակցին

Կարծիք

Մեր կողմից իրականացվել է «Շտիգեն» Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերության (հետայսու՝ «Ընկերություն») և նրա դուստր ընկերությունների (հետայսու՝ «Խումբ») համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, որոնք ներառում են 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համար շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Խմբի ֆինանսական վիճակը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները ու դրամական հոսքերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՄ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՄ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի (ՀՄԴ-ի Վարքագրք) և Հայաստանի Հանրապետությունում կիրառելի՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, և մենք կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝ այդ պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Խմբի ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՄ-ների համապատասխան համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվություններ, որոնք գերծ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ղեկավարությունը պատասխանատու է Խմբի՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու, ինչպես նաև գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, քանի դեռ ղեկավարությունը չի նախատեսում լուծարել Խումբը կամ դադարեցնել դրա գործունեությունը, կամ չունի իրատեսական այլընտրանք, բացի նշվածներից:

Կառավարման օղակներում ներգրավված անձինք պատասխանատու են Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ երաշխիքներ՝ խարդախությունների կամ սխալների հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից գերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն, որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՄ համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե սկնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցրած կարող են ազդել այս ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝ դրանց հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ, մենք.

- o Բացահայտում և գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- o Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ Ընկերության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- o Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- o Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյոք առկա է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել Խմբի անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ: Եթե մենք գալիս ենք եզրահանգման, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք համախմբված ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ եթե նման բացահայտումները պատշաճ կերպով ներկայացված չեն, մենք պետք է ձևավորենք կարծիքը: Մեր

ADVISORY · ASSURANCE · ACCOUNTING · TAX

Baker Tilly Armenia CJSC is a member of the global network of Baker Tilly International Ltd., the members of which are separate and independent legal entities.

եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, աուդիտորը չի կարող երաշխավորել, որ ապագա իրադարձությունները կամ հանգամանքները չեն կարող հանգեցնել նրան, որ Խումբը կորցնի իր անընդհատ գործելու կարողությունը:

- o Գնահատում ենք ընդհանուր առմամբ համախմբված ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, և արդյոք համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:
- o Ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ Խմբի ֆինանսական տեղեկատվության կամ գործունեության վերաբերյալ՝ ֆինանսական հաշվետվությունների մասին կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատվություն ենք կրում աուդիտորական աշխատանքների ուղղորդման, վերահսկման ու կատարման համար: Մենք լիովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հետ աուդիտի պլանավորած շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

Աուդիտոր

Մ. Սկրտչյան
28.12.2023թ.



ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՍ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՑՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

31 դեկտեմբերի 2022թ-ին ավարտված տարվա համար

	Ծան.	2022թ.	(հազար դրամ) 2021թ.
Հասույթ	5	4,621,511	3,350,567
Վաճառքի ինքնարժեք	6	(3,693,236)	(2,670,056)
Համախառն շահույթ		928,275	680,511
Իրացման ծախսեր	7	(303,236)	(237,318)
Վարչական ծախսեր	8	(511,796)	(304,127)
Այլ եկամուտներ	9	115,649	1,417
Այլ ծախսեր	10	(99,571)	(27,645)
Գործառնական շահույթ		129,322	112,838
Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից օգուտ, զուտ		24,864	450
Ֆինանսական ծախս, զուտ	11	(34,004)	(22,683)
Ասոցիացված կազմակերպության վնասի բաժին		(150)	-
Շահույթ մինչև հարկումը		120,032	90,605
Շահութահարկի գծով ծախս	12	(31,723)	(19,947)
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո		88,309	70,658
Այլ համապարփակ եկամուտ		-	-
Այլ համապարփակ արդյունք		-	-
Ընդամենը համապարփակ արդյունք		88,309	70,658

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

31 դեկտեմբերի 2022թ-ի դրությամբ

	Ծան.	2022թ.	(հազար դրամ) 2021թ.
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	13	137,879	85,251
Ոչ նյութական ակտիվներ		8,311	4,781
Ժամկետային ավանդներ	18	5,021	-
Հետաձգված հարկային ակտիվներ	14	12,798	7,698
Ներդրումներ չկապակցված կազմակերպություններում	15	15,972	7,733
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		179,981	105,463
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	16	1,356,900	1,448,103
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	17	1,005,210	657,639
Տրամադրված փոխառություններ		16,370	3,450
Ժամկետային ավանդներ	18	43,041	-
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	19	10,000	64,279
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	20	10,287	56,532
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		2,441,808	2,230,003
Ընդամենը ակտիվներ		2,621,789	2,335,466
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Սեփական կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	21	50	50
Կուտակված շահույթ		156,196	67,378
		156,246	67,428
Զվերահսկող բաժնեմաս		(1,279)	(770)
Ընդամենը սեփական կապիտալ		154,967	66,658
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	22	279,066	409,474
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		279,066	409,474
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	22	280,739	117,332
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	23	1,885,230	1,726,535
Շահութահարկի գծով պարտավորություն		21,787	15,467
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		2,187,756	1,859,334
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		2,621,789	2,335,466


 Հայկ Եղիայան
 Տնօրեն
 28 դեկտեմբերի 2023թ.


 Պրոֆիբս Բոնասարիսկ ՍՊԸ-ի
 ներկայացուցիչ Տիգրան Գասպարյան
 Գլխավոր հաշվապահ

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
31 դեկտեմբերի 2022թ-ին ա վարտված տարվա համար

	Կանոնադրական կապիտալ	Կուտակված շահույթ(վնաս)	Ընդամենը	Չվերահսկվող բաժնեմաս	(հազար դրամ) Ընդամենը կապիտալ
Մնացորդը առ 1 հունվարի 2021թ.	50	15,413	15,463	-	15,463
<i>Համապարփակ եկամուտ</i>					
Տարվա շահույթ	-	71,455	71,455	(797)	70,658
Ընդամենը համապարփակ արդյունք	-	71,455	71,455	(797)	70,658
<i>Կապիտալում ուղղակիորեն գրանցված գործարքներ սեփականատերերի հետ</i>					
Շահաբաժիններ	-	(19,490)	(19,490)	-	(19,490)
Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ	-	(19,490)	(19,490)	-	(19,490)
<i>Փոփոխություններ չվերահսկող բաժնեմասում</i>					
Ներդրումներ	-	-	-	27	27
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.	50	67,378	67,378	(770)	66,658
Մնացորդը առ 1 հունվարի 2022թ.	50	67,378	67,378	(770)	66,658
<i>Համապարփակ եկամուտ</i>					
Տարվա շահույթ	-	88,818	88,818	(509)	88,309
Ընդամենը համապարփակ արդյունք	-	88,818	88,818	(509)	88,309
<i>Կապիտալում ուղղակիորեն գրանցված գործարքներ սեփականատերերի հետ</i>					
Շահաբաժիններ	-	-	-	-	-
Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ	-	-	-	-	-
<i>Փոփոխություններ չվերահսկող բաժնեմասում</i>					
Ներդրումներ	-	-	-	-	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.	50	156,196	156,196	(1,279)	154,967

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
31 դեկտեմբերի 2022թ. -ին ավարտված տարվա համար

	2022	(հազար դրամ) 2021
Տարվա արդյունք	88,309	70,658
Ճշգրտումներ		
Մաշվածություն և ամորտիզացիա	38,058	29,375
Դեբիտորական պարտքերի դուրսգրում	62,510	-
Կրեդիտորական պարտքերի դուրսգրում	(86,007)	-
Հիմնական միջոցների օտարում	4,439	-
Ֆինանսական ծախս, զուտ	34,004	22,683
Հատկացումներ արձակուրդայինի պահուստին	28,332	19,307
Շահութահարկի գծով ծախս	31,723	19,947
Փոխարժեքային տարբերությունից օգուտ	(24,864)	(450)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր՝ մինչև շրջանառու կապիտալի փոփոխությունները	176,504	162,435
Փոփոխություններ՝		
Պաշարներում	91,203	780,065
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերում	(517,279)	(321,358)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերում	335,004	(623,628)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զեռոսքեր	85,432	(2,486)
Վճարված շահութահարկ	(30,503)	(11,478)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	54,929	(13,964)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(98,656)	(54,450)
Ներդրումներ չկապակցված կազմակերպություններում	(8,239)	(1,319)
Փոխառությունների տրամադրում	(12,920)	(650)
Ավանդների (ներդրում)/ հավաքագրում	(48,062)	20,000
Ստացված շահաբաժիններ	24,619	-
Ստացված տոկոսային եկամուտ	6,537	3,263
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	(136,721)	(33,156)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ստացված վարկեր, զուտ	77,642	146,375
Տոկոսների վճարում	(40,541)	(25,946)
Շահաբաժինների վճարում	-	(19,490)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	37,101	100,939
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/աճ	(44,691)	53,819
Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(1,554)	(1,482)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբի դրությամբ	56,532	4,195
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջի դրությամբ	10,287	56,532

**ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ
ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

31 դեկտեմբերի 2022թ.-ին ավարտված տարվա համար

1. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

31 դեկտեմբերի 2021թ. ավարտված տարվա համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներառում են «Շտիզեն» ՍՊԸ-ի (հետայսու՝ «Ընկերություն») և նրա դուստր ընկերությունների՝ «Էներքս» ՓԲԸ-ի, «Անդրոն» ՓԲԸ-ի և «Շտիզեն Ըղվայգրի» ՍՊԸ-ի (բոլորը միասին հետայսու՝ «Խումբ») ֆինանսական հաշվետվությունները:

«Շտիզեն» ՍՊԸ-ն հիմնադրվել է 2011թ-ին Հայաստանի Հանրապետության օրենքների ներքո՝ ՀՀ քաղաքացի Հայկ Վալերիկի Շեկյանի կողմից: Ընկերության գրասենյակը գտնվում է 0033, ՀՀ ք. Երևան, Վիկտոր Համբարձումյան 119, բն 23:

Ընկերության գործունեության հիմնական նպատակը խնայող և անվտանգ արևային էներգետիկ համակարգերի կառուցումն է: Ընկերությունը նախագծել, կառուցել և սպասարկում է տարածաշրջանի խոշորագույն արևային ջերմային կայանը (Grand Sport), ինչպես նաև Հայաստանի խոշորագույն արևային էլեկտրակայանները (Green Energy, ArSun, Solar 5):

Դուստր կազմակերպությունները հիմնադրվել են 2021թ. ՀՀ օրենքների ներքո: Ընկերությանն են պատկանում «Էներքս» ՓԲԸ-ի և «Անդրոն» ՓԲԸ-ի բաժնետոմսերի 90% և «Շտիզեն Ըղվայգրի» ՍՊԸ-ի բաժնեմասի 51%: Ընկերությանն են պատկանում նաև Շտիզեն Վենչուրս ՓԲԸ-ի բաժնետոմսերի 30%: Վերջինս դասակարգվել է որպես Ընկերության ասոցիացված կազմակերպություն:

2. ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

2.1 Համապատասխանություն

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՄԽ) կողմից հրապարակված՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն:

Զափման հիմունքներ

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են պատմական արժեքի սկզբունքով:

2.2 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որը Խմբի գործառնական արժույթն է և որով ներկայացվում են այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.3 Գնահատումների և դատողությունների կիրառում

Ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունից պահանջվում է կատարել մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամուտների և ծախսերի ներկայացված գումարների վրա: Գնահատումները և վերջիններիս համար հիմք հանդիսացող ենթադրությունները հիմնված են պատմական փորձի և այլ տարբեր գործոնների վրա, որոնք ողջամիտ են համարվում՝ ելնելով այդ պահին առկա գիտելիքներից: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և վերջիններիս համար հիմք հանդիսացող ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են վերանայման ժամանակաշրջանում, եթե գնահատումները ազդեցություն ունեն միայն այդ ժամանակաշրջանի վրա: Եթե ազդեցությունը վերաբերում է ընթացիկ և ապագա ժամանակաշրջաններին, ապա վերանայումները ճանաչվում են ինչպես ընթացիկ, այնպես էլ ապագա ժամանակաշրջաններում:

Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են ստորև.

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետները

Ղեկավարությունը կատարել է հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետների գնահատում: Ղեկավարության համոզմամբ գնահատված հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետները էականորեն չեն տարբերվում այդ ակտիվների տնտեսական կյանքից: Եթե հիմնական միջոցների օգտակար ծառայության փաստացի ժամկետները տարբերվեն գնահատումներից, ապա ֆինանսական հաշվետվությունները կարող են էականորեն փոխվել:

Չափում. անհուսալի ու կասկածելի պարտքերի պահուստ

Խումբը վերանայում է իր առևտրային և այլ դեբիտորական պարտքերը՝ դրանց վերականգնելիության ապացույցներ հայտնաբերելու համար: Այդպիսի ապացույցը ներառում է հաճախորդի վճարումների հաշվառումը և հաճախորդի ընդհանուր ֆինանսական դիրքը: Եթե առկա են պարտքի չվերականգնման հայտանիշեր, ապա հաշվարկվում է փոխհատուցվող գումարը և ձևավորվում է պահուստ՝ համապատասխան անհուսալի և կասկածելի պարտքերի համար: Պահուստի գումարը արտացոլվում է շահույթում կամ վնասում: Վարկային ռիսկի ուսումնասիրությունը շարունակական գործընթաց է, և պահուստի գնահատման համար կիրառվող մեթոդաբանությունն ու ենթադրությունները պարբերաբար վերանայվում են և համապատասխանաբար ճշգրտվում:

Հնացած և դանդաղ շրջանառելի պաշարների պահուստ

Խումբը ուսումնասիրում է իր պաշարների գրառումները՝ դրանց վաճառելիության և օտարման պահին իրացման գուտ արժեքի վերաբերյալ ապացույցներ գտնելու համար: Հնացած և դանդաղ շրջանառելի պաշարների պահուստը հիմնվում է ղեկավարության նախկին փորձի վրա՝ հաշվի առնելով պաշարների արժեքը, ինչպես նաև պաշարների յուրաքանչյուր դասի խմբաքանակի շարժը և մակարդակը:

Պահուստի գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Պաշարների իրացման գուտ արժեքի դիտարկման գործընթացը շարունակական է, և հնացած ու դանդաղ շրջանառելի պաշարների պահուստի գնահատման համար կիրառվող մեթոդաբանությունն ու ենթադրությունները պարբերաբար վերանայվում են և համապատասխանաբար ճշգրտվում:

3. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հետևյալ հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողաբար կիրառվել է սույն համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր տարիների համար և Խմբի ֆինանսական վիճակի ներկայացման ժամանակ: Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողականորեն կիրառվում է Խմբի բոլոր ընկերությունների կողմից:

3.1 Համախմբման հիմքերը

Դուստր ընկերություններն այն կազմակերպություններն են, որոնք վերահսկվում են Խմբի կողմից: Վերահսկողությունն առկա է, երբ Խումբը կարող է ղեկավարել կազմակերպության գործունեության ֆինանսական և գործառնական քաղաքականությունը՝ նրա գործունեությունից օգուտ ստանալու համար:

Տարվա ընթացքում ձեռք բերված կամ օտարված դուստր ընկերությունների ֆինանսական հաշվետվություններն ընդգրկված են Համախմբված համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ սկսած վերահսկողության սահմանման ամսաթվից մինչև վերահսկողության դադարեցման ամսաթիվը: Ներխմբային հաշվեկշիռները և ներխմբային գործարքներից չիրացված եկամուտներն ու ծախսերը դուրս են հանվում համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ժամանակ:

Անիրաժեշտության դեպքում ճշգրտումներ են արվում դուստր ընկերությունների ֆինանսական հաշվետվություններում՝ դրանց քաղաքականությունները Խմբի այլ անդամների կողմից կիրառվող քաղաքականությանը համապատասխանեցնելու համար:

3.2 Հասույթի ճանաչում

Հասույթը սովորական գործունեության ընթացքում տրամադրված ապրանքի և ծառայությունների համար ստացվելիք գումարն է և չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցումների իրական արժեքով՝ հանած

զեղչերը և վաճառքի հետ կապված հարկերը: Խմբի կողմից ստացված հասույթի ճանաչումը կատարվում է հետևյալ հիմունքով:

Ապրանքի վաճառք

Ապրանքի վաճառքը ճանաչվում է ապրանքի սեփականության հետ կապված էական ռիսկերը և սեփականությունից ստացվող օգուտները հաճախորդին փոխանցելուց հետո, ինչը սովորաբար տեղի է ունենում, երբ Խումբը վաճառում կամ առաքում է ապրանքը հաճախորդին, հաճախորդն ընդունում է ապրանքը, և համապատասխան դեբիտորական պարտքի հավաքագրելիությունը հիմնավորված է:

Ծառայությունների մատուցում

Ծառայությունների վաճառքը ճանաչվում է այն հաշվետու ժամանակաշրջանում, որում ավարտվել է ծառայությունների մատուցումը ըստ առանձին գործարքի, ինչը գնահատվում է որպես փաստացի մատուցված ծառայության և մատուցվող ամբողջ ծառայության հարաբերակցություն:

3.3 Ֆինանսական եկամուտ և ծախս

Խմբի ֆինանսական եկամուտներն ու ծախսերը կազմված են հետևյալից.

- Տոկոսային եկամուտ
- Տոկոսային ծախս
- Ֆինանսական ակտիվների ու ֆինանսական պարտավորությունների գծով փոխարժեքային տարբերություններից առաջացող զուտ օգուտ կամ վնաս

Տոկոսային եկամուտը կամ ծախսը ճանաչվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանը անմիջականորեն վերագրելի փոխառության ծախսումները այդ ակտիվի արժեքի մասն են կազմում (կապիտալացվում են):

3.4 Աշխատակիցների վարձատրություն

Աշխատավարձերը և աշխատողների այլ հատուցումները չափվում են չզեղչված հիմունքով և ծախսագրվում են այն ժամանակաշրջանում, որում համապատասխան ծառայությունը մատուցվել է:

3.5 Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Խմբի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը. 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 393.57 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 420.06 ՀՀ դրամ (2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 480.14 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 542.61 ՀՀ դրամ): Ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում և չափվում են պատմական արժեքով (հաշվարկվում են՝ օգտագործելով գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքը), բացառությամբ իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածների, որոնք վերահաշվարկվում են իրական արժեքի չափման օրվա դրությամբ գործող փոխարժեքով:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

3.6 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Սկզբնական արժեքը ներառում է ակտիվի ձեռքբերմանն ուղղակի վերագրելի ծախսումները: Սեփական ուժերով կառուցված ակտիվների սկզբնական արժեքը ներառում է կյուրերի արժեքը, ուղղակի աշխատուժի գծով ծախսերը, ակտիվն իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ցանկացած այլ ծախսումները, ակտիվի ապատեղակայման և քանդման ծախսերը, տեղանքի

վերականգնման ծախսերը և փոխառության կապիտալացված ծախսումները: Ձեռքբերված համակարգչային ծրագիրը, որը հանդիսանում է համապատասխան սարքավորման ֆունկցիոնալության անբաժանելի մասը, կապիտալացվում է որպես այդ սարքավորման մաս:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում որպես այլ եկամուտ/ծախս:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները ճանաչվում են հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքում, եթե հավանական է, որ այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի Խումբ, իսկ արժեքը կարող է արժանահավաստորեն չափվել: Փոխարինված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքը ապաճանաչվում է: Հիմնական միջոցի առօրյա սպասարկման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ առաջանալուն պես:

Մաշվածություն

Հիմնական միջոցների միավորների մաշվածության հաշվարկը սկսվում է դրանց տեղադրման և շահագործման հանձնելու պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններիս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Մաշվածությունը հաշվարկվում է՝ հիմնվելով ակտիվի սկզբնական արժեքի վրա՝ հանած դրա գնահատած մնացորդային արժեքը:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների միավորի յուրաքանչյուր մասի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, քանի որ այդ մեթոդն առավել ճիշտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտների օգտագործման մոդելը, բացառությամբ միջազգային բեռնավորիադրումների համար օգտագործվող փոխադրամիջոցների, որոնց մաշվածությունը ճանաչվում է թողարկված միավորների մեթոդով՝ համաձայն յուրաքանչյուր շահագործված կիրառման: Հողատարածքի գծով մաշվածություն չի հաշվառվում:

Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Մեքենաներ և սարքավորումներ	-5 տարի
Արտադրական տնտեսական գույք	-5 տարի
Տրանսպորտային միջոցներ	-8 տարի
Համակարգչային տեխնիկա	-1 տարի

Մաշվածության հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և, անհրաժեշտության դեպքում, ճշգրտվում:

3.7 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Խմբի կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն դեպքում, երբ դրանք մեծացնում են համապատասխան ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կատարվելուն պես:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության գնահատված ժամկետների ընթացքում, սկսած դրանց օգտագործման համար մատչելի լինելու ամսաթվից, քանի որ այդ մեթոդն առավել ճիշտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտների օգտագործման մոդելը: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության գնահատված ժամկետը կազմում է 10 տարի:

Ամորտիզացիայի հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտին և, անհրաժեշտության դեպքում, ճշգրտվում:

3.8 Պաշարներ

Պաշարները չափվում են սկզբնական արժեքից և իրացման գուտ արժեքից նվազագույնով: Պաշարների սկզբնական արժեքը հաշվարկվում է միջին կշռված արժեքի սկզբունքով և ներառում է պաշարների ձեռքբերման ծախսումները, արտադրական կամ փոխարինման ծախսումները և դրանք ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված այլ ծախսումները: Արտադրված պաշարների և անավարտ արտադրանքի դեպքում սկզբնական արժեքը ներառում է արտադրական վերադիր ծախսումների համապատասխան մասը՝ հիմք ընդունելով արտադրական նորմատիվային հզորությունը:

Իրացման գուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի գնահատված գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար ծախսումները:

3.9 Ֆինանսական գործիքներ

ՖՀՄՍ 9-ը ներառում է ֆինանսական ակտիվների երեք հիմնական դաս՝ ամորտիզացված արժեքով չափվող, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող և շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ: ՖՀՄՍ 9-ով նախատեսված ֆինանսական ակտիվների դասակարգումը որպես կանոն հիմնված է այն բիզնես մոդելի վրա, որի շրջանակներում կառավարվում է ֆինանսական ակտիվը, և դրամական միջոցների հոսքերի պայմանագրով նախատեսված այդ ակտիվին վերաբերող բնութագրերի վրա: ՖՀՄՍ 9-ի համաձայն՝ այլևս չեն գործում ՀՀՄՍ 39-ով սահմանված մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների, փոխառությունների և դեբիտորական պարտքերի և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների դասերը: ՖՀՄՍ 9-ը մեծամասամբ պահպանում է ֆինանսական պարտավորությունների դասակարգման և չափման համար գործող ՀՀՄՍ 39-ի պահանջները:

ՖՀՄՍ 9-ի կիրառումն էական ազդեցություն չի ունեցել ֆինանսական պարտավորություններին վերաբերող խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականության վրա:

Ճանաչում և սկզբնական չափում

Առևտրական դեբիտորական պարտքերի սկզբնական ճանաչումը տեղի է ունենում դրանց առաջացման օրը: Մյուս բոլոր ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում, երբ խումբը դառնում է գործիքի պայմանագրային դրույթների կողմ:

Ֆինանսական ակտիվի (եթե այն առևտրական դեբիտորական պարտք չէ, որը չի պարունակում էական ֆինանսավորման բաղկացուցիչ) կամ ֆինանսական պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով գումարած, շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չչափվող միավորի համար, գործիքի ձեռքբերմանը կամ թողարկմանն ուղղակիորեն վերագրելի գործարքի հետ կապված ծախսումները: Էական ֆինանսավորման բաղադրիչ չպարունակող առևտրական դեբիտորական պարտքի սկզբնական չափումն իրականացվում է գործարքի գնով:

Դասակարգում և հետագա չափում

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվը դասակարգվում է որպես ամորտիզացված արժեքով չափվող, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային ներդրումների համար, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող՝ բաժնային ներդրումների համար, կամ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն դեպքերի, երբ խումբը փոխում է ակտիվների կառավարման իր բիզնես մոդելը, որի դեպքում բոլոր այն ֆինանսական ակտիվները, որոնց վրա ազդում է այդ փոփոխությունը, վերադասակարգվում են բիզնես մոդելի փոփոխությանը հաջորդող առաջին հաշվետու ժամանակաշրջանի առաջին օրը:

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախատեսված չէ որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող.

- ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ակտիվը պայմանագրային դրամական միջոցների հոսքեր հավաքագրելու համար և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացում են դրամական միջոցների հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ:

Առևտրական նպատակներով չպահվող բաժնային գործիքում ներդրման սկզբնական ճանաչման ժամանակ Խումբը կարող է անդառնալիորեն որոշել ներկայացնել ներդրման իրական արժեքի հետագա փոփոխություններն այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում: Այս ընտրությունը կատարվում է առանձին յուրաքանչյուր ներդրման համար:

Բոլոր ֆինանսական ակտիվները, որոնք դասակարգված չեն որպես ամորտիզացված արժեքով չափվող կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող, ինչպես ներկայացված է վերը, չափվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով: Այս ակտիվները ներառում են բոլոր ածանցյալ ֆինանսական ակտիվները: Սկզբնական ճանաչման պահին Խումբը կարող է անդառնալիորեն նախատեսել ֆինանսական ակտիվը, որն այլապես բավարարում է ամորտիզացված արժեքով կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափման պահանջները, որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե դա թույլ կտա վերացնել կամ էականորեն նվազեցնել հաշվառման անհամապատասխանությունը, որը հակառակ դեպքում կառաջանա:

Ֆինանսական ակտիվներ – Բիզնես մոդելի գնահատում

Խմբի պորտֆելի մակարդակով գնահատում է այն բիզնես մոդելի նպատակը, որի շրջանակներում պահվում է ակտիվը, քանի որ այս գնահատումը լավագույնս արտացոլում է գործունեության կառավարման և ղեկավարությանը տեղեկատվության տրամադրման եղանակը: Գնահատման ժամանակ դիտարկվում է հետևյալ տեղեկատվությունը.

- պորտֆելի համար սահմանված քաղաքականությունը և նպատակները և այդ քաղաքականության աշխատանքը գործնականում: Մասնավորապես, արդյոք ղեկավարության ռազմավարությունն ուղղված է պայմանագրով նախատեսված տոկոսային եկամտի ստացմանը, տոկոսադրույքների որոշակի կառուցվածքի պահպանմանը, ֆինանսական ակտիվների մարման ժամկետների համապատասխանեցմանը համապատասխան պարտավորությունների մարման ժամկետներին կամ դրամական միջոցների ակնկալվող արտահոսքին, կամ դրամական միջոցների հոսքերի իրացմանն ակտիվների վաճառքի միջոցով:
- ինչպես է գնահատվում պորտֆելի եկամտաբերությունը և ինչպես է այդ տեղեկատվությունը հաղորդվում Խմբի ղեկավարությանը:
- բիզնես մոդելի (և այդ բիզնես մոդելի շրջանակներում պահվող ֆինանսական ակտիվների) արդյունավետության վրա ազդող ռիսկերը և այդ ռիսկերի կառավարման եղանակը:

Ֆինանսական ակտիվների փոխանցումը երրորդ կողմերին այնպիսի գործարքներում, որոնք չեն բավարարում ապաճանաչման պայմանները, չի դիտարկվում որպես վաճառք այս նպատակի համար, և Խումբը շարունակում է ճանաչել ակտիվները:

Ֆինանսական ակտիվները, որոնք պահվում են առևտրական նպատակների համար կամ կառավարվում են և որոնց ստեղծած արդյունքը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, չափվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով:

Ֆինանսական ակտիվներ – Գնահատում, թե արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ

Այս գնահատման նպատակների համար «մայր գումարը» սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեքը սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» սահմանվում է որպես փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և փոխատվության հետ կապված այլ հիմնական ռիսկերի և ծախսերի (օրինակ՝ իրացվելիության ռիսկի և վարչական ծախսերի), ինչպես նաև շահույթի մարժայի հատուցում:

Գնահատելիս, թե արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ, Խումբը դիտարկում է գործիքի պայմանագրային պայմանները: Այստեղ ներառվում է այն գնահատումը, թե արդյոք ֆինանսական ակտիվը պարունակում է այնպիսի պայմանագրային պայման, որը կարող է այնպես փոխել պայմանագրային դրամական միջոցների ժամկետը կամ գումարը, որ ֆինանսական ակտիվը չի բավարարի այդ պայմանը: Այս գնահատումն իրականացնելիս Խումբը դիտարկում է հետևյալը.

- պայմանական դեպքերը, որոնք կարող են փոխել դրամական միջոցների գումարը կամ ժամկետները,
- վաղաժամկետ մարման և գործողության ժամկետի երկարաձգման պայմանները:

Վաղաժամկետ մարման պայմանը համապատասխանում է միայն մայր գումարի և տոկոսների վճարում հանդիսանալու չափանիշին, եթե վաղաժամկետ մարման գումարը, ըստ էության, իրենից ներկայացնում է մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների չվճարված գումարները, որոնք կարող են

ներառել լրացուցիչ ողջամիտ հատուցում պայմանագրի վաղաժամկետ դադարեցման համար: Բացի այդ, պայմանագրի անվանական արժեքի գեղչով կամ հավելվածարով ձեռքբերված ֆինանսական ակտիվի համար վաղաժամկետ մարում թույլատրող կամ պահանջող պայմանն այն գումարի չափով, որն, ըստ էության, իրենից ներկայացնում է պայմանագրի անվանական արժեքը գումարած հաշվեգրված (սակայն չվճարված) պայմանագրային տոկոսները (կարող են ներառել լրացուցիչ ողջամիտ հատուցում պայմանագրի վաղաժամկետ դադարեցման համար), դիտարկվում է որպես նշված չափանիշին համապատասխանող, եթե վաղաժամկետ մարման պայմանի իրական արժեքն էական չէ սկզբնական ճամնաչման պահին:

Ֆինանսական ակտիվներ – Հետագա չափում, շահույթ և վնաս
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Այս ակտիվները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ամորտիզացված արժեքը նվազեցվում է արժեզրկումից կորստի չափով: Տոկոսային եկամուտը, փոխարժեքային տարբերություններից առաջացող շահույթը և վնասը և արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում: Ապաճանաչումից առաջացող շահույթը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Ֆինանսական պարտավորություններ – Դասակարգում, հետագա չափում, շահույթ և վնաս

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես ամորտիզացված արժեքով չափվող կամ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող: Ֆինանսական պարտավորությունը դասակարգվում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե այն դասվում է առևտրական նպատակներով պահվող գործիքների դասին, հանդիսանում է ածանցյալ գործիք կամ նախատեսված է որպես այդպիսին սկզբնական ճանաչման պահին: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունները չափվում են իրական արժեքով, իսկ դրանց գծով գուտ շահույթը և վնասը, ներառյալ՝ տոկոսային ծախսը, ճանաչվում են շահույթում կամ վնասում: Այլ ֆինանսական պարտավորությունները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Տոկոսային ծախսը և փոխարժեքային տարբերություններից առաջացող շահույթը և վնասը ճանաչվում են շահույթում կամ վնասում: Ապաճանաչումից առաջացող ցանկացած շահույթը կամ վնասը նույնպես ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների փոփոխություն

Ֆինանսական ակտիվներ

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները փոխվում են, Խումբը գնահատում է, թե արդյոք փոփոխված ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Եթե դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր են («նշանակալի փոփոխություն»), ապա սկզբնական ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս դեպքում սկզբնական ֆինանսական ակտիվն ապաճանաչվում է և ճանաչվում է նոր ֆինանսական ակտիվ՝ իրական արժեքով:

Խումբն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում, այսինքն, գնահատում է, թե արդյոք սկզբնական ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբերվում են փոփոխված կամ փոխարինող ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերից: Խումբը գնահատում է փոփոխության նշանակալի լինելը քանակական և որակական գործոնների հիման վրա հետևյալ հերթականությամբ՝ որակական գործոններ, քանակական գործոններ, որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցություն: Եթե դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր են, ապա սկզբնական ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս գնահատումն իրականացնելիս Խումբը կիրառում է ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման ուղեցույցին նմանատիպ ուղեցույց:

Խումբը եզրահանգում է, որ փոփոխությունը նշանակալի է ելնելով հետևյալ որակական գործոններից.

- ֆինանսական ակտիվի արժույթի փոփոխություն,
- գրավի կամ ապահովվածության այլ միջոցների փոփոխություն:

Եթե ամորտիզացված արժեքով հաշվառվող փոփոխված ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր չեն, փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը: Այս դեպքում, Խումբը վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային

արժեքը և համախառն հաշվեկշռային արժեքի ճշգրտումից առաջացող գումարը ճանաչում է որպես փոփոխության գծով շահույթ կամ վնաս՝ շահույթի կամ վնասի կազմում:

Ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը վերահաշվարկվում է որպես ֆինանսական ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված, վերանայված կամ փոփոխված պայմանագրային դրամական միջոցների ներկա արժեք: Ցանկացած կրած ծախսերը կամ վճարված վճարները ճշգրտում են փոփոխված ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում են փոփոխված ֆինանսական ակտիվի գործողության մնացած ժամկետի ընթացքում:

Ֆինանսական պարտավորություններ

Խումբն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ փոխվում են վերջինիս պայմանները և երբ փոփոխված պայմաններով պարտավորության գծով դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Այս դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն՝ իրական արժեքով: Մարված ֆինանսական պարտավորության և փոփոխված պայմաններով նոր ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքների տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Եթե փոփոխությունը (կամ փոխարինումը) չի հանգեցնում ֆինանսական պարտավորության ապաճանաչմանը, Խումբը կիրառում է այն հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, համաձայն որի ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը ճշգրտվում է, երբ փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչման, այսինքն, Խումբը ճանաչում է փոփոխության (կամ փոխարինման) արդյունքում առաջացող ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքի ճշգրտումը շահույթում կամ վնասում փոփոխության (կամ փոխարինման) ամսաբազմի դրությամբ:

Գոյություն ունեցող ֆինանսական պարտավորությունների գծով դրամական միջոցների հոսքերի փոփոխությունները չեն համարվում փոփոխություն, եթե հանդիսանում են գործող պայմանագրային պայմանների արդյունք:

Խումբն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում՝ դիտարկելով որակական գործոնները, քանակական գործոնները և որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցությունը: Խումբը եզրահանգում է, որ փոփոխությունը նշանակալի է հետևյալ որակական գործոնների հիման վրա.

- ֆինանսական պարտավորության արժույթի փոփոխություն,
- գրավի կամ ապահովվածության այլ միջոցների փոփոխություն,
- փոխարկման պայմանի ավելացում,
- ֆինանսական պարտավորության ստորադասության փոփոխություն:

Քանակական գնահատման համար պայմանները նշանակալիորեն տարբեր են, եթե նոր պայմանների համաձայն դրամական միջոցների հոսքերի զեղչված ներկա արժեքը, ներառյալ՝ վճարված վճարները (առանց ստացված վճարների)՝ զեղչված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով, առնվազն 10 տոկոսով տարբերվում է սկզբնական ֆինանսական պարտավորության գծով մնացած դրամական միջոցների հոսքերի զեղչված ներկա արժեքից: Եթե պարտքային գործիքների փոխարինումը կամ վերջիններիս պայմանների փոփոխությունը հաշվառվում է որպես մարում, ապա ցանկացած կրած ծախսերը կամ վճարված վճարները ճանաչվում են որպես մարումից շահույթի կամ վնասի մաս: Եթե փոխարինումը կամ պայմանների փոփոխությունը չի հաշվառվում որպես մարում, ապա ցանկացած կրած ծախսերը կամ վճարված վճարները ճշգրտում են պարտավորության հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում են փոփոխված պարտավորության գործողության մնացած ժամկետի ընթացքում:

Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Խումբն ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի ստացման պայմանագրային իրավունքներն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ որում, Խումբը ոչ փոխանցում է, ոչ էլ պահպանում է սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները և չի պահպանում վերահսկողությունը ֆինանսական ակտիվի նկատմամբ:

Խումբն իրականացնում է գործարքներ, որոնց շրջանակներում փոխանցում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվների սեփականության հետ կապված կամ բոլոր, կամ, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները: Նման դեպքերում փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում:

Ֆինանսական պարտավորություններ

Խումբն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ պայմանագրում նշված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում կամ ուժը կորցնում է: Խումբը նաև ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ փոփոխվում են վերջինիս պայմանները և երբ փոփոխված պարտավորությունից առաջացող դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր են, որի դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն՝ իրական արժեքով:

Ֆինանսական պարտավորության ապաճանաչման ժամանակ մարված հաշվեկշռային արժեքի և վճարված հատուցման (ներառյալ՝ փոխանցված ոչ դրամային ակտիվները կամ ստանձնած պարտավորությունները) միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները հաշվանցվում են և ներկայացվում են գուտ գումարով ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում միայն այն դեպքում, երբ Խումբն ունի գումարները հաշվանցելու ներկայումս իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը գուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

3.10 Արժեզրկում

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվները արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի գուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստը դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվների արժեզրկում

ՖՀՄՍ 9-ը փոխարինում է ՀՀՄՍ 39-ով սահմանված «կրած վնասի» մոդելը «սպասվող պարտքային վնասի» մոդելով: Արժեզրկման նոր մոդելը կիրառելի է ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների, պայմանագրային ակտիվների, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային գործիքներում ներդրումների, սակայն ոչ բաժնային գործիքներում ներդրումների համար: ՖՀՄՍ 9-ի համաձայն՝ պարտքային վնասն ավելի շուտ է ճանաչվում, քան պահանջվում էր ՀՀՄՍ 39-ով:

ՖՀՄՍ 9-ի արժեզրկման մոդելի գործողության ոլորտում գտնվող ակտիվների համար սովորաբար ակնկալվում է, որ արժեզրկումից կորուստները կաճեն և կդառնան առավել փոփոխական:

Խումբը ճանաչում է սպավող պարտքային վնասի գծով պահուստ ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների համար:

Խումբը չափում է վնասի գծով պահուստը ֆինանսական գործիքի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում սպասվող պարտքային վնասին հավասար գումարի չափով, բացառությամբ հետևյալ գործիքների, որոնց համար վնասի գծով պահուստը չափվում է 12 ամսվա ընթացքում սպասվող պարտքային վնասին հավասար գումարի չափով.

- (i) պարտքային արժեթղթեր, եթե որոշվել է, որ դրանք ունեն ցածր պարտքային ռիսկ հաշվետու ամսաթվի դրությամբ և
- (ii) այլ պարտքային արժեթղթեր և բանկային հաշիվների մնացորդներ, որոնց գծով պարտքային ռիսկը (օրինակ, ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ժամկետի ընթացքում պարտականությունների չկատարման ռիսկ) էականորեն չի աճել սկզբնական ճանաչման պահից:

Առևտրական դեբիտորական պարտքերի և պայմանագրային ակտիվների վնասի գծով պահուստը միջոց չափվում է ֆինանսական գործիքի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում սպասվող պարտքային վնասին հավասար գումարի չափով:

Երբ Խումբը որոշում է, թե արդյոք տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկի էական աճ սկզբնական ճանաչումից հետո և երբ գնահատում է սպասվող պարտքային վնասը, այն դիտարկում է ողջամիտ և հիմնավորված տեղեկատվությունը, որը տեղին է և հասանելի առանց անհարկի ծախսերի կամ ջանքերի: Գնահատումը ներառում է թե՛ քանակական և թե՛ որակական տվյալները, ինչպես նաև Խմբի նախկին փորձի և պարտքի հիմնավորված գնահատման վրա հիմնված վերլուծությունը և ներառում է հեռանկարի վերաբերյալ տեղեկատվությունը:

Խումբը ենթադրում է, որ տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկի էական աճ, եթե այն ավելի քան 365 օր ժամկետանց է:

Խումբը համարում է, որ ֆինանսական ակտիվի գծով պարտականությունները չեն կատարվել, եթե՝

- (i) հավանական չէ, որ փոխառուն ամբողջությամբ կկատարի պարտքի հետ կապված իր պարտականությունները, եթե Խումբը չձեռնարկի այնպիսի գործողություններ, ինչպիսին գրավի իրացումն է (վերջինիս առկայության դեպքում), կամ
- (ii) ֆինանսական ակտիվն ավելի քան 365 օր ժամկետանց է:

Ֆինանսական գործիքի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում սպասվող պարտքային վնասն իրենից ներկայացնում է այն սպասվող պարտքային վնասը, որն առաջանում է պարտավորությունների չկատարման բոլոր հնարավոր դեպքերի արդյունքում ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ամբողջ ժամկետի ընթացքում:

12 ամսվա ընթացքում սպասվող պարտքային վնասն իրենից ներկայացնում է սպասվող պարտքային վնասի այն մասը, որն առաջանում է պարտավորությունների չկատարման այն դեպքերի արդյունքում, որոնք հնարավոր են հաշվետու ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում (կամ ավելի կարճ ժամկետի ընթացքում, եթե գործիքի ակնկալվող գործողության ամբողջ ժամկետը պակաս է 12 ամսից):

Սպասվող պարտքային վնասի գնահատման ժամանակ դիտարկվող առավելագույն ժամկետն իրենից ներկայացնում է առավելագույն պայմանագրային ժամկետը, որի ընթացքում Խումբը ենթարկվում է պարտքային ռիսկի:

Սպասվող պարտքային վնասի չափում

Սպասվող պարտքային վնասն իրենից ներկայացնում է պարտքային վնասի հավանականությունից ելնելով կշռված պարտքային վնասի գնահատականը: Պարտքային վնասը չափվում է որպես բոլոր պակասող դրամական միջոցների ներկա արժեք (այսինքն՝ որպես տարբերություն այն դրամական միջոցների հոսքերի միջև, որոնք Խումբը պետք է ստանա պայմանագրի համաձայն, և որոնք ակնկալվում է ստանալ):

Արժեզրկված ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Խումբը գնահատում է ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվները և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող

պարտքային արժեթղթերն արժեզրկված լինելու տեսանկյունից: Ֆինանսական ակտիվը համարվում է արժեզրկված, եթե տեղի են ունեցել մեկ կամ ավելի դեպքեր, որոնք բացասական ազդեցություն ունեն ֆինանսական ակտիվի գծով գնահատված ապագա դրամական միջոցների հոսքերի վրա:

Ֆինանսական ակտիվի արժեզրկված լինելու վկայությունը ներառում է հետևյալ դիտարկելի տվյալները.

- փոխառուի կամ թողարկողի նշանակալի ֆինանսական դժվարությունները,
- պայմանագրի խախտումը, այդ թվում՝ պարտականությունների չկատարումը կամ վճարման ավելի քան 180 օր ուշացումը,
- Խմբի կողմից փոխառության կամ փոխատվության պայմանների այնպիսի վերանայումը, որը Խումբն այլ պայմաններում չէր դիտարկի,
- փոխառուի հավանական սնանկացումը կամ այլ ֆինանսական վերակազմավորումը կամ
- արժեթղթի համար գործող շուկայի վերացումը ֆինանսական դժվարությունների պատճառով:

Սպասվող պարտքային վնասի ներկայացումը համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների վնասի գծով պահուստը նվազեցվում է այդ ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքից:

Դուրսգրում

Ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը դուրս է գրվում, եթե Խումբը չունի ողջամիտ հիմքեր ակնկալելու ֆինանսական ակտիվի ամբողջական կամ մասնակի փոխհատուցումը: Խումբը չի ակնկալում դուրս գրված գումարների էական փոխհատուցում: Այնուամենայնիվ, դուրս գրված ֆինանսական ակտիվները կարող են դեռևս հանդիսանալ կատարողական գործողությունների առարկա՝ հասանելիք գումարների փոխհատուցման հետ կապված Խմբի ընթացակարգերի հետ համապատասխանությունն ապահովելու համար:

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Խումբն այս ակտիվները դիտարկում է արժեզրկման վկայության առանձին և հավաքական հիմունքներով: Բոլոր առանձին վերցված նշանակալի ակտիվները գնահատվում է արժեզրկման տեսանկյունից՝ առանձին հիմունքով: Արժեզրկման առանձին վկայություն չհայտնաբերելու դեպքում, այս ակտիվները գնահատվում է հավաքական հիմունքով՝ տեղի ունեցած, սակայն չբացահայտված արժեզրկման վկայություն հայտնաբերելու նպատակով:

Ակտիվները, որոնք առանձին վերցված նշանակալի չեն, գնահատվում են արժեզրկման տեսանկյունից հավաքական հիմունքով՝ խմբավորելով ռիսկի համանման բնութագրերով ակտիվները:

Հավաքական արժեզրկումը գնահատելիս Խումբը դիտարկում է փոխհատուցման ժամկետների և կրած վնասի գումարի նախորդ ժամանակաշրջանների տեղեկատվությունը և կատարում է ճշգրտում, եթե ընթացիկ տնտեսական և վարկավորման պայմանները թույլ են տալիս, որպեսզի փաստացի վնասն ավել կամ պակաս լիներ նախկինում առկա միտումներով առաջարկվողներից:

Արժեզրկումից կորուստը հաշվարկվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և այդ ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերություն: Կորստի գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ պահուստային հաշվում: Եթե Խումբը գտնում է, որ չկա ակտիվը փոխհատուցելու իրատեսական հնարավորություն, համապատասխան գումարները դուրս են գրվում: Եթե հետագայում տեղի ունեցած դեպքը հանգեցնում է արժեզրկումից կորստի գումարի նվազեցմանը և այդ նվազեցումը կարելի է անկողմնակալորեն վերագրել արժեզրկման ճանաչումից հետո տեղի ունեցած դեպքին, ապա արժեզրկումից կորստի գումարի նվազեցումը հակադարձվում է շահույթի կամ վնասի միջոցով:

3.11 Վարձակալություն

Երբ Խմբին են փոխանցվում վարձակալված ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները (ֆինանսական վարձակալություն), ակտիվը համարվում է անմիջականորեն գնված ակտիվ: Սկզբնապես որպես ակտիվ ճանաչված գումարը վարձակալված գույքի իրական արժեքի և վարձակալության ժամկետի ընթացքում վճարվելիք նվազագույն վարձավճարների ներկա արժեքի գումարներից փոքրագույնն է: Համապատասխան վարձակալական պարտավորությունը ներկայացվում է որպես պարտավորություն: Վարձակալության վճարները բաղկացած են երկու բաղադրիչից՝ մայր գումարից և տոկոսավճարներից: Տոկոսավճարների բաղադրիչը արտացոլվում է Համախմբված համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ վարձակալության ժամկետի ընթացքում, և հաշվարկվում է՝ ներկայացնելով

վարձակալության պարտավորության հաստատուն մասը: Մայր գումարի բաղադրիչը նվազեցնում է փոխատուին վճարվելիք գումարի հաշվեկշիռը:

Երբ վարձակալված ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները չեն փոխանցվում Խմբին (գործառնական վարձակալություն), Պայմանագրի կնքման ժամանակ Խումբը գնահատում է, թե արդյո՞ք պայմանագիրը վարձակալական է կամ պարունակում է վարձակալություն: Պայմանագիրը վարձակալական է կամ պարունակում է վարձակալության իրավունք, եթե այն փոխանցում է, փոխհատուցման դիմաց, հիմքում ընկած ակտիվի օգտագործումը տվյալ ժամանակահատվածում վերահսկելու իրավունքը: Ստուգելու համար, թե արդյո՞ք պայմանագիրը փոխանցում է առանձնացված ակտիվի օգտագործումը վերահսկելու իրավունքը, Խումբն օգտագործում է ՖՀՄՍ 16-ի վարձակալության սահմանումը:

Խումբը որպես վարձակալ

Խումբը կիրառում է ճանաչման և չափման միասնական մոտեցում բոլոր վարձակալությունների համար, բացառությամբ կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների: Խումբը ճանաչում է վարձակալության գծով պարտավորություններ՝ վարձակալության գծով վճարումներ կատարելու համար, և օգտագործման իրավունքով ակտիվներ, որոնք ներկայացնում են հիմքում ընկած ակտիվներն օգտագործելու իրավունքը:

Օգտագործման իրավունքով ակտիվներ

Խումբը ճանաչում է օգտագործման իրավունքով ակտիվներ վարձակալության սկզբնական ամսաթվի դրությամբ (այն ամսաթիվը, երբ հիմքում ընկած ակտիվը հասանելի կլինի օգտագործման համար): Օգտագործման իրավունքով ակտիվները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկման կորուստները, և ճշգրտվում են վարձակալության գծով պարտավորության ցանկացած վերաչափման պարագայում: Օգտագործման իրավունքով ակտիվների սկզբնական արժեքը ներառում է վարձակալության գծով ճանաչված պարտավորությունների գումարը, սկզբնական ուղղակի ծախսումները, վարձակալության մեկնարկի ամսաթվին կամ դրանից առաջ կատարված վարձակալության վճարները՝ հանած ստացված ցանկացած վարձակալության խրախուսավճարներ: Բացառությամբ այն դեպքերի, երբ Խումբը խելամտորեն համոզված է, որ ձեռք կրերի վարձակալված ակտիվի նկատմամբ սեփականության իրավունքը պայմանագրի ավարտին, օգտագործման իրավունքով ակտիվի մաշվածությունը հաշվարկում է գծային հիմունքով վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև օգտագործման իրավունքով ակտիվի օգտակար ծառայության ավարտի ամսաթվից և վարձակալության ժամկետի ավարտի ամսաթվից ամենավաղը: Օգտագործման իրավունքով ակտիվները ենթակա են արժեզրկման:

Վարձակալության գծով պարտավորություններ

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ Խումբը ճանաչում է վարձակալության գծով պարտավորությունը վարձակալության ժամկետի ընթացքում վճարման ենթակա վարձավճարների ներկա արժեքով: Վարձավճարները պարունակում են հաստատուն վճարումները (ներառյալ՝ ըստ էության հաստատուն վճարումներ)՝ հանած վարձակալության ցանկացած ստացվելիք խրախուսավճար, վարձակալության փոփոխուն վճարումներ, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, և գումարներ, որոնք ակնկալվում է, որ կվճարվեն մնացորդային արժեքի երաշխիքի ներքո: Վարձավճարները ներառում են նաև գնման օպցիոնի իրագործման գինը, երբ Խումբը խելամտորեն համոզված է, որ կիրագործի այդ օպցիոնը, և վարձակալությունը դադարեցնելու հետ կապված տուգանքների վճարումները, եթե վարձակալության ժամկետն արտացոլում է Խմբի վարձակալությունը դադարեցնելու օպցիոնի իրագործումը: Փոփոխուն վարձավճարները, որոնք կախված չեն ինդեքսից կամ դրույքից, ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, որի ընթացքում տեղի է ունենում այդ վճարումներին հանգեցնող դեպքը կամ իրավիճակը:

Վարձավճարների ներկա արժեքի հաշվարկման ժամանակ Խումբն օգտագործում է վարձակալության սկզբնական ամսաթվին լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը, եթե վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը հնարավոր չէ հեշտությամբ որոշել: Մեկնարկի ամսաթվից հետո վարձակալության գծով պարտավորության գումարը ավելացվում է վարձակալության գծով պարտավորության տոկոսը արտացոլելու համար, և նվազեցվում է՝ կատարված վարձավճարները արտացոլելու համար: Ավելին, վարձակալության գծով պարտավորության հաշվեկշռային արժեքը վերաչափվում է, եթե տեղի են ունենում վերափոխումներ, վարձակալության ժամկետի փոփոխություն, ըստ էության հաստատուն վարձավճարների փոփոխություն կամ հիմքում ընկած ակտիվի գնման օպցիոնի գնահատումներում փոփոխություն:

Կարճաժամկետ վարձակալություններ և փոքրարժեք ակտիվների վարձակալություններ

Խումբը բացառում է օգտագործման իրավունքով ակտիվների, ինչպես նաև կարճաժամկետ վարձակալության և փոքրարժեք ակտիվների վարձակալության գծով պարտավորությունների ճանաչումը: Խումբը ճանաչում է այդ վարձակալությունների հետ կապված վարձավճարները որպես ծախս՝ գծային հիմունքով, վարձակալության ժամկետի ընթացքում:

3.12 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Խումբը՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, ունի ընթացիկ իրավական կամ կառուցողական պարտավորություն, որը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, և հավանական է, որ այդ պարտավորությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Պահուստները որոշվում են ակնկալվող դրամական միջոցների ապագա հոսքերը գեղջելով հարկումից առաջ այն դրույքով, որն արտացոլում է տվյալ շուկայում փողի ժամանակային արժեքը և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերը: Զեղչի ծախսագրումը ճանաչվում է որպես ֆինանսական ծախս:

3.13 Բաժնետիրական կապիտալ

Խմբի կողմից թողարկված բաժնեմասեր, որոնք հաշվառվում են անվանական արժեքով:

3.14 Շահաբաժիններ

Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն՝ դրանց հայտարարման ժամանակաշրջանում:

3.15 Համեմատական տվյալներ

Անհրաժեշտության դեպքում համեմատական տվյալները ճշգրտվում են՝ ընթացիկ տարվա ներկայացման փոփոխություններին համապատասխանելու համար:

4. ՆՈՐ ԵՎ ՎԵՐԱՆԱՅՎԱԾ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման օրվա դրությամբ լույս են տեսել մի շարք նոր ստանդարտներ, գործող ստանդարտների վերաբերյալ փոփոխություններ և մեկնաբանություններ, որոնք դեռևս ուժի մեջ չեն մտել:

Խումբը վաղաժամկետ չի ընդունել այդ ստանդարտներից և մեկնաբանություններից որևէ մեկը: Ղեկավարությունը կանխատեսում է, որ կիրառելի նոր ստանդարտներն ու մեկնաբանությունները կընդունվեն Խմբի կողմից՝ դրանց ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող առաջիկա ժամանակաշրջանում:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Խմբի ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև:

- Ֆինանսական հաշվետվությունների հայեցակարգային հիմունքներին հղումներ (ՖՀՄՍ 3-ի փոփոխություններ)
- ՖՀՄՍ 17 «Ապահովագրության պայմանագրեր» և ՖՀՄՍ 17 «Ապահովագրության պայմանագրեր» փոփոխություններ
- Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտում (ՀՀՄՍ 1-ի և ՖՀՄՍ վերաբերյալ գործնական առաջարկներ 2-ի փոփոխություններ):

5. ՀԱՍՈՒՑԹ

	(հազար դրամ)	
	2022թ.	2021թ.
Ապրանքների վաճառքից	4,376,204	3,332,235
Ծառայությունների մատուցումից	245,307	18,332
	<u>4,621,511</u>	<u>3,350,567</u>

6. ՎԱՃԱՌՔԻ ԻՆՔՆԱՐԺԵՔ

	2022թ.	(հազար դրամ) 2021թ.
Նյութեր	2,709,931	2,389,024
Ձեռքբերված ծառայություններ	843,743	182,568
Փոխհատուցումներ աշխատակիցներին	130,141	89,154
Մաշվածություն և ամորտիզացիա	9,421	9,310
	<u>3,693,236</u>	<u>2,670,056</u>

7. ԻՐԱՑՄԱՆ ԾԱԽՍԵՐ

	2022թ.	(հազար դրամ) 2021թ.
Ինֆորմացիոն ծառայություն	35,230	95,477
Գովազդի և մարկետինգի ծախսեր	36,454	10,289
Վարձավճարներ	53,226	32,055
Տրանսպորտային ծախսեր	69,227	23,817
Փոխհատուցում աշխատակիցներին	67,746	45,877
Լիզինգի ծախսեր	30,903	17,298
Մաշվածություն և ամորտիզացիա	4,264	7,427
Ապահովագրական ծախսեր	4,296	5,070
Այլ ծախսեր	1,890	8
	<u>303,236</u>	<u>237,318</u>

8. ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

	2022թ.	(հազար դրամ) 2021թ.
Փոխհատուցումներ աշխատակիցներին	415,143	226,228
Առդիտորական և խորհրդատվական ծախսեր	21,106	16,834
Բանկային ծախսեր	19,255	33,184
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	14,594	7,626
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	3,274	3,093
Մաշվածության և ամորտիզացիայի ծախսեր	24,372	12,637
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	4,573	1,203
Զփոխհատուցվող հարկեր	8,290	-
Այլ ծախսեր	1,189	3,322
	<u>511,796</u>	<u>304,127</u>

9. ԱՅԼ ԵՎ ԱՄՈՆՏԵՐ

	2022թ.	(հազար դրամ) 2021թ.
Կրեդիտորական պարտքերի դուրսգրումից եկամուտ	86,007	-
Շահաբաժիններից եկամուտ	24,619	-
Այլ	5,023	1,417
	<u>115,649</u>	<u>1,417</u>

10. ԱՅԼ ԾԱԽՍԵՐ

	2022թ.	(հազար դրամ) 2021թ.
Հատկացումներ արձակուրդայինի պահուստին	28,332	19,307
Դեբիտորական պարտքերի դուրսգրման (արժեզրկման) ծախսեր	62,510	-
Այլ ծախսեր	8,729	8,338
	<u>99,571</u>	<u>27,645</u>

11. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾԱԽՍ, ԶՈՒՏ

	2022թ.	(հազար դրամ) 2021թ.
Վարկերից տոկոսային ծախսեր	(40,541)	(25,946)
Բանկային հաշիվներից տոկոսային եկամուտ	3,485	2,486
Ավանդից տոկոսային եկամուտ	3,052	777
	<u>(34,004)</u>	<u>(22,683)</u>

12. ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԾԱԽՍ

	2022թ.	(հազար դրամ) 2021թ.
Ընթացիկ հարկի գծով ծախս	(36,823)	(23,422)
Հետաձգված հարկի գծով փոխհատուցում (Ծանոթագրություն 14)	5,100	3,475
	<u>(31,723)</u>	<u>(19,947)</u>

13. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

	Մեքենաներ և սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Արտադրական, տնտեսական գույք գործիքներ	Այլ հիմնական միջոցներ	(հազար դրամ) Ընդամենը
Սկզբնական արժեք					
01-ը հունվարի 2021թ	11,802	9,049	45,309	12,440	78,600
Ավելացում	1,940	21,609	9,265	18,763	51,577
Օտարումներ/Դուրսգրումներ	(758)	-	(37)	(121)	(916)
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	12,984	30,658	54,537	31,082	129,261
Ավելացում	8,186	-	1,100	81,410	90,696
Օտարում/Դուրսգրում	(1,107)	(6,908)	-	(485)	(8,500)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	20,063	23,750	55,637	112,007	211,457
Մաշվածություն					
01-ը հունվարի 2021թ	9,901	1,304	2,423	3,179	16,807
Տարեկան մաշվածություն	2,124	7,578	13,220	4,282	27,204
Օտարումներ/Դուրսգրումներ	-	-	-	(1)	(1)
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	12,025	8,882	15,643	7,460	44,010
Տարեկան մաշվածություն	4,550	4,490	14,044	10,545	33,629
Օտարում/Դուրսգրում	(1,107)	(2,762)	-	(192)	(4,061)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	15,468	10,610	29,687	17,813	73,578
Զուտ հաշվեկշռային արժեք					
31 դեկտեմբերի 2021թ	959	21,776	38,894	23,622	85,251
31 դեկտեմբերի 2022թ	4,595	13,140	25,950	94,194	137,879

Որոշ սարքավորումները գրավադրված են:

Հիմնական միջոցների մաշվածության ծախսը բաշխվել է հետևյալ կերպ.

	(հազար դրամ)	
	2022թ.	2021թ.
Վաճառքի ինքնարժեք	9,121	9,162
Վարչական	20,244	10,672
Իրացման	4,264	7,370
	33,629	27,204

14. ՀԵՏԱԶԳՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ

	(հազար դրամ)	
	2022թ.	2021թ.
Տարեկգրի մնացորդ	7,698	4,223
Ֆինանսական արդյունքներում ճանաչված (տե՛ս ծանոթագրություն 12)	5,100	3,475
Տարեվերջի մնացորդ	12,798	7,698

Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների շարժ

	(հազար դրամ)		
	2021	Ֆինանսական արդյունքով ճանաչում	2022
Չօգտագործված արձակությայինի գծով պահուստ	7,698	5,100	12,798
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ	7,698	5,100	12,798
Զուտ հետաձգված հարկային ակտիվ	7,698	5,100	12,798

	(հազար դրամ)		
	2020	Ֆինանսական արդյունքով ճանաչում	2021
Չօգտագործված արձակությայինի գծով պահուստ	4,223	3,475	7,698
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ	4,223	3,475	7,698
Զուտ հետաձգված հարկային ակտիվ	4,223	3,475	7,698

15. ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ ՉԳԱՊԱԿՑՎԱԾ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

	2022թ.		2021թ.	
	Գումար (հազար դրամ)	Բաժնետոմսերի քանակ, բաժնեչափ (%)	Գումար (հազար դրամ)	Բաժնետոմսերի քանակ, բաժնեչափ (%)
Հայէկոնոմբանկ ԲԲԸ	14,725	823 հատ բաժնետոմս	7,723	463 հատ բաժնետոմս
Այ Թի Սի ՍՊԸ	570	19% բաժնեմասեր	10	19% բաժնեմասեր
Ռեպ Քառ ՍՊԸ	673	19% բաժնեմասեր	-	-
Սոլար-5 ՍՊԸ	4	19% բաժնեմասեր	-	-
	15,972		7,733	

16. ՊԱՇԱՐՆԵՐ

	2022թ.	(հազար դրամ) 2021թ.
Ապրանքներ պահեստում	3,128	50,035
Անավարտ արտադրություն	1,906	-
Հումք և նյութեր	1,351,866	1,398,068
	<u>1,356,900</u>	<u>1,448,103</u>

17. ԱՌԵՎՏՐԱՅԻՆ և ԱՅԼ ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ

	2022թ.	(հազար դրամ) 2021թ.
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	826,827	434,462
Տրված կանխավճարներ	176,653	221,911
Դեբիտորական պարտքեր հարկերի գծով	1,592	1,266
Այլ դեբիտորական պարտքեր	138	-
	<u>1,005,210</u>	<u>657,639</u>

Դեբիտորական պարտքերի իրական արժեքները հավասար են դրանց հաշվեկշռային արժեքներին: Հաշվետու ժամանակաշրջանում դուրս է գրվել 52,097 հազ. ՀՀ դրամի վաճառքների գծով դեբիտորական պարտքեր և 10,413 հազ. ՀՀ դրամի տրված կանխավճարներ: 2021թ. դուրսգրումներ չեն եղել:

18. ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՎԱՆԴՆԵՐ

	2022թ.	(հազար դրամ) 2021թ.
Արժույթ	48,062	-
ՀՀ դրամ	48,062	-

Ավանդների պայմաններն ու ժամկետները ներկայացված են ստորև.

Բանկի անվանում	Ավանդի մայր գումար	Արժույթ	Ավանդի ձևակերպման ամսաթիվ	Ավանդի վերադարձման ամսաթիվ	Տարեկան %	Ավանդի մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ. (հազար դրամ)	
						Մայր գումար	Հաշվեգրված %
Արմավիսբանկ ՓԲԸ	20,000,000	ՀՀ դրամ	04/04/2022թ.	19/03/2023թ.	10.25%	20,000	1,569
Արմավիսբանկ ՓԲԸ	20,000,000	ՀՀ դրամ	20/04/2022թ.	19/04/2023թ.	10.25%	20,000	1,472
Արմավիսբանկ ՓԲԸ	5,010,000	ՀՀ դրամ	22/12/2022թ.	15/03/2024թ.	8.25%	5,010	11
						<u>45,010</u>	<u>3,052</u>

19. ՊԱՀԱՆՋՆԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏԱՄԵ

Ընկերությունը իրականացնում է ապառիկ վաճառքներ: Ապառիկ վաճառքների ապահովման համար բանկը ստեղծում է Ընկերության հաշվարկային հաշիվներում առկա որոշ միջոցներ:

20. ՄԱՅՈՐԴՆԵՐ ԴՐԱՄԱՐԿՂՈՒՄ և ԲԱՆԿԵՐՈՒՄ

	2022թ.	(հազար դրամ) 2021թ.
Կանխիկ միջոցներ	5,201	4,409
Բանկային հաշիվներ	5,086	52,123
	<u>10,287</u>	<u>56,532</u>

21. ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կանոնադրական կապիտալը կազմել է 50,000 ՀՀ դրամ (2021թ.՝ 50,000 ՀՀ դրամ): Կանոնադրական կապիտալը բաղկացած է 1,000 ՀՀ դրամ անվանական արժեքով 50 բաժնեմասից: Ընկերության միակ մասնակիցն է ՀՀ քաղաքացի Հայկ Վալերիկի Շեկյանը:

22. ՎԱՐԿԵՐ և ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	2022թ.	(հազար դրամ) 2021թ.
Ոչ ընթացիկ		
Գրավով ապահովված բանկային վարկեր	74,547	126,660
Երկարաժամկետ փոխառություն	204,519	282,814
	<u>279,066</u>	<u>409,474</u>
Ընթացիկ		
Գրավով ապահովված բանկային վարկեր	280,691	117,332
Կարճաժամկետ փոխառություն	48	-
	<u>280,739</u>	<u>117,332</u>
Ընդամենը վարկեր և փոխառություններ	<u>559,805</u>	<u>526,806</u>

Վարկերի ու փոխառությունների պայմաններն ու ժամկետները ներկայացված են ստորև.

	Արժույթ	Մարման տարի	Անվանական տոկոսադրույք	2022թ.	(հազար դրամ) 2021թ.
Գրավով ապահովված բանկային վարկ (վարկային զիծ)	ՀՀ դրամ	05.03.22	12.50%	-	13,000
Գրավով ապահովված բանկային վարկ (վարկային զիծ)	ՀՀ դրամ	03.10.23	12.50%	28,600	-
Գրավով ապահովված բանկային վարկ	ՀՀ դրամ	07.03.22	8.50%	-	12,398
Գրավով ապահովված բանկային վարկ	ՀՀ դրամ	22.04.22	8.50%	-	1,781
Գրավով ապահովված բանկային վարկ	ՀՀ դրամ	22.07.22	9.38%	-	8,821
Գրավով ապահովված բանկային վարկ	ՀՀ դրամ	19.09.22	8.50%	-	7,875
Գրավով ապահովված բանկային վարկ	ՀՀ դրամ	30.12.22	8.50%	-	8,460
Գրավով ապահովված բանկային վարկ	ՀՀ դրամ	20.03.23	8.50%	2,010	9,639
Գրավով ապահովված բանկային վարկ	ՀՀ դրամ	14.05.27	8.50%	87,312	74,260
Գրավով ապահովված բանկային վարկ	ՀՀ դրամ	01.11.23	13.00%	20,000	20,000
Գրավով ապահովված բանկային վարկ	ՀՀ դրամ	27.11.23	12.50%	38,941	76,619
Գրավով ապահովված բանկային վարկ (օվերդրաֆա)	ՀՀ դրամ	14.10.22	11.50%	-	11,139
Գրավով ապահովված բանկային վարկ (օվերդրաֆա)	ՀՀ դրամ	16.10.23	11.50%	25,377	-
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	31.03.23	8.50%	15,156	-
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	27.04.23	8.50%	8,800	-
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	19.05.23	8.50%	5,035	-
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	19.05.23	8.50%	6,714	-
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	20.06.23	9.75%	4,024	-
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	04.07.23	9.75%	15,737	-
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	26.07.23	9.75%	10,504	-
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	15.09.23	10.25%	17,058	-
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	15.09.23	10.25%	14,539	-
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	18.10.23	10.50%	9,576	-
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	18.10.23	10.50%	5,283	-
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	16.11.23	10.00%	14,473	-
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	20.12.23	9.50%	3,541	-
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	20.12.23	9.50%	13,775	-
Գրավով ապահովված բանկային վարկ	ՀՀ դրամ	18.10.24	14.00%	8,783	-
Չապահովված փոխառություններ	ՀՀ դրամ	09.12.31	անտոկոս	5,362	142,217

Չապահովված փոխառություններ	ԱՄՆ դոլար	23.12.30	անտոկոս	196,557	138,027
Չապահովված փոխառություններ	ՀՀ դրամ	05.08.26	անտոկոս	2,120	2,090
Չապահովված փոխառություններ	ՀՀ դրամ	13.12.26	անտոկոս	480	480
Չապահովված փոխառություններ	ՀՀ դրամ	31.12.23	անտոկոս	40	-
Չապահովված փոխառություններ	ՀՀ դրամ	30.11.23	անտոկոս	8	-
				<u>559,805</u>	<u>526,806</u>

23. ԱՌԵՎՏՐԱՅԻՆ և ԱՅԼ ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ

	2022թ.	(հազար դրամ) 2021թ.
Կրեդիտորական պարտքեր ձեռքբերումների գծով	277,409	208,147
Ստացված կանխավճարներ	1,458,801	1,377,355
Վճարվելիք հարկեր և պարտադիր վճարներ	76,913	96,622
Չվճարված արձակուրդայինի պահուստ	71,098	42,767
Պարտավորություններ աշխատակիցներին	1,009	1,644
	<u>1,885,230</u>	<u>1,726,535</u>

24. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԸ

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև.

Ֆինանսական ակտիվներ

	2022թ.	(հազար դրամ) 2021թ.
Անորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	1,066,128	656,373
Ժամկետային ավանդներ	48,062	-
Ներդրումներ չկապակցված կազմակերպություններում	15,972	7,733
Տրամադրված փոխառություններ	16,370	3,450
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	10,000	64,279
Մնացորդներ բանկերում և դրամարկղում	10,287	56,532
	<u>1,166,819</u>	<u>788,367</u>

Ֆինանսական պարտավորություններ

	2022թ.	(հազար դրամ) 2021թ.
Անորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ		
Վարկեր և փոխառություններ	559,805	526,806
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	1,808,317	1,629,913
	<u>2,368,122</u>	<u>2,156,719</u>

25. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈւՂՂՈւԹՅՈՒՆՆԵՐԸ

Ֆինանսական գործիքներն օգտագործելիս Խումբը ենթարկվում է հետևյալ ռիսկերին.

- Պարտքային ռիսկ
- Իրացվելիության ռիսկ
- Շուկայական ռիսկ

Ղեկավարությունը լիովին պատասխանատու է Խմբի ռիսկերի կառավարման համակարգի մշակման և վերահսկողության համար:

Խմբի ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել և վերլուծել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Խումբը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և համակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են շուկայական պայմանների ու Խմբի գործունեության փոփոխություններն արտացոլելու նպատակով:

1) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով կնվազեն հաշվետու ամսաթվի դրությամբ առկա ֆինանսական ակտիվներից առաջացած ապագա դրամային հոսքերը: Այս ռիսկն առաջանում է ֆինանսական գործիքներից, ինչպիսիք են առևտրային և այլ դեբիտորական պարտքերը, տրված փոխառությունները և բանկերում պահվող դրամական միջոցներն ու դրանց համարժեքները:

Խումբը որդեգրել է քաղաքականություն՝ ապահովելու, որ ապրանքի ու ծառայությունների վաճառքը կատարվի պատշաճ վարկային պատմություն ունեցող հաճախորդներին, և շարունակաբար վերահսկում է իր դեբիտորական պարտքերի իրավիճակը: Փոխառությունները տրամադրվում են կապակցված կողմերին: Դրամային մնացորդները պահվում են վարկային պորտֆելի բարձր որակ ապահովող ֆինանսական հաստատություններում:

Պարտքային ռիսկի ազդեցությունը

Պարտքային ռիսկի առավելագույն ազդեցությունը ներկայացվում է ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքով: Պարտքային ռիսկի առավելագույն ազդեցությունը հաշվետու ամսաթվի դրությամբ բերված է ստորև.

	2022թ.	(հազար դրամ) 2021թ.
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	1,066,128	656,373
Ժամկետային ավանդներ	48,062	-
Ներդրումներ չկապակցված կազմակերպություններում	15,972	7,733
Տրամադրված փոխառություններ	16,370	3,450
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	10,000	64,279
Ընթացիկ բանկային հաշիվներ	5,086	52,123
	1,161,618	783,958

2) Իրացվելիության ռիսկ.

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Խումբը անկարող կլինի կատարել իր պարտավորությունները: Իրացվելիության ռիսկը առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում: Այդ անհամապատասխանությունը կարող է մեծացնել շահութաբերությունը, սակայն կարող է նաև մեծացնել կորուստների ռիսկը: Խումբն ունի այդպիսի կորուստների նվազեցմանն ուղղված ընթացակարգեր, որոնցից են բավարար դրամային միջոցներ և այլ բարձր իրացվելիության ընթացիկ ակտիվներ պահելը, ինչպես նաև համապատասխան վարկային միջոցների առկայությունը:

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների պայմանագրային ժամկետայնությունը՝ ներառյալ գնահատված տոկոսավճարները հաշվետու ամսաթվի դրությամբ:

31 դեկտեմբերի 2022թ.

	Հաշվեկշռային արժեք	Պայմանագրային դրամական միջոցների հոսքեր	Մինչև 3 ամիս	3-12 ամիս	1-5 տարի	5-10 տարի
Վարկեր և փոխառություններ	559,805	606,344	87,967	208,192	76,266	233,919
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	1,885,230	1,885,230	77,922	1,736,210	71,098	-
Շահութահարկի գծով պարտավորություն	21,788	21,788	-	21,788	-	-
	2,466,823	2,513,362	165,889	1,966,190	147,364	233,919

31 դեկտեմբերի 2021թ.

(հազար դրամ)

	Հաշվեկշռային արժեք	Պայմանագրային դրամական միջոցների հոսքեր	Մինչև 3 ամիս	3-12 ամիս	1-5 տարի	5-10 տարի
Վարկեր և փոխառություններ	526,806	563,941	53,236	81,292	149,169	280,244
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	1,726,535	1,726,535	98,266	1,585,502	42,767	-
Շահութահարկի գծով պարտավորություն	15,467	15,467	-	15,467	-	-
	2,268,808	2,305,943	151,502	1,682,261	191,936	280,244

3) Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը Խմբի եկամուտների կամ վերջինիս ֆինանսական գործիքների արժեքի փոփոխության ռիսկն է շուկայական գների, այդ թվում՝ արտարժույթի փոխարժեքների, տոկոսադրույքների և բաժնետոմսերի գների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն է, որը թույլ կտա պահպանել այս ռիսկին ենթարկվածության աստիճանն ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկն արտարժույթի փոխարժեքների տատանման հետևանքով ֆինանսական գործիքի ապագա դրամական հոսքերի իրական արժեքների տատանման ռիսկն է: Խումբը ենթարկվում է արտարժույթի ռիսկին այնքանով, որքանով չեն համապատասխանում Խմբի ֆունկցիոնալ արժույթը և այն արժույթները, որոնցով արտահայտված են Խմբի գործառնությունները, ակտիվներն ու պարտավորությունները: Արտարժույթի ռիսկը հիմնականում առաջանում է Խմբի ներգրավված վարկերից, արտերկրյա վաճառքներից և ձեռքբերումներից, որոնք հիմնականում արտահայտված են ԱՄՆ դոլարով, Եվրոյով, ՌԴ ռուբլով:

Ստորև ներկայացված է արտարժույթի ռիսկին Խմբի ենթարկվածությունը.

	ԱՄՆ դոլար	Եվրո
31 դեկտեմբեր 2022թ.		
Ֆինանսական ակտիվներ		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	10,139	8,771
Մնացորդներ բանկերում և դրամարկղում	109	-
	10,248	8,771
Ֆինանսական պարտավորություններ		
Վարկեր և փոխառություններ	344,697	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	113,572	-
	458,269	-
Զուտ ենթարկվածություն	(448,021)	8,771

	ԱՄՆ դոլար	Եվրո
31 դեկտեմբեր 2021թ.		
Ֆինանսական ակտիվներ		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	143,257	4,519
Մնացորդներ բանկերում և դրամարկղում	48,024	-
	191,281	4,519
Ֆինանսական պարտավորություններ		
Վարկեր և փոխառություններ	138,027	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	169,740	5,015
	307,767	5,015
Զուտ ենթարկվածություն	(116,486)	(496)

Զգայունության վերլուծություն

Դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի 10% արժևորումը (արժեզրկումը) ԱՄՆ դոլարի, Եվրոյի նկատմամբ կազդեր արտարժույթով արտահայտված ֆինանսական գործիքների չափման և շահույթի կամ վնասի վրա ստորև ներկայացված գումարների չափով: Վերլուծությունն իրականացնելիս ենթադրվում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ և հաշվի չի առնվում կանխատեսվող վաճառքների և գնումների ազդեցությունը:

10% արժևորում

	<i>(հազար դրամ)</i>			
	ԱՄՆ դոլարի ազդեցություն		Եվրոյի ազդեցություն	
	2022թ.	2021թ.	2022թ.	2021թ.
Շահույթ/(վնաս)	44,802	11,649	(877)	50

10% արժեզրկում

	<i>(հազար դրամ)</i>			
	ԱՄՆ դոլարի ազդեցություն		Եվրոյի ազդեցություն	
	2022թ.	2021թ.	2022թ.	2021թ.
Շահույթ/(վնաս)	(44,802)	(11,649)	877	(50)

Կապիտալի կառավարում

Խումբն իր կապիտալը կառավարում է այնպես, որպեսզի ապահովի իր անընդհատ գործելու հնարավորությունը՝ առավելագույնին հասցնելով բաժնետերերի եկամուտները՝ փոխառու և կապիտալ միջոցների օպտիմալ համապատասխանություն ապահովելու միջոցով:

Ղեկավարությունը պարբերաբար վերանայում է Խմբի կապիտալի պահանջները, որպեսզի ապահովի արդյունավետ ֆինանսական կառուցվածք՝ միաժամանակ խուսափելով ավելորդ պարտքերի առաջացումից: Այստեղ հաշվի են առնվում Խմբի պարտքերի տարբեր դասերի ենթակայության մակարդակները: Խումբը կառավարում է կապիտալի կառուցվածքը և ճշգրտումներ անում՝ հաշվի առնելով տնտեսական պայմանների փոփոխությունները և համապատասխան ակտիվների ռիսկի առանձնահատկությունները:

26. ԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔ

Ղեկավարությունը գտնում է, որ Խմբի ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքները մոտավորապես համապատասխանում են դրանց հաշվեկշռային արժեքներին՝ հաշվետու ամսաթվի դրությամբ:

27. ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԴԵՊԶԵՐ

Գործարար միջավայր

Որպես զարգացող շուկայական տնտեսական համակարգ, Հայաստանը շարունակում է անցնել քաղաքական և տնտեսական վերափոխումներ՝ կապված կենտրոնացված պլանավորումից դեպի ազատ շուկա անցման հետ: Հայաստանը չի ավարտել զարգացած ինստիտուցիոնալ համակարգի և ենթակառուցվածքների ձևավորման գործընթացը, որոնք սովորաբար առկա են ավելի հասուն ազատ շուկայական տնտեսություններում:

Նման տնտեսություններում գործող ընկերությունների համար վերը նշվածը առաջացնում է արտաձին գործոնների, ինչպիսիք են հարկային վարչարարությունը, կապիտալի հոսքի վերահսկողությունը, արտարժույթի գործառնությունները, ձևականությունները, արտահանման / ներմուծման սակագները և այլն, շարունակական կամ երբեմն կտրուկ փոփոխությունների բնորոշ ռիսկ, այդ գործոնները կարող են բացասաբար ազդել Խմբի հետագա ֆինանսական վիճակի և արդյունքների վրա: Այնուամենայնիվ, քանի դեռ այս անորոշություններում առկա տարակուսանքներն ու ենթադրությունները շատ են, ղեկավարությունը չի կարող արժանահավաստորեն գնահատել, թե ինչ չափով դրանք կարող են ազդեցություն ունենալ Խմբի ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վրա:

Խմբի ղեկավարությունը գտնում է, որ համապատասխան քայլեր է ձեռնարկում գոյություն ունեցող պայմաններում Խմբի կայունությունն ապահովելու համար:

Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են զարգացած շուկայական տնտեսություններում, Հայաստանում դեռևս այստեղ չեն կիրառվում:

Հարկեր

Հայաստանի հարկային համակարգին բնորոշ են օրենսդրության հաճախակի փոփոխությունները և Հարկային օրենսգրքի սխալ մեկնաբանությունից և գործնականում սխալ կիրառությունից բխող վիճաբանությունները:

Այդ հանգամանքները կարող են Հայաստանում գործող ընկերությունների համար ստեղծել հարկային ռիսկեր, ինչը բնորոշ է աշխարհի ցանկացած այլ զարգացող շուկայական տնտեսություններին: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ՝ հիմնվելով կիրառելի հարկային օրենսդրության, պաշտոնական դրույթների և դատական որոշումների իրենց մեկնաբանության վրա: Այնուամենայնիվ, համապատասխան մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց գերակայության դեպքում ազդեցությունը սույն ֆինանսական հաշվետվությունների վրա կարող է զգալի լինել:

28. ԳՈՐԾԱՐՔՆԵՐ ԿԱՊԱԿՑՎԱԾ ԿՈՂՄԵՐԻ ՀԵՏ

Խմբի կապակցված կողմերում ներառվում են նրա մասնակիցը և հիմնական ղեկավար անձնակազմը:

Ստորև ներկայացված են կապակցված կողմերի հետ կատարված գործարքներն ու մնացորդները:

Գործարքներ	2022թ.	(հազար դրամ) 2021թ.
	<i>Մասնակից</i>	
Շահաբաժինների վճարում	-	19,490
Փոխառության ստացում	138,518	218,279
Փոխառության հետվերադարձ	162,924	67,833
<i>Հիմնական ղեկավար անձնակազմ</i>		
Աշխատավարձ և պարգևատրումներ	8,500	4,955
<i>Մնացորդներ</i>		
<i>Մասնակից</i>		
Ստացված փոխառություն	201,919	280,244
<i>Հիմնական ղեկավար անձնակազմ</i>		
Չվճարված արձակուրդային	6,919	4,006